



Յովնան Արք. Տերտերեան

Փունջ մը Բարոզներ

Հատոր ԺԴ.

Spiritual Reflections

2019

ՅՈՎՆԱՆ ԱՐԶ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

*Փռնիզ վր
Բարոյնէտը*

Հարոյր ՅՊ.

Spiritual Reflections

2019

Ազնի մեկենասութեամբ՝
ՊԵՐՃ ՌԻՉԱՐԴ ՍՎԱԶԼԵԱՆԻ

Ի Յիշատակ իր սիրեցեալ մօր
ՌԵԲԵԿԱ ՍՎԱԶԼԵԱՆԻ

S

This publication was made possible
through the generous contribution of

BERJ RICHARD SVAZLIAN

In Loving Memory of his mother

REBECCA SVAZLIAN

*«Երանի անոնց, որոնք ամբասիր կեանք մը կ'ապրին,
որոնք կ'ապրին Տիրոջ Օրէնքին համաճայն»:*

(Սաղմոս 119:1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Նախաբան	7
Աստուծոյ խօսքին քարոզութիւնը	13
90-Ամեակը՝ գրաւական նոր տեսլիքներու	16
Օրհնեալ ըլլայ ձեր գալուստը, Վեհափառ Տէր	18
Սրտի խօսք Հայոց Հայրապետին	20
Խօսք երախտագիտութեան ծննդեան 60-ամեակի առթիւ	22
Տանք մեր տնտեսութեան հաշիւը	25
Տարեվերջեան մաղթանք	37
«Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, առ իս լոյս ծագեա»	39
«Արեգակն արդարութեան այսօր յայտնեցաւ ազգի մարդկան»	41
«Կատարեցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ»	46
Քրիստոնեայի կեանքին նախապայմանը	49
Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօն	51
Պատգամ հոգեւորականաց	54
Օրհնեալ ըլլայ յիշատակը Տ. Դաւիթ Քահանային	56
Տիրոջ ապաւինիլ	58

	Էջ
Անառակի Կիրակի	61
Դատաւորի Կիրակի	65
Աւագ Հինգշաբթի Խաւարման Գիշեր	67
Եւ Քրիստոսի գերեզմանէն ծնունդ առաւ նոր կեանքը...	70
«Ես եկի զի առաւել կեանս ունիցի»	71
Աւագ Ուրբաթ	73
Քրիստոս՝ Ճանապարհ եւ Ճշմարտութիւն	76
Ծաղկազարդէն – Զատիկ Հոգեւոր զարթօնքի օրեր	79
Հետեւեցէք Քրիստոսի օրինակին...	81
“Տէր, զի բացցին աչք մեր” Տէր, թող մեր աչքերը բացուին	83
Յարեա՛ւ Քրիստոս	85
Սուրբ Զատիկ	88
Նոր Կիրակի – Կրկնագատիկ	91
Աշխարհամատրան Կիրակի	93
Խոնարհինք մեր Նահատակ զինուորներուն յիշատակին առաջ	95
Հայաստանի կացութեան վերաբերեալ	96
Լոս Անջելոսեան հիմնահարցեր	97
Համբարձման տօնի նախօրէին	102

	Էջ
Հոգեգալուստ	104
Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի խօսքը Մոնթեֆէլոյի Հայ Նահատակաց Յուշարձանի առաջ	106
Սարդարապատ՝ ոգին է Հայութեան	112
Սարդարապատի 100-ամեակ	115
Պատգամ՝ Հայ վարժարաններու Շրջանաւարտներուն	117
Պայծառակերպութեան Տօն	119
Սրտագին Կոչ Թեմիս երիտասարդներուն	122
Սրտագին ողջոյններ Հայ եկեղեցասէր Երիտասարդներուն	124
Բացման խօսք ուղղուած Եւրոպայի ՀԵՀԵՄ-ի Համագումարին	125
ՀԵՀԵՄ-ի Ուխտագնացութեան Օրը	129
Հայ Երիտասարդին Ուխտը	134
Մի Վախնաք	136
Վերափոխումն Սր. Աստուածածնի	138
«Ես եմ, մի վախնաք»	141
Խոնարհիլ Աստուծոյ ներկայութեան	143
Կորսուածը փրկել	145

	Էջ
Յատուկ Հոգեհանգստեան պաշտօն	147
Խաչվերացի Տօնը	149
Հարստանալ Աստուծով	152
Կրօնի դերը՝ ինքնութեան մշակման ու պահպանման մէջ	154

ՆԱԽԱԲԱՆ

Ուրախությամբ ցանկանում ենք մեր ընթերցասեր հասարակության ուշադրությանը հանձնել Հայց. Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տեր Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի, թվով տասնչորսերորդ քարոզագիրքը, որն իր մեջ ընդգրկում է 2017-2018թթ.-ին գրի առնված քարոզների ընտրանին:

Սույն քարոզագիրքը առանձնանում է իր պարունակությամբ, քանզի այստեղ բացի հոգևոր բնույթի քարոզներից՝ զետեղված են վերջին շրջանում մեր Ազգին ու Հայրենիքին, Արեւմտյան Թեմին եւ անձնապես Սրբազան Հորը վերաբերող կարեւորագույն հանգրվանների վերլուծումներ:

Քարոզագրքի պարունակությունը պայմանականորեն կարելի է բաժանել 5 թեմաների.

Ա. 90- ամյակ Արեւմտյան թեմի հիմնադրման, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Հովվապետական այցելություն

Բ. Հայաստանյան նոր իրադարձություններ

Գ. 100- ամյակ Սարգարապատի ճակատամարտի

Դ. Երիտասարդաց պատկառելի ուխտագնացություն դեպի Հայաստան

Ե. Ծննդյան 60-ամյակ

Ա. 90-ամյակ Արեւմտյան թեմի հիմնադրման, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Հովվապետական այցելություն

Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան Թեմը պաշտոնապես հիմնադրված լինելով ինը տասնամյակ առաջ՝ իր առաջին օրվանից սկսած իրականացնում է երկու սրբազան առաքելություն՝ ա) բյուրավոր գավակներին դաստիարակել քրիստոնեական հոգևոր եւ բարոյական արժեքներով, բ) վառ պահել մեր Ազգային Ինքնության գիտակցությունը՝ եկեղեցապատկան դպրոցներով, մշակութային հաստատություններով եւ նվիրյալ մշակների անխոնջ աշխատանքով: Մեր օրերում Արեւմտյան թեմն իր աշխատանքային անհամեմատ լայն ծիրով շարունակում է նախնիների սրբազան առաքելությունը՝ մշտապես հայելով դեպի գալիքն ու ապագան. *“90-ամեակը՝ գրաւականն է նոր կեանքի ու նոր տեսիլքներու: 90-ամեակը մարտահրաւեր մըն է ոչ միայն մեզի աւանդուածը պահել - պահպանելու, այլեւ՝ ձգտելու կատարեալին եւ ընդարձակելու մեր առաքելութեան սահմանները բոլոր առումներով...”*:

Թեմի 90-ամյակի տոնախմբություններն առավել իմաստավորված էին Հայոց Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ Գաբրեղին Բ. Կաթողիկոսի, հովվապետական այցով, քանզի Հայոց Հայրապետի անձն արտացոլում է Սբ. Էջմիածինն ու Մայր Հայրենիքը: Առաջնորդ Սրբազան հայրն իր բարի գալստյան խոսքի մեջ այսպես է արտահայտվում. *“Վեհափառ տեր, Դուք, Ձեր հայրական պատգամներով հոգևոր արթնութեան կոչը պիտի յղէք անդադար, որպէսզի հայն ամենուրեք իր կեանքի նշանաբանը դարձնէ դէպի Սբ. Էջմիածին, դէպի Մայր Հայրենիք*

կանչը: Վեհափառ տէր, Ձեր գալուստը օրհնեալ ըլլայ, որպէսզի լուսաւորունէն հոգիները մեր հաւատացելոց Իջման Սբ. Մեղանի լոյսովը”:

Բ. Հայաստանյան նոր իրադարձություններ

Հայ Ազգն իր դարավոր պատմության ընթացքում ունեցել է բազում վճռորոշ փոփոխություններ, որոնք, հաճախ Հայոց սրբազան հոգը հեղեղել են մեր ազնվագույն արյամբ: Ուրախությամբ եւ գոհաբանական անկեղծ զգացումներով կարող ենք արձանագրել, որ սույն թվականի ապրիլյան իրադարձություններն տեղի ունեցան առանց արյունահեղության, որի գլխավոր պատճառը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ մեր Երկնավոր Հոր առատ ողորմությունը եւ բազահազար հավատացելոց անդադար «Տէր ողորմեա»-ի աղոթքները, որոնք ամենուր ունեցան իրենց առաջնորդները. *“Մենք լիովին համոզուած ենք որ Աստուծոյ կամբը պիտի առաջնորդէ մեզ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակունք միաբանուած մնան եւ սէրն ու խաղաղութիւնը տիրէ մեր Մայր Երկրի մէջ, որուն հոգը նուիրագործուած է սերունդներու կենաց պատարագումովը: Մայր Հայաստանէն հեռու այս ափերուն ապրող մեր ժողովուրդի զաւակունք չմնան ան տարբեր ստեղծուած ծանր իրավիճակին: Շարունակաբար աղօթենք, որ երկրի մէջ տիրողը ըլլայ փոխադարձ յարգանքը եւ խաղաղ երկխօսութեան քաղաքակիրթ վերաբերմունքը:*

Արդ, մեր հրաւերն է բոլորիդ, որ միանաք մեզ «Տէր ողորմեա»-ի աղօթքին”:

Գ. 100 - ամյակ Սարդարապատի ճակատամարտի

Սարդարապատի ճակատամարտը իրավամբ համարվում է նոր Հայաստանի գոյության կռիվներ եւ արդար են այն պնդումները, որ առանց Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերի, Հայոց պատմության անիվը պիտի կանգ առներ: Քչերը սակայն գիտեն, որ Սարդարապատի ոգու անկորնչելի փոթորկումը Սբ. Էջմիածինն էր՝ Հայոց Սրբություն Սրբոցը. *“Սարդարապատի կռուի դաշտ մեկնող քաջարի հայ զինուորները իրենց հոգու մեջ կրեցին անլռելի դողանջը Սբ. Էջմիածնի զանգերուն եւ կերտեցին ճանապարհը նոր Հայրենիքին, որուն երկինքին վրայ պարգուեցաւ եռագոյն դրօշը՝ խորհրդանիշը յարուցեալ մեր ժողովուրդին: Այս պատմական իրողութիւնը հիմքն է այն ճշմարտութեան, որ Սարդարապատի եւ Հայոց Առաջին Հանրապետութեան եւ եռագոյն դրօշի անփոխարինելի ծննդավայրը Սբ. Էջմիածինն է”:*

Դ. Երիտասարդաց պատկառելի ուխտագնացություն դեպի Հայաստան

Գերաշնորհ Տեր Հովնան Արք. Տերտերյանի համար երիտասարդությանն ի նպաստ անձնվեր ծառայությունը եղել եւ մնում է առանցքային: Խոսքերիս խոսուն վկան են Սրբազան հոր տարիների անդադրում աշխատանքը եւ ստանձնած բազում պատասխանատու հանձնառությունները: Համաձայն Սրբազան հոր, հայ երիտասարդները ոչ միայն մեր ապագան են, այլ՝ ներկան, որոնց պետք է հավուր պատշաճի լուսաբանել եկեղեցու իրական դերի եւ առաքելության մասին՝ մանավանդ մեր նոր ժամանակներում, երբ ակներեւ է անտեղյակությունը

Հայց. Եկեղեցու եւ նրա թողած պատկառելի ժառանգության մասին. *“Մեր խօսքը ի մասնաւորի կ’ուղղենք երիտասարդներուն: Մեր Մբ. Եկեղեցին այս օրերուն մանաւանդ պէտքը ունի ձեզ, որպէսզի դուք ձեր մէջ մշակելով Եկեղեցոյ սրբազան առաքելութեան տեսիլքը դառնաք անմիջական գործակիցներ հոգեւոր դասուն, որպէսզի ապահոված ըլլանք վաղուան առաջնորդները, գործնականացնենք մեր Մբ. Եկեղեցոյ առաքելութիւնը եւ զօրացնենք հիմքերը մեր Մբ. Եկեղեցոյ”*: Արդարեւ, *“Մեր մէջ է հաւատքին ոյժը. կեանքի կոչենք այն: Մեր մէջ է Աստուծոյ ներկայութիւնը, հաղորդ դարձնենք այն նորահաս սերունդին: Մեր էութիւնն է Մբ. Էջմիածինը եւ Հայրենիքը, այն դարձնենք սրբութիւնը մեր ազգին”*:

Ե. Ծննդյան 60 – ամյակ

Ծառայութիւնը մեծագոյն կոչումն է հայ հոգեւորականի իսկ հորեյանները այն վերաբժեւորելու լավագոյն առիթը, եւ երջանիկ է այն հոգեւորականը, ով իրավամբ սիրում եւ սիրվում է իր հօտի կողմից: Ահա թե ինչպէս է արտահայտվում Սրբազան Հայրն իր հորեյինական պատգամի մէջ. *“60-ամյակ իմ կոչման. կեանքի եւ ծառայութեան ճանապարհը ձեզանով է հարուստ եւ ինչքան մօտ է կանգնած հոգեւորականը իր ժողովուրդին այնքան հարուստ է ան որպէս հոգեւոր էակ”*:

Սույն քարոզգրքում ուշիմ ընթերցասերը կհանդիպի նաեւ Սրբազանի կյանքի նշանաբանի կարեւորագոյն վերլուծման. *“My faith in God leads my life”* (Աստուծոյ

հանդէպիմ հաւատքը կ'առաջնորդէ իմ կեանքը): Արդարեւ, այդպէս կը զգամ եւ այդ ալ պիտի յաւերժ մնայ նշանաբանը իմ կեանքին”:

Խոսքերս ցանկանում եմ ավարտել քրիստոնեական խաղաղ եւ օրինաբեր կյանքով ապրելու Սրբազան հոր հայրական կոչով, կյանք՝ որին մեզանից շատերը սրտանց տենչում են եւ որի գաղտնիքը խոնարհության մեջ է. *“Խոնարհ սրտով ապրող քրիստոնեան անտարակոյս խաղաղ է իր էութեամբ եւ ըստայնմ օրինաբեր է մեր կեանքը բոլորին համար”:*

Որդիական ակնածանք՝

Հայկ Մադոյան

Օգոստոս 10, 2018

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

«Քանզի ամենայն մարմին իբրեւ զխոտ է,
եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ,
խոտն ցամաքեցաւ եւ ծաղիկն թոթափեցաւ:
Եւ բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն է բանն
որ ի ձեզ աւետարանեցաւ»:

(Ս. Պետրոս 1: 21-25)

Պետրոս առաքելալի այս պատգամը մեզ կը յիշեցնէ քահանայի գլխաւոր առաքելութեան մասին, որն է Աստուծոյ խօսքին քարոզչութիւնը: Այս առաքելութիւնը քահանայի կեանքին մէջ կ'արտայայտուի բազում ձեւերով որպէս ճշմարիտ հովիւ: Ամենէն յատկանշականը առաքելալի պատգամով մեզի հաղորդուած այն է, որ մարդուն կեանքը՝ ժամանցելի է, ինչպէս նիւթական բոլոր առկայութիւնները: Իսկ յաւիտենական է Աստուծոյ խօսքը, որը սերունդէ սերունդ կը փոխանցուի:

Հոգեւորականաց այս Խորհրդաժողովին գլխաւոր նպատակն է մեր քայլերը առաջնորդել.

ա. Աղօթքի կեանքին ու հոգեւոր սերտողութեան.

բ. Մեր մէջ ամրացնելու համայնքի կեանքը ճարտարապետելու տեսիլքն ու գիտակցութիւնը:

գ. Պատեհութիւնը ստեղծել, որպէսզի հոգեւոր մեր կեանքն առաջնորդենք վերապատրաստութեան:

դ. Ծառայութեան մէջ ըլլալ խոնարհ ու կատարելալ.

ե. Զգուշանալու ներկայ ժամանակներու միջոցները նպաստաւոր եղանակով գործածելու.

գ. Նախանձախնդիր ըլլալ Հայ Եկեղեցւոյ աւանդութեանց, կարգաց ու կանոնաց.

է. Վառ պահել հայկականութեան ոգին, հետամուտ ըլլալ հայոց լեզուի պահպանութեան:

Արեւմտեան Թեմի 90-ամեակի տօնակատարութիւնը կ'ուզենք իմաստաւորել երեք գլխաւոր հիմնական քայլերով, ի յաւելումն առկայ բոլոր առաքելութեանց:

- Նոր հոգեւորականներու պատրաստութեամբ.
- Ընկերային ծառայութեանց զարգացումը.
- Թեմը ապահովելով տնտեսական նոր ձեռքբերումներով.

90-ամեակի տօնակատարութեանց շարքին ունինք նաեւ այլ ձեռնարկներ, որոնց շարքին առաջինն էր Stewardship-ի միջոցառումը, երկրորդը պիտի ըլլայ Faith Rally-ին, երրորդը պիտի ըլլայ Հայրապետական Կոնդակի ընթերցումը Կիրակի, 7 Մայիսին, եւ գլխաւորագոյնը պիտի ըլլայ Վեհափառ Հայրապետի այցը Արեւմտեան Թեմ Հոկտեմբեր 25-31ին:

Թեմական կեանքի մէջ Առաջնորդարանը կը նախաձեռնէ նոր կառոյցներու եւ անոնց յարակից շէնքերու կառուցումը (տարեցներու բնակարաններ), ամառնային ջամբարի մէջ մատրան եւ Retreat-ի շէնքի կառուցումը, նոր հրատարակութիւններ: Յունուար 2018 թուականէն սկսեալ գործնականացումը Թեմէն ներս տասը տարուան ծառայութիւն ունեցած եւ հանգստեան կոչուած եկեղեցականներու վարձատրութիւնը, Social Media-ի առաւել աշխուժացումը, եւ տակաւին բազում ծրագրերու նախաձեռնութիւնը, որոնց կարելի չէ մանրամասնօրէն անդրադառնալ:

Այս տօնը հրաշալի առիթ է, որպէսզի իրաքան-
չիրս ունենանք հոգեւոր կեանքը նորոգելու եւ ըստայնմ
շարունակելու մեր ծառայութիւնը առաւել աշխոյժ՝
Աստուծոյ փառքին համար:

21 Փետրուար, 2017

90-ԱՄԵԱԿԸ՝ ԳՐԱԻԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍԻԼՔՆԵՐՈՒ

Անցնող ամիսներու ընթացքին անընդհատ խօսեցանք Արեւմտեան Թեմի հաստատման 90-ամեակին եւ 90 տարիներու ընթացքին սերունդներու կողմէ իրականացուած առաքելութեանց մասին, որոնք կենսագործուեցան Թեմակալ Առաջնորդներու, հոգեւոր եւ աշխարհիկ սպասաւորներու նուիրեալ ծառայութեամբ: Երախտագէտ սրտով ու աղօթքով յիշեցինք բոլորը եւ հպարտութեան զգացումը ապրեցանք, որ յատկապէս հայոց ցեղասպանութենէն յետոյ մինչեւ այս ամիսները հասած որբերը եւ անոնց զաւակները նոր կեանք ստեղծեցին հաւատքի վճռակամութեամբ եւ ազգային գիտակցութեան բարձր ոգով: Փառք ու պատիւ բոլորին անխտիր, ովքեր իրենց հաւատքին վկայութիւնը տուին եւ Աստուածատուր իրենց կեանքը ապրեցան ստեղծագործ ոգով ու մեզի համար դարձան ներշնչումի աղբիւր:

Ինչպէ՞ս պիտի արժեւորենք 90-ամեակը մեր Թեմական կեանքէն ներս: 90-ամեակը՝ գրաւականն է նոր կեանքի ու նոր տեսիլքներու: 90-ամեակը մարտահրաւեր մըն է ոչ միայն մեզի աւանդուածը պահել-պահպանելու, այլեւ՝ ձգտելու կատարելալին եւ ընդարձակելու մեր առաքելութեան սահմանները բոլոր առումներով, յարատեւ կեանքի տեսանկիւնէն դիտուած, ազգային կեանքը նորանոր արարումներով հարստացնելու գիտակցութեամբ եւ ամենաեականը՝ համամարդկային արժէքներ ստեղծելու տեսիլքով, որպէսզի

ազգերու կեանքին մէջ մեր անունը արձանագրուի առաջնորդողի դերին ու պաշտօնին մէջ:

Քիչ ժամանակ անց մեր առջեւ կը բացուի Նոր Տարին, որը իր խորհուրդը կը ստանայ Աստուածորդու ծնունդով: Հրաշալի առիթ մը, որ նորոգենք ծառայութեան մեր ուխտը՝ Աստուծոյ կողմէ մեզի տրուած կեանքը ապրելու իմաստութեամբ, աղօթքի ու հաւատքի զօրութեամբ, որպէսզի Հայց. Առաքելական Եկեղեցին դարձնենք առաւել հաստատուն եւ մշտաբերուն՝ իրեն վստահուած առաքելութեանը մէջ: Հայց. Առաքելական մեր Մայր Սբ. Եկեղեցին Մայրն է բոլորին, որուն Սբ. Խորանէն կը քարոզենք Աստուծոյ խօսքն ու Քրիստոսի Աւետարանին պատգամները, կը փառաբանենք մեր նախնեաց հաւատքի կեանքի ընթացքը՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց»:

Մեր սրտագին կոչն է մեր Սբ. Եկեղեցւոյ եւ ազգի զաւակաց ապրիլ Աստուծոյ սիրով, մեր նախնեաց հաւատքի տեսիլքով, փարիլ Հայաստանին հոգով ու սրտով, տէր կանգնելու մեր ազգային սրբազան աւանդներուն եւ մնալ միշտ պատուաւոր քաղաքացին Ամերիկայի, ուր մեզի կը տրուին հնարաւոր բոլոր միջոցները ապրելու որպէս քրիստոնէայ հայեր:

90-ամեակը պիտի դարձնենք հրաշալի առիթը առաւել ծաղկեալ պահելու մեր Թեմը՝ իր եկեղեցիներով ու դպրոցներով եւ նուիրական հաստատութիւններով: Բոլորի հիմքը կը շարունակի ըլլալ հայ քրիստոնէայի ընտանիքը, որով եւ պայմանաւորուած է մեր գոյութենականութիւնը:

11 Նոյեմբեր, 2017

ՕՐՀՆԵԱԼ ԸԼԼԱՅ ՁԵՐ ԳԱԼՈՒՍՏԸ, ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Ինչքան լուսաւոր է այս երեկոյեան Սբ. Ղեւոնդեանց Մայր Տաճարը, երբ Սուրբ Խորանի մոմերուն լոյսը կը հասնի Սբ. Էջմիածնէն, որուն ջերմութիւնը դուր ձեր հոգիին ու սրտին մէջ պահած՝ հայրական ձեր պատգամը եւ օրհնութիւնը կը բերէք հաւատաւոր մեր ժողովուրդին Թեմի հաստաստման 90-րդ տարեդարձի առիթով, որպէսզի խրախուսէք բոլորս ապրելու մեր հայրերու լոյս հաւատքի գիտակցութեամբ:

Արեւմտեան Թեմը ինը տասնամեակներ շարունակ առաջնորդուած է Քրիստոսի Աւետարանի լոյսի ճառագայթումներով եւ այդ լոյսը մշտապէս առաւել զօրացած է Սբ. Էջմիածնի խորհուրդով:

Հայ մարդուն կեանքի նշանաբանն է. «Դէպի Սբ. Էջմիածին – դէպի Մայր Հայրենիք»: Այս է խորհուրդը, որով եւ պայմանաւորուած է մեր առօրեան: Դուք ձեր Հովուապետական այցով մեզի կը բերէք Սբ. Էջմիածնի խորանէն ձայնը պատմութեան, որուն մէջ է խտացած մեր հայրերու հաւատքի կեանքին խորհուրդը:

Վեհափառ Տէր, յանուն մեր Թեմի հոգեւոր դասուն, Թեմական Խորհուրդի, Լոս Անճելլոսի կազմակերպութեանց եւ պատուական մեր ժողովուրդին բարի գալուստ կը մաղթենք Ձերդ Սրբութեան այն քաջ համոզումով, որ գալիք օրերը բոլորիս համար պիտի ըլլան պատմական եւ նշանակալից օրեր եւ խթան՝ գալիք կեանքը ապրելու աւելի մօտիկ կանգնած մեր պապե-

նական երկրին՝ Մայր Հայաստանին եւ Աստուածահիմն Սբ. Էջմիածնին: Մեր ժողովուրդը ակնդէտ դէպի Սբ. Էջմիածին-Հայրենիք իր նուիրումն ու ծառայութիւնը կը շարունակէ միշտ ծաղկուն պահելով եկեղեցիներն ու դպրոցները տասնեակ-տասնեակ նուիրական կառոյցները, որոնք կը մնան կանգուն միայն այն ժամանակ, երբ հաւատքը ամուր է մեր մէջ: Դուք կուգաք առաւել ամրապնդելու մեր հաւատքը եւ ջերմացնելու մեր հոգիները Ձեր հայրական ներկայութեամբ: Այսօր եւ գալիք օրերը պիտի ըլլան ուրախութեան ու հոգեւոր ցնծութեան օրեր: Երախտապարտ ենք ձեզ Վեհափառ Տէր, եւ կը վստահեցնենք, որ ձեր յորդորներով ու պատգամներով պիտի նորովի ապրինք մեր հաւատքը:

Վեհափառ Տէր, յաջորդող օրերուն զանազան առիթներով դուք պիտի ըլլաք մեր ժողովուրդի հաւատաւոր զաւակաց սրտին ու հոգիին մէջ: Դուք ձեր հայրական պատգամներով հոգեւոր արթնութեան կոչը պիտի յղէք անդադար, որպէսզի հայն ամենուրեք իր կեանքի նշանաբանը դարձնէ դէպի Սբ. Էջմիածին, դէպի Մայր Հայրենիք կանչը:

Վեհափառ Տէր, ձեր գալուստը օրհնեալ ըլլայ: Լուսաւորեն հոգիները մեր հաւատացելոց Իջման Սբ. Սեդանի լոյսովը:

26 Հոկտեմբեր, 2017

«Հրաշափառ»-ի արարողութեան առիթով

ՄՐՏԻ ԽՕՍՔ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական
Վարժարանի սրահին մէջ

Վեհափառ Տէր,

Օրհնուած է այս օրը, որովհետեւ նուիրական այս յարկէն ներս մուտք կը գործէ Հայոց Հայրապետը: Վեհափառը մեր ազգի կեանքին մէջ Հայրն է բոլորիս եւ իր անձին մէջ կը կրէ խորհուրդը մեր պատմութեան, հաւատքին կրակը մեր նախնեաց եւ մեզի կը բերէ լոյսը Սբ. Էջմիածնի ու Մայր Հայաստանի:

Վեհափառ Տէր, Վաչէ եւ Թամար Մանուկեան անունը կրող նուիրական այս դպրոցը կը հաւաստիացնենք Ձեզի, Մեծն Լոս Անճելլոսի մէջ ծնունդ առած ամենէն փնտռուած կրթութեան օջախն է, ուր կը թրծուին մեր զաւակները հայութեան շունչով, պահելով հանդերձ այս երկրին օրինակելի քաղաքացիները դառնալու գիտակցութիւնը:

Վեհափառ Տէր,

Ձեր այցը այս դպրոցին մեծագոյն օրհնութիւն է: Դուք ձեր գնահատութիւնը կը բերէք Հ.Բ.Ը. Միութեան, Գաղութի մեծանուն բարերար ամուլին, եւ Վաչէ եւ Թամար Մանուկեան անունը կրող այս մեծ ընտանիքին: Այս օրը պիտի ամրագրուի բոլորի հոգիներուն եւ սրտերուն մէջ եւ օրը պիտի դառնայ ի մասնատրի մեր

ուսանողաց համար պայծառակերպության օրը, անմոռանալի բոլորիս համար, որպեսզի ձեր հայրական խօսքին ունկնդիր դառնան նուիրեալ զաւակները մեր Ազգին ու Եկեղեցիին:

Վեհափառ Տէր,

Առանձնայատուկ գնահատանքի խօսքով կ'ուզենք անդրադառնալ մեր բոլոր դպրոցներու Խնամակալ Մարմիններուն կատարած ծառայութեան եւ ի մասնաւորի այն կարեւոր ու առանցքային նշանակութիւն ունեցող առաքելութեան, որը կը վերաբերի ամէն տարեվերջին շրջանաւարտ աշակերտներու Հայաստան ուխտագնացութեան: Հարիւրներով շրջանաւարտներ Հայաստան կ'այցելեն եւ ճշմարտապէս կը վերադառնան աւելի հայացած աւելիով կապուած մեր Մայր հողին: Այս երեւոյթը բաւական է որ այսօր հայը ըլլայ միշտ հպարտ իր ինքնութեամբ, իր Հայրենիքով ու իր Եկեղեցիով եւ իր արմատներով:

Վեհափառ Տէր, կը հայցենք ձեր օրհնութիւնը, որպէսզի օրհնէք մեր դպրոցը եւ այս ընտանիքը իր ամբողջութեանը մէջ:

26 Հոկտեմբեր, 2017

ԽՕՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԾՆՆԴԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Սիրելին հոգևոր եղբայրներ՝ Գերշ. Տ. Վաչէ Սրբազան Արքեպս., Գերշ. Տ. Խաժակ Սրբազան Արքեպս., Գերշ. Տ. Յովնան Սրբազան Եպս., Գերշ. Տ. Արմաշ Սրբազան Եպս., Գերշ. Տ. Տաթև Սրբազան Եպս., Հոգեշնորհ եւ Արժանապատիւ հայրեր, յարգարժան անդամներ Թեմական Խորհուրդի, Ատենապետութեամբ մեծարգոյ տիար Ժողէֆ Կանիմեանի, յարգարժան պետական այրեր, 60-ամեակի Յանձնախումբի յարգոյ անդամներ, գլխաւորութեամբ Դոկտ. Վահրամ Պիրիճիքի եւ ազնուական ներկաներ:

Իրօք դժուար է միայն բառերով արտայայտել մեր երախտագէտ սրտի զգացումները: Դուք բոլորով եւ տակաւին շատ - շատեր բազում ձեւերով շնորհաւորական խօսքեր փոխանցեցիք ծննդեանս 60-ամեակի առիթով: Բնական է, այս տարեդարձը շատ տարբեր է մնացեալներէն, որովհետեւ առաջին հերթին վճռորոշ հանգրուան մըն է մեր կեանքին մէջ յետադարձ ակնարկ մը նետելու, իմաստաւորելու եւ տեսնելու եթէ ինչ որ չափով կրցանք արժեւորել Աստուծոյ կողմէ մեզի շնորհւած կեանքը: Պատասխանը անկեղծօրէն այն է, որ փորձեցինք եւ գիտենք որ դեռ աւելին կարելի էր իրագործել, բայց չէ՞ որ մարդկային տկարութիւններէ զերծ չենք, եւ շատ յաճախ ե՛ւ ժամանակի ե՛ւ միջոցներու ե՛ւ կեանքի արժէքը լիովին չըմբռնեցինք: Այս իրողութեան գիտակցութիւնը գէթ ունեցանք եւ այս տարեդարձը բառին լման առումով մարտահրաւեր մը պիտի ըլլայ

մեր կեանքին մնացեալ ժամանակը դարձնելու առաւել արդիւնաւէտ:

60-ամեակի այս խրախճանք հանդիսութիւնը հրաշալի պահն է, որ երախտագէտ սրտի մեր աղօթքը առաջին հերթին բարձրացնենք առ Աստուած: Մեր խորին երախտագիտութիւնը իմ սիրելի մօրս, որուն կեանքը եղաւ ամբողջական նուիրում իր զաւակաց համար եւ ընտանեկան պարագայից: Հոգին միշտ արթուն պիտի մնայ Հոգեւոյս Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսի, որուն էութիւնը իմ մէջ կերտեց նոր մարդը: Իմ հոգեւորական դառնալու ճանապարհին եւ մտատիպար հոգեւորականներ եւ հաւատացելոց բազմութիւն մը օրհնեցին իմ կեանքը իրենց աղօթքով ու մշտական զօրակցութեամբ, որպէսզի իմ մէջ եռանդով աճէր հոգեւորականը: Ինձ համար յստակ է, որ հաւատքին արմատը Աստուած Ինք է եւ անոր սնունդ տուող ժողովուրդը՝ իր աղօթքով:

Ինձ համար յատկանշական է այն խօսքը, որ այս երեկոյի ձեռնարկի գրքոյկին իբրեւ վերնագիր է տիտղոսագրուած իմ գրութիւններէն. “My faith in God leads my life”: Արդարեւ, այդպէս ալ կը զգամ եւ այդ ալ պիտի յաւերժ մնայ նշանաբանը իմ կեանքին:

Իմ կոչման, կեանքի եւ ծառայութեան ճանապարհը ձեզանով է հարուստ եւ ինչքան մօտ է կանգնած հոգեւորականը իր ժողովուրդին այնքան հարուստ է ան որպէս հոգեւոր էակ:

60 տարիները կեանքիս ճանապարհը եղաւ հաւատքով ապրուած տարիներ: Հետզհետէ իմ մէջ խմորուեցին իւրայատուկ մտածողութիւններ որպէս արտա-

յայտութիւնը իմ հաւատքին: Բայց ինչպէս միշտ եւ այսօր ալ պիտի կրկնեմ որ յատկապէս որպէս հոգեւորական ապրուած տարիներս եղան իմ ժողովուրդի հետ ապրուած ծառայութեան տարիներ: Ամէն քայլ, ամէն յաջողութիւն պայմանաւորուած էր ժողովուրդով:

Խրախճանքի երեկոյ է սա եւ երբեւէ չպիտի ուզէի երկարաշունչ խօսք արտասանել: Բաւական է ձեզի փոխանցել իմ անկեղծ զգացումները, որ սէրը ձեր բոլորին հանդէպ նպատակն է իմ կեանքիս: Աստուծոյ կամօք դեռ երկար ճանապարհ կայ կտրելիք եւ միասնաբար այնպէս պիտի ընենք, որ մեր Թեմը պահենք լուսաւոր իր քրիստոնէական հաւատքն ու ազգային գիտակցութիւնը ապրող ժողովուրդով:

1 Դեկտեմբեր, 2017

ՏԱՆՔ ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՇՒԻԸ

Ինչպես անցեալ տարիներուն, 2017 թուականը եւս Արեւմտեան Թեմի համար եղաւ բառին լման առումով գործունէութեան աշխոյժ եւ արդիւնաւոր տարի մը, որուն համար փառք կու տանք Աստուծոյ, որ օրհնեց մեր Սբ. Եկեղեցին, իր հոգեւոր սպասաւորները եւ ողջ հաւատացեալները եւ առաջնորդեց որ ընթանանք դէպի այն ճանապարհը, որն եղած է մեր նախնեաց հաւատամքը. Աստուած, Հայրենիք, Սբ. Էջմիածին, հայ քրիստոնէայ ընտանիք, եկեղեցի ու դպրոց, ժողովուրդ եւ երիտասարդութիւն, մշակոյթ եւ հոգեւոր առաքելութիւն եւ վերջապէս այն բոլոր սրբազան եւ նուիրական առաքելութիւնները, որոնք անհրաժեշտ են ունենալու համար հայկական նկարագիր:

Մեր տարեկան տեղեկագիրը պիտի ամփոփենք երեք հիմնական ենթավերնագրերու տակ.

- ա. Տարեկան զեկուցագիր
- բ. Մարտահրաւերներ
- գ. Մեր պատգամը

ա. Տարեկան տեղեկագիրը

Այս ենթավերնագրին տակ կ'ուզենք արձանագրել հետեւեալները, որոնցմէ ամէն մէկը կարելի է ընդարձակել եւ ներկայացնել էջերու մէջ ամփոփուած մանրամասնութիւններով: Բայց պիտի բաւարարուինք գրեթէ

վերնագրերու ներկայացումով, երբեմն – երբեմն յաւելումներով:

1. Թեմական շինարարական ծրագրեր: 2003 թուականէն ի վեր Թեմը անընդհատ կ'ընդարձակուի իր եկեղեցիներով եւ կառոյցներով: Ներկայիս ձեռնարկուած են հետեւեալները.

- Հովիվուդի նոր եկեղեցւոյ կառոյցը (ընթացքի մէջ):
- Սան Տիէկոյի եկեղեցական համալիրը (ծրագրի գործընթացի սկիզբը Կիրակի, 29 Ապրիլին)
- Գոսթա Մեսայի Ս. Մարիամ եկեղեցւոյ կից նոր համալիրի ծրագիրը. (նոր ընթացք):
- Լա Քրասէնթայի Սրբոց Առաքելոց Եկեղեցւոյ սրահի եւ յարակից շինարարական ծրագրերը (նոր ընթացք):
- Արիգոնայի Սբ. Աբգար եկեղեցւոյ կից տաբէցներու համալիրի երկորդ փուլը:
- «Վաչէ Յովսէփեան» անունը կրող ամառնային ջամբարի մէջ մատրան եւ յարակից նոր կառոյցներու ծրագիրը. (ընթացքի մէջ):
- Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Յովսէփեան ամենօրեայ Վարժարանի ընդարձակման ծրագիրը:
- Վէն Նայսի Սբ. Պետրոս եկեղեցւոյ համալիրէն ներս նախաձեռնումներ:
- Սիաթըլի Սբ. Յարութիւն եկեղեցւոյ կից նոր տաճարի ձեռքբերում շինարարական նոր ծրագրերու հետանկարով (նոր ընթացք):

- Լաս Վեկասի Մբ. Կիրակոս եկեղեցւոյ Թրքան-ջեան համալիրի ընդլայնման հեռանկարը՝ նոր սրահի մը կառուցումով (նախաձեռնութիւն):

- Մայր Տաճարի տարածքի մոմարարի մատուոյի մը կառուցումը (նախաձեռնութիւն):

- (Այստեղ ի նկատի առնուած չեն փոքր տարողութեան շինարարութիւնները):

Վերոյիշեալ ծրագրերը Աստուծոյ կամօք իրենց գործնական ընթացք կ'աւարտեն յաջորդ հինգ-եօթ տարիներու ընթացքին: Բոլորի իրականացումը կը նախատեսեն լուրջ պիտճէններ եւ նախանձախնդիր աշխատանք:

2. Եկեղեցիներու եւ համայնքներու հեռանկարը

Անցնող երկու տարիներուն քանիցս դիմեցինք մեր Թեմի եկեղեցապատկան եւ վարչական մարմիններուն աչալուրջ եւ մասնագիտացուած մակարդակով ծրագրաւորել յաջորդող տասը եւ աւելի տարիներու տեսլականը: Մեր խնդրանքը մնաց անպատասխան եւ անգամ մը եւս կը շեշտենք կարեւորութիւնը այս չափազանց կարեւոր ծրագրին: Ինչպէս ընտանիքի ծնողներ պէտք է ծրագրեն իրենց զաւակաց փայլուն ապագան, ահա այդպիսին պիտի ըլլայ պարագան նաեւ մեր Թեմի եկեղեցիներուն: Պայման է, սակայն, որ այս աշխատանքը կատարուի մասնագիտական մօտեցումով: Այլապէս, մեր Թեմի եկեղեցիները չեն կրնար համա-

պատասխան աճն արձանագրել եւ անդամներու թուական առումով եւ հոգեւոր առաքելութիւն ծաւալելու իմաստով:

3. Ծուխեր եւ հոգեւորականաց պատրաստութիւնը

Ծուխերու կազմութիւնն եւ հոգեւորականաց պատրաստութիւնը կը մնայ մեր գլխաւոր նպատակն ու առաքելութիւնը: Հաւակնութիւնը չունինք ըսելու, որ հասած ենք սպասուած արդիւնքին, բայց Թեմը իր եկեղեցիներով, ի գլուխ ունենալով նուիրեալ հոգեւորականները եւ Ծխական Մարմիններու զօրակցութիւնը կը ձգտի առաւելագոյն կազմակերպուածութեան: Անցնող տասնեւհինգ տարիներուն ունեցանք լուրջ սերնդափոխութիւն եւ շուտով պիտի առաւել կեդրոնացումով շարունակենք նոր Ծուխերու հաստատումն ու հոգեւորականաց պատրաստութիւնը:

4. Երիտասարդական նոր ծրագրեր

Այս ենթավերնագրի տակ կ'ուզենք ի մասնաւորի առանձնացնել Երիտասարդական նոր ծրագրեր, որոնք չափազանց կարեւոր կը համարենք, նոր սերունդը ներշնչելու հաւատքի կեանքով ապրելու գիտակցութեամբ եւ եկեղեցասիրութեամբ: Այստեղ հարկ է ներկայացնել.

- Reclaim-ը, (եռօրեայ Conference եւ աղօթահաւաք).
- Christian Youth Mission to Armenia.
- Ներուժ – Mentorship Mission
- Scholarship Fund.

- Graduation Communion.

Երկարօրէն կարելի է անդրադառնալ այս ծրագրերուն, բայց կը բաւարարուինք ներկայացնել ամփոփ ներդիրներ:

Բնական է, այս շարքին չպէտք է մոռնալ ներկայացնել ACYO-ն, ամառնային ճամբարը, Կիրակնօրեայ եւ Շաբաթնօրեայ Վարժարանները եւ անոնց առընթեր տարեկան ծրագրերը:

5. Հայաստանեան ծրագրեր

Այստեղ պիտի բաւարարուինք ներկայացնել ծրագրերու անուններ եւ զեկոյցին ներկայացնել միայն ներդիրները.

- Հառիճավանք եւ համալիր.
- Սանահինի վանական համալիր
- Եկեղեցաշինութիւն
- «Մեր Յոյս»
- Կարիքաւոր երեխաներու ֆոնդ
- Պետրոս եւ Սննա Օրանջաքչիէլ հանդիսութիւններու սրահ
- Քոյր եկեղեցիներ
- Արցախեան մարդասիրական ֆոնդ

Բացի վերոյիշեալ ծրագրերէն Թեմը կը ներգրաւուի բազում այլ ծրագրերու մէջ, ներառեալ «Հայաստան» համահայկական Հիմնադրամը: Այս բոլորի համար Առաջնորդարանը ամէն տարի միջին հաշուով իր տա-

րեկան պիտճէի գրեթէ կէսին չափ նիւթական յատկացում կը կատարէ, որուն համար երախտապարտ ենք բարերարաց եւ հաւատացելոց:

6. Հոգեւոր առաքելութիւն

Այս ենթավերնագրի տակ կ'ուզենք ամփոփ կերպով ներկայացնել հետեւեալները.

- Կրօնական հրատարակութիւններ (տես ներդիր ցանկը)
- Աստուածաշնչեան սերտողութիւններ
- Կրօնական դասախօսութիւններ
- Ուխտագնացութիւններ
- Խոկումներ

Տակաւին վերոյիշեալի շարքին կարելի է կցել նաեւ բազում այլ ձեռնարկներ, որոնք կը նպաստեն Աստուծոյ խօսքին տարածումին եւ հոգեւոր կեանքի զարգացմանը:

7. Թեմի 90-ամեակ եւ Հովուապետական այցելութիւն Վեհափառ Հայրապետի

2017 թուականի Հոկտեմբեր ամսուան աւարտին Արեւմտեան Թեմ Հովուապետական իր այցը շնորհեց Վեհափառ Հայրապետը Թեմի հաստատման 90-ամեակի առիթով: Հովուապետական այցի աւարտին Առաջնորդարանը հիւրընկալեց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի հերթական ժողովը: Վեհափառի այցը եղաւ բազում առումներով նշանակալից եւ պատմական մեր

հաւատաւոր ժողովուրդի կապն ամրապնդելով Մայր Աթոռի եւ Հայրենիքի հետ:

8. Էքիւմենիք կապեր, պետական եւ հասարակական կազմակերպութիւններ

Տարակոյս չկայ, որ Առաջնորդարանը գործօն մասնակցութիւն ունի վերոյիշեալ բնագաւառներէն ներս Էքիւմենիք շրջանակներու մէջ: Թեմը ներկայացուած է հետեւեալ մարմիններու մէջ.

- LACRL - (Los Angeles Council of Religious Leaders)
- SCCF - Southern California Christain Forum
- Arizona Ecumenical Council
- Sacramento Ecumenical Council
- Faith and Order
- Oriental Orthodox Churches Dialogue

Պետական յարաբերութիւնները Առաջնորդարանի մակարդակով կը գլխաւորէ Protocol Committee, իսկ հասարակական կազմակերպութեանց շարքին են. American Red Cross, YWCA, LA Children's Hospital եւ դեռ շատեր:

9. Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճար

2020 թուականին պիտի նշենք Մայր Տաճարի 10-ամեակը եւ այդ պիտի ըլլայ պատմական այն իմաստով, որ անցնող տասը տարիներու ընթացքին Մայր Տաճարը դարձաւ իրօք հաւատքի եռանդուն օջախը բազում առումներով: Այս պատեհ առիթով օգտուելով կ'ուզենք ունենալ Մայր Տաճար պարտքերու շիջման

արարողութիւնը: Մայր Տաճարը ունի եռուն գործունէութիւն եւ արարարողական կեանքի առումով եւ ծխական կեանքի տեսանկիւնէն դիտուած:

10. Անդամագրութիւն

Մեզ մտահոգող հիմնահարցը մնում է անդամագրութիւնը: Մեր ժողովուրդի մօտ դեռեւս ամրագրուած չէ տրատու անդամակցութեան գաղափարը, որը չափազանց կարեւոր է ի նկատի առնելով այն հանգամանքը, որ մենք պաշտօնապէս արձանագրուած ենք պետութեան մօտ եւ անհրաժեշտ է օրինականութեան համար ունենալ լուրջ թիւով արձանագրութիւնը եկեղեցւոյ անդամներուն, որոնք միաժամանակ յանձնառու պիտի ըլլան իրենց վրայ վերցնելու եկեղեցին ղեկավարելու վարչական պատասխանատւութիւնը: Այս նիւթը կը կարօտի լուրջ ուսումնասիրութեան:

11. Թեմի իր Առաջնորդարանով, ենթակառոյցներ, գրասենեակներ եւ յարակից մարմիններով եւ եկեղեցիներով

Արեւմտեան Թեմի Հայ Եկեղեցւոյ ընտանիքին մէջ կը ներկայանայ վարչական խոշոր կառոյցով մը եւ իր մէջ ունենալով աւելի քան երկու հազար կամաւորներու վարչական կազմ, որոնք Առաջնորդի, հոգեւորականաց դասուն, Պատգամաւորական Ժողովին, Առաջնորդարանի, Թեմական Խորհուրդի եւ Ծխական բոլոր Մարմիններու հետ միասնաբար կը ղեկավարեն Արեւմտեան Թեմը ամէն իմաստով:

12. Թեմական կալուածներ

Արեւմտեան Թեմի կալուածները վերջին տասնեւհինգ տարիներուն որոշակի կրկնապատկուեցան: Այստեղ կրնանք ըսել որ Թեմը կալուածական արժէքը շատ աւելին է քան կ'ակնկալուէր:

13. Հիմնադրամ

Արեւմտեան Թեմի Հիմնադրամը կարելոր նախաձեռնութիւն մըն է, որը վերջին յատկապէս տասը տարիներուն ունեցաւ հիմնական աճ: Այս աշխատանքը հարկ է ընդարձակել՝ ապահովելու համար Թեմի աշխատանաց ընթացքը առանց ընդհատումի:

14. Առաջնորդարանի Ձեռնարկներ

Տարւոյ 365 օրերու ընթացքին Առաջնորդարանը միջին հաշուով կը հովանաւորէ աւելի քամ մեծ եւ փոքր 100 միջոցառումներ, որոնք նուիրուած են հոգեւոր, մշակութային առաքելութեանց: Այս կարելի կը դառնայ Առաջնորդարանի հովանիին տակ գործող ենթակառոյցներով: Անոնք որոնք կը հետեւին շաբաթական լրատուութեանց անտարակոյս կը տեսնեն Առաջնորդարանէն ներս ստեղծուած եռուզեռին:

15. Համայնքային կազմակերպութիւններ

Ի մասնաւորի Մեծն Լոս անջելոսի մէջ կը գործեն հարիւրէ աւելի մեծ եւ փոքր կազմակերպութիւններ:

Առաջնորդարանը իր կարելին ի գործ կը դնէ շրջանի հոգեւորականներու հետ մասնակցելու յիշեալ կազմակերպութեանց միջոցառմանց: Առաւելաբար, սերտ համագործակցութիւն ապահովուած է քսանեւիինգ մօտ կազմակերպութեանց հետ:

16. Հայկական ամենօրեայ Դպրոցներ

Լոս Անճելոսը արտաշխարհի այն գաղութն է, ուր ամենէն աւելի մեծ թիւով հայ աշակերտներ ունինք ամենօրեայ վարժարաններէն ներս: Յատկանշական է, որ բացի սեփական դպրոցներէն պետական դպրոցներու մէջ եւս կը դասաւանդուի հայերէնը: Վերջինս խրախուսուած երեւոյթ է: Ամենօրեայ հայ դպրոցներու կողքին Առաջնորդարանը զարկ կու տայ Շաբաթօրեայ Վարժարաններու կազմակերպութեանը: Այստեղ կարելոր է նշել, որ տարեկան դրոյթով կը կազմակերպուին նաեւ ուսուցչաց վերապատրաստութեան դասընթացքները, ինչպիսին է պարագան նաեւ Կիրակնօրեայ վարժարաններուն:

17. Մարդասիրական ծրագրեր

Արեւմտեան Թեմը իր Առաջնորդարանով լծուած է նաեւ մարդասիրական առաքելութիւններուն, որոնք կապուած են տեղական ծառայութեան.

- Ծերանոցներ – գլխաւոր Արարատ Տուն եւ առանձին անձնական մարմիններ.

- LA Children's Hospital

- YWCA
- Relief Funds
- American Red Cross
- Ադրատ Ընտանիքներ
- Սիրիահայություն, եւ այլն:

18. Պաշտօնական

Այս ենթավերնագրի տակ կարելի է արձանագրել ցուցակը պաշտօնական հիւրերու, ըլլան անոնք հոգեւորականներ, պետական անձինք, մշակոյթին նուիրուած անձինք եւայլն, մասնաւոր կերպով պէտք է առանձնացնել Հայաստանէն ժամանած հիւրերու պարագան:

19. Հովուական այցեր եւ ճանապարհորդութիւններ

Բնական է հովուական այցերը կը կայանան Թեմէններս, եւ անոնց կողքին ի մասնաւորի պէտք է արձանագրել Հայաստան այցելութիւնները, մասնակցելու համար Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովին: Այստեղ կարելի է յիշել նաեւ ՀԵՀԵՄ-ի մեր ընդհանուր պատասխանատուութիւնն ու Հայց. Եկեղեցւոյ Կանոնադրութիւններու Յանձնախումբի Ատենապետութիւնը:

20. Մբ. Էջմիածին եւ Ամենայն Հայոց Հայրապետութիւն

Թեմական որեւէ կառոյցի համար Մայր Աթոռը անփոխարինելի Կեդրոնն է՝ ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը: Որով կապը Մայր

Աթոռի եւ Անոր Գահակալին հետ կը պահպանուի Կանոնադրութեամբ եւ այդ ակնյայտ է մեր Մայր Աթոռի մէջ կայացած թղթակցութեանց ընդմէջէն:

20 Ապրիլ, 2018

ՏԱՐԵՎԵՐՁԵԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Միքեղեալ հոգեւոր եղբայրներ ի Քրիստոս, քարոզիչք Աստուծոյ խօսքին,

Ահաւասիկ տարի մը եւս պատմութիւն կը դառնայ նաեւ մեր կեանքին մէջ: Եւ ինչպէս բոլոր կարեւոր առիթներուն, տարեվերջը հրաշալի առիթ մը կը հանդիսանայ առաջին հերթին հաշուեյարդարի մը ենթարկելու անցեալ տարին եւ ապա պատրաստուելու նոր կեանքի ճանապարհորդութեան, նոր խոստումներով եւ նոր սպասումներ կեանքի կոչելու տեսիլքով:

2017 թուականը մեր Թեմական կեանքի մէջ նշանաւորուեցաւ Թեմի հաստատման 90-ամեակի տօնակատարութիւններով: Ամէն անգամ, երբ ի մի հաւաքուեցանք, երախտագէտ սրտով յիշեցինք հիմնադիրները հոգեւոր ու աշխարհիկ սպասաւորները, որոնք իրօք դժուարին պայմաններու մէջ հաստատեցին Թեմը եւ այն վստահեցան իրենցմէ յետոյ գալիք սերունդներուն: Ինչքան կը մտածեմ անցեալի մասին, ապա հիացումով կ'ամրագրուի իմ էութեանը մէջ այն նուիրեալ ծառայութիւնը, զորս մեր նախնիք կեանքի կոչեցին:

90-ամեակը կը նշանաւորուի, երբ մենք նոր ուխտ կը կատարենք հաստատուն պահելու մեր մէջ մեր նախնեաց հաւատքի զգացողութիւնը, անոնց տեսիլքը՝ ապրելու Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ, Եկեղեցին դարձնելու կոռուանը մեր բովանդակ կեանքին: Բայց մեզմէ կը սպասուի աւելին այսօր, որովհետեւ աշխարհը փոխուած է եւ մենք պարտ ենք ուղղորդելու մեր Սուրբ

Եկեղեցւոյ զաւակները դէպի ճշմարիտն ու սուրբ ճանապարհը, որու ամբողջ ընթացքին պարտ ենք կատարել Աստուծոյ կամքը: Պարտ ենք ոչ միայն պահելու մեզի տրուած հոգեւոր ժառանգը՝ Հայց. Եկեղեցին, մեր Թեմը. այլեւ առաւել զօրացնելու ու ընդարձակելու անոր առաքելութեան սահմանները:

Մեր մաղթանքն ու աղօթքն է, որ 90-ամեակը խթանը հանդիսանայ մշտարթուն եռանդով կատարելու մեր առաքելութիւնը, մեզի վստահուած հօտին զաւակաց միտքն ու հոգին լուսաւորելու Աստուծոյ խօսքով, ազգային ոգով եւ գիտակցութեամբ, հայրենասիրութեամբ ու համամարդկային արժէքներու հանդէպ յարգանքի զգացողութեամբ:

Մեր առջեւ բացուող Նոր Տարին Վեհափառ Հայրապետի կողմէ հռչակուած է Երիտասարդութեան Տարի: Սա կը թելադրէ, որ մենք բոլորս ի գին ամէն զոհողութեան ի գործ պիտի դնենք «Կորուսեալ ոչխարին» առակի պատգամը, որն է տէրը ըլլալ թէկուզ եւ մէկ կորուսեալ ոչխարին, բերելու եւ այն միացնելու իր հօտին: Ահա այն ժամանակ կը յաջողինք մեր առաքելութեանը մէջ Աստուծոյ փառքին համար:

Սիրեցեալ հոգեւոր եղբայրներ, ձեզ ի բոլոր սրտէ կը մաղթենք ամենայն բարիք եւ աստուածային օրհնութիւն ձեր բոլոր հարազատներուն:

Թող Աստուած մշտապէս առաջնորդէ ձեր քայլերը դէպի Աստուծոյ լոյսն ու իմաստութեան ճանապարհը:

4 Դեկտեմբեր, 2017

Պրրպէնք

«ԱՌԱԽՕՏ ԼՈՒՍՈՅ, ԱՐԵՓԱԿՆ ԱՐԴԱՐ, ԱՌ ԻՍ ԼՈՅՍ ԾԱԳԵԱ»

(ՄԲ. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ)

Նոր Տարուոյ առաջին ժամն է եւ մեր շրթներուն վրայ նոր աղօթքի մրմունջը կը դառնայ Շնորհալի Հայրապետին այս սրտաբուխ աղօթքը: Նոր Տարուոյ առաջին ժամին Աստուծոյ թանկագին պարգեւին համար փառք կու տանք Աստուծոյ եւ Շնորհալի Հայրապետի բառերը որպէս նոր աղօթք կը վերընծայենք, քանզի Լոյսի Առաւօտը կը բացուի մեր կեանքի առջեւ եւ մենք գիտակից կը դառնանք այն գերագոյն ճշմարտութեան, որ Աստուծոյ հետ սկիզբ առած Նոր Տարին, Աստուծոյ հետ ապրուած կեանքը լուսաւոր է ու խաղաղ, իմաստաւորեալ ու առաքելականութեան ներշնչումը պարունակող ժամանակ:

Եթէ Աստուած Ինք ստեղծողն է տիեզերքի անսահմանելիութեան, ապա մարդը Աստուծոյ կողմէ նշանակուած ժամանակին վերահսկողն է: 2018 տարին լոյսի նոր առաւօտն է մեր կեանքին մէջ, որպէսզի վերսկսինք կեանքը նորոգուած հոգով ու սրտով զայն հրաշագործելու եւ աւելի գեղեցկացած վերադարձնելու առ Աստուած: Անհրաժեշտ է Նոր Տարին սկսել աղօթքով, քանզի աղօթանուէր կեանքը բարի է եւ հաւատքի կեանքին առաջնորդող: Աղօթքի զօրութիւնը բոլորիս կը պարգեւէ աստուածային սէր, զօրութիւն ու իմաստութիւն, որպէսզի ապրինք մեր նախնեաց հաւատքի կեանքին օրինակովը եւ այն դարձնենք հոգեւոր ժա-

ռանգութիւնը, գալիք սերունդներուն, ապրինք Աստուծոյ երկիւղովը, հայ ընտանիքին սրբութեան տեսիլքով եւ Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ տեսնելով մեր գոյութեան իմաստը:

2018 տարին կը վերաբրնացնէ բազում պարտաւորութիւններ, որպէսզի սիրենք զԱստուած, սիրենք Հայրենիքն ու Մբ. Էջմիածինը, նուիրուինք մեր քրիստոնէական կոչմանը եւ բազում հոգեւոր ու բարոյական արժէքներու, որոնցով պայմանաւորուած է մեր գոյութենականութիւնը:

Մարդը, որպէս Աստուծոյ կողմէ ստեղծուած արարած, իր մէջ ունենալով Աստուծոյ պատկերը իր էութեանը պիտի շնորհէ նկարագիր, այլապէս անգոյն ենք եւ կ'ապրինք իմաստագուրկ կեանք: Հոգին պէտք ունի իր սնունդին, որուն աղբիւրը աստուածային լոյսն է: Բանանք մեր հոգին, որպէսզի այնտեղ ներթափանցէ Աստուծոյ լոյսը: Մշակենք մեր էութիւնը եւ մեր նախնեաց լոյս հաւատքին վկայութիւնը տալու բարի միտումն ունենանք: Այն ժամանակ աւելի օրհնեալ է մեր կեանքը եւ լուսատու մեր սիրելեաց ու բարեկամաց համար:

Ուրեմն, աղօթքով բացէք ձեր Նոր Տարին ու թող շրթներու վրայ նոր աղօթք դառնայ Շնորհալի Հայրապետի աղօթքը, «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեալ» եւ Աստուած կ'առաջնորդէ բոլորս դէպի ճշմարիտն ու արդարը:

1 Յունուար, 2018

«ԱՐԵԳԱԿՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՅՍՕՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ ԱԶԳԻ ՄԱՐԴԿԱՆ»

(ՄԲ. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ)

Երկնային կանթեղի մը պէս կը ցոլար Բեթղեհէմի աստղը՝ թանձր ու կապոյտ ծածկոցին տակ անթեղելով հրաշալի սպասումի ու յուսոյ կայծը: Յուրտ ու խաւար երկինքը մերթ ընդ մերթ կը կլանէր աստղը՝ անոր փայլը նսեմացնելու նենգամիտ միտումով, բայց անգոր գտնուելով շիջանիլ, տեղի կու տար երկնային լոյսին: Երկինք ու երկիր երկունքի մէջ էին, որովհետեւ աստղէն արեւ պիտի ծնէր եւ Կոյսէն՝ Աստուածորդի: Առաւօտուն, երբ խաւարը ցրուեցաւ եւ աստղերը մարեցին, երկնային քողի ետեւէն ճառագայթեց պայծառ արեգակը՝ Յիսուս Փրկիչը ծնաւ:

Յիրաւի, Աստուածորդու՝ մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուս Քրիստոսի Ծնունդը աշխարհի մարդկութեան կեանքին մէջ ճառագայթող արդարութեան արեգակն է: Ինչպէս Շնորհալի Հայրապետը կ'ըսէ. «Արեգակն արդարութեան այսօր յայտնեցաւ ազգի մարդկան»: Եւ ի՞նչ է արդարութեան արեգակը, եթէ ոչ քրիստոնեայի կեանքին ուղեցոյցը, բարոյական եւ հոգեւոր արժէքներու փորձաքարը, ճշդի ու ճշմարտացիի չափորոշիչը, մեր խղճի ու խղճմտանքի գորովայորդ աղբիւրը:

Վաղնջական ժամանակներէն, Քրիստոսէն իսկ առաջ, մարդ արարածը միշտ ապաւինած է երկնային լուսատուին ոչ միայն անոր համար, որ արեւը կեանքի աղբիւրն է, այլ՝ որովհետեւ անոր միջոցաւ որոշած է ժամանակն ու եղանակը, տարածութեան մակերեսներին

վրայ՝ բեւեռային դիրքն ու ուղղութիւնը: Բնաւ ալ պատահական չէ, որ արարիչը չճանչցողներ պաշտած եւ աստուածացուցած են արեւի երկնային զօրութիւնը:

Երբ խորամուխ կ'ըլլանք Սուրբ Ծննդեան խորհուրդին, մանաւանդ՝ մարդկութեան փրկութեան աստուածային եւ անսուտ խոստումին, մեր գիտակցութեան մէջ առաւել կը յստականայ Արդարութեան Արեգակի գաղափարը եւ անոր միջոցաւ՝ աշխարհի խաղաղութեան հաստատումը:

Աշխարհը տագնապալի օրերէ կ'անցնի: Աշխարհա-քաղաքական, տնտեսական, կրօնական եւ հասարակական խմորումներ անկայուն վիճակներ ստեղծած են ամենուրեք. փխրուն է խաղաղութիւնը, օդը վառօդ կը հոտի: Ամենէն սոսկալին, սակայն, խռովեալ հոգու եւ անհանգիստ մտքի մորմոքն է, որ մարդ արարածն անսահման անորոշութեան մէջ կորուսեալ եւ թափառական կը դարձնէ՝ անջուր եւ անհանգրուան (Մաղմուս 106:4): Մոլորուած է մարդկութիւնը, որովհետեւ խաթարուած են արժեհամակարգերը, խառնուած են մեղքն ու շնորհքը, սուտն ու շիտակը, սեւն ու ճերմակը, պղտորն ու վճիտը: Պետութիւններ պատերազմներ կը հրահրեն, ամբոխներ կը զինեն, սուրեր ճոճելով իրարու կը սպառնան, բայց յաջորդ պահուն չքմեղելով՝ բարձր ամպիռներէն խաղաղութիւն կը ջատագովեն: «Ժողովրդավարութիւն», «ազատականութիւն», «յառաջդիմութիւն», «բռնապետութիւն», «անազատութիւն», «յետադիմութիւն» եւ ամպագոռգոռ այլ բառեր, իրենց խեղաթիւրուած ըմբռնումներով, խառնիխուռն ենթիմաստներով, կամայական մեկնաբանութիւններով

պարուրած են մեզի՝ սարդոստայնի մէջ խճճելու: Ակամայ, մեր մտքի պատանդը դարձած ենք եւ վախնալով զգայուն այս բառերը «սխալ» արտաբերել՝ կը խուսափինք գնահատականներէ, որակումներէ եւ հաստատումներէ: Անարեւ, անլոյս, անսկզբունք, անիրական եւ անյստակ օրեր կ'ապրինք ցաւօք, որովհետեւ կորսնցուցած ենք քրիստոնէական մեր կողմնորոշումը եւ չենք ապաւինիր երկնային լուսատուին:

Սուրբ Ծնունդ է այսօր, տաքեմուտ: Արդարութեան արեգակը կը փայլի երկնականմարին վրայ: Մանուկ Յիսուսը ծնաւ: Հայր Աստուած հաճեցաւ մարդկութեանն ընծայել եւս մէկ առիթ՝ ապաշխարութեան, նորոգութեան եւ վերագտնումի: Յիսուսի ծնունդն այսօր, յունուարեան այս պաղ օրերուն մեզ առիթ կու տայ նորէն արելելու, որպէսզի իրմով լուսաւորուինք, ջերմանանք ու ջերմացնենք, իրմով առաջնորդուինք, իրմով չափենք աշխարհի չարն ու բարին, լաւն ու թերին: Արդարութեան աստուածային արեգակը մեր մէջ ծագելով՝ կը պայծառակերպէ մեր կեանքը, կը փոխէ մեր աշխարհահայեացքը, կը պարզէ մեր միտքը, կը յստակեցնէ մեր շուար հայեացքները: Նորածին Յիսուս իր սուրբ ծնունդով կ'ազատագրէ մեզ վախի կապանքներէն, որպէսզի ազատօրէն արտայայտենք մեր գաղափարները յանուն արդարութեան եւ ճշմարտութեան՝ առանց տուրք տալու երեսպաշտութեան, շինծու եւ ժամանակավրէպ արժէքներու: Աստուած արդարութեան արեգակը կը ծագեցնէ, որպէսզի մեր կեանքին ընթացքը ճիշդ ուղիի վրայ դնենք, որպէսզի յետայսու չխրախուսենք մեղքը, չփառաբանենք տկարութիւնը եւ

առաջնորդուինք «մէկ չափ, մէկ կշիռ» բարոյական սկզբունքով:

Նոր Տարուոյ սեմին, երբ Քրիստոսի Ծնունդը կը տօնախմբենք, այս մտածումները առիթ կու տան մեզի հաշուեյարդարի մը ենթարկելու մեր կեանքն ու մեր հոգեւոր ճանապարհորդութեան ողջ ընթացքը: Երբ կ'անդրադառնանք մեր անցեալի խաւարային ընթացքին ու անկեղծ զոջում մը կ'ունենանք, կը լուսաւորուի մեր կեանքը Սուրբ Ծննդեան արշալոյսով: Կը խոստանանք մեր նոր կեանքը դնել Աստուծոյ ձեռքերուն մէջ, որպէսզի Ինք խմորէ մեր հոգեւոր կեանքը եւ մեր մէջ առատացնէ հաւատքը, յոյսն ու սէրը եւ փափաքը բոլոր տեսակի առաքիւնութեանց հանդէպ: Այս իմաստով, Յիսուսի ծնունդը կենարար պատգամ է ուղղուած բոլորիս, որպէսզի սիրենք իրար, սիրենք մեր Եկեղեցին, ազգն ու Հայրենիքը: Յիսուսի Ծնունդը կոչ կ'ուղղէ մեզի ըլլալու կատարեալ, օրինակելի, արդարամիտ, սկզբունքային, խաղաղասէր, խոնարհ, մարդասէր, ճշմարտախօս, քաջ, ստեղծարար, տեսիլքով ու հաւատքով առաջնորդուող սպասաւոր:

Եւ տակաւին, մեր բարոյական եւ հոգեւոր պարտականութիւնն այսքանով չի սահմանափակուիր: Որպէս ճշմարիտ քրիստոնեայ, պարտինք աղօթել նաեւ անոնց համար, որոնք չեն ճանչնար Աշխարհի Փրկիչը: Կ'աղօթենք աշխարհի խաղաղութեան համար, պատերազմներու, բնական արհաւիրքներու պատճառաւ մեզմէ անժամանակ հեռացածներուն համար, որոնք գոցեցին իրենց աչքերը Սուրբ Ծննդեան արշալոյսը չվայելած: Կ'աղօթենք եւ կը յուսանք, որ 2017 թուականը բարեբեր տարի մը ըլլայ բոլորիս համար:

«Արեգակն արդարութեան այսօր յայտնեցաւ ազգի
մարդկան»:

Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ.
Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի

Մբ. Մնունդ - 2017

Պըրպէնք

«ԿԱՏԱՐԵՍՑՈՒՔ ԶՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ»

(Բ. Կորնթ. 7:1)

Քրիստոսի Մբ. Ծնունդը աշխարհի կեանքին մէջ մարդուն կեանքը դէպի սրբութիւն առաջնորդող աստուածայինի ներկայութիւնն է: Մարդուն կեանքը յարատեւօրէն պէտք ունի հոգեւոր նորոգութեանց, որպէսզի հաւատքը մշտապէս գործէ մեր էութեանը մէջ եւ մեր խօսքն ու գործը ըլլայ արտացոլումը Աստուծոյ խօսքին:

Ամէն անգամ երբ կը տօնախմբենք մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուսի հրաշալի Ծնունդը եւ կ'արտասանենք այս բառերը, ապա ներքին ապրում մը կ'ունենանք հոգեւորորոգութեան: Արդարեւ, նոր կեանք կ'ապրինք նոյն բառերուն արտասանութեամբ, որովհետեւ իմ հոգեւոր էութեանը մէջ կը զօրանայ ծնունդը Քրիստոսի, Աստուածորդու, որ երկինքէն երկիր խոնարհումով մեր առջեւ կը բանայ ճանապարհը Սրբութեան, ճանապարհը կեանքով ապրելու Աստուծոյ իմաստութեամբ:

«Կատարեցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ»

Քրիստոսի հրաշալի Ծնունդը՝ աստուածայինին ներկայութիւնն է մեր հոգեւոր էութեանը մէջ: Ով հաւատքով կ'ընկալէ այս ճշմարտութիւնը իր կեանքը կ'առաջնորդէ դէպի սրբութիւն եւ աւելին՝ կը դառնայ սրբութեան ճարտարապետ անձ մը Աստուծոյ երկիւղովը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ իմաստութիւնը:

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր այսօր աւելի քան բոլոր ժամանակները պէտք է տեսնել Աստուծոյ ներկայութիւնը եւ կատարել Աստուծոյ կամքը, որպէսզի մերժենք այն բոլոր օտար խորհուրդները, որոնք հաշտ չեն Քրիստոսի Աւետարաններէն ճառագայթող պատգամներուն հետ:

Աստուծոյ ներկայութիւնը իրենց կեանքին մէջ զգացին մեր նախնիները եւ իրենց կեանքը ապրեցան Աստուծոյ կամքին համաձայն: Անոնք Քրիստոսի Սբ. Ծննդեան խորհուրդին մէջ ըմբռնեցին այն գերագոյն ճշմարտութիւնը, որ Աստուածորդու Սբ. Ծնունդը իր մէջ կը կրէր մարդուն կեանքը հրաշագործելու աստուածային զօրութիւնը: Քրիստոսի կեանքը Իր ծնունդով մեր առջեւ բացուած կեանքի ճանապարհն է, որպէսզի նոյն կեանքը ապրինք սրբութեամբ: Եւ ի՞նչ է Սրբութիւնը. Սրբութիւնը իր հիմքն ունի Քրիստոսի կեանքը, Անոր Աւետարանները, մեր հայրերուն կողմէ մեզի աւանդուած հոգեւոր եւ օրինականները: Սրբութիւնը, հաւատքով ապրուած կեանքն է: Սրբութիւն է, երբ հայ ընտանիքը կը դառնայ պատկերը Աստուծոյ սիրոյն եւ իմաստութեան: Սրբութիւն է, երբ մարդը իր հաւատքը կը կենսագործէ Աստուածաշունչ Մատեանէն պատգամուած խօսքերով, Տասնաբանեան եւ թէ բոլոր առակներով եւ Քրիստոսաբոյր դասերով:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»

Միբելի բարեպաշտ հայորդի, Մբ. Ծնունդը ոսկե կամուրջն է, մեզ միացնող Աստուծոյ հետ: Փառք վերառաքենք առ Աստուած, որ Իր Միածին Որդին աշխարհ ուղարկեց, որպէսզի ուղեկորոյս մարդը այլեւս դուրս գար խաւարի ճանապարհներէն եւ քայլեր Աստուծոյ հետ եւ զօրակից դառնար այն իրականութեան, որ ինք ստեղծուած էր Աստուծոյ պատկերին համաձայն:

Քրիստոսի Մբ. Ծնունդը՝ Սրբութեան ճանապարհն է: Ով իր կեանքով կը տօնախմբէ Քրիստոսի Մբ. Ծնունդը, այդպիսին Սրբութեան տեսիլքը կ'ունենայ եւ իր կեանքը կ'ապրի ստեղծագործ ոգով:

Մբ. Ծննդեան Տօնին մեր աղօթքն առ Աստուած կը յղենք, որպէսզի լուսաւորէ մարդկանց հոգին ու միտքը, որպէսզի բոլորով դառնանք խաղաղութեան գործիքներ: Մեր աղօթքն առ բարին Աստուած, որպէսզի խաղաղ ու անսասան պահէ մեր երկիրը, բարգաւաճում շնորհէ մեր Մբ. Եկեղեցուն ու անոր հաւատաւոր զաւակաց, որպէսզի

«Կատարեսցուք զսրբութիւն ահին Աստուծոյ»

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Օրինեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»

Դեկտեմբեր, 2017

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԿԵԱՆՔԻՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ

Սբ. Ծննդեան Տօնին մեր արտասանած քարոզի բնաբանն էր Պօղոս առաքելի այս խօսքը զորս ներկայացուցինք մեր Սուրբ Եկեղեցոյ հաւատացելոց, որպէսզի զայն դարձնէին նպատակը եւ ոգին իրենց կեանքին:

Սրբութիւնը քրիստոնեայի կեանքին մէջ նախապայման է, որուն հիմքը Աստուծոյ երկիւղն է, Աստուծոյ իմաստութիւնը: Երբ մեր կեանքին մէջ չգոյ է Աստուծոյ երկիւղն ու սէրը, ապա բոլորիկ ենք հոգեւոր կեանքի տեսանկիւնէն դիտուած, պարպուած հաւատքի այն գիտակցութենէն, որ մեր կեանքը կ'առաջնորդէ դէպի բարի գործերու կատարումը: Այն պահուն, երբ մարդուս մէջ կը խեղդոյի հաւատքի գիտակցութիւնն ու զգացողութիւնը Աստուծոյ հանդէպ, այդ պահուն եւեթ խաւարի մէջ է մեր հոգին, միտքն ու սիրտը եւ այլեւս անկարող երկխօսութեան մէջ ըլլալու Աստուծոյ հետ, աղօթելու առ Աստուած՝ մաքրելու եւ սրբելու մեր կեանքը:

Պարտ ենք երիտասարդներու հոգիները մշակել Աստուծոյ սիրով, որպէսզի անոնք քայլեն Աստուծոյ ճանապարհէն:

Սիրելի ծնողներ, մեր խնդրանքն է ու պատգամը, որպէսզի հոգեւոր սնունդէ չզրկէք ձեր մանուկներն ու պատանիները եւ երիտասարդները: Անոնց փոքր տարիքէն վարժեցուցէք աղօթք արտասանելու, Կիրակնօրեայ վարժարան առաջնորդելու, բարեգործութիւն

կատարելու եւ ապրելու Քրիստոսի կեանքի օրինակովը: Չէ՞ որ ծնողները Աստուծոյ ներկայացուցիչներն են իրենց զաւակաց կեանքին մէջ: Չէ՞ որ իւրաքանչիւր տուն փոքրիկ եկեղեցի մըն է: Մեր խոր համոզումն այն է, որ մեր մանուկներու հոգեւոր դաստիարակութեան սուրբ առաքելութիւնը միասնաբար պիտի իրագործենք: Հոգեւորականն ու ծնողները ձեռք-ձեռքի տալով պիտի աշխատինք եւ այն ժամանակ անտարակոյս կ'ապահովենք նոր սերունդի հոգեւոր կեանքին լուսաւորութիւնը:

Խոր ցաւ ու մտահոգութիւն է մեզի համար երբ ականատես կը դառնանք այն իրավիճակին, երբ մեր երեխաները կը դժուարանան նոյնիսկ խաչակնքել: Մենք պարտ ենք մեր մանուկներու ու պատանիներու հոգին ու միտքը սրբել աղօթասացութեամբ:

Աղօթքին առաջնորդութեամբ է միայն, որ կ'ըմբռնենք կարեւորութիւնը սրբութեամբ ապրուած կեանքին:

12 Յունուար, 2018,

Սան Տիէկո

ՍՐԲՈՑ ՂԵԻՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆ

*«Փորձուած ձեր հաւատքը շատ աւելի թանկագին է,
քան կորստական ոսկին՝ որ կրակին մէջ
կը փորձուի...»:*

(Ա. Պետրոս 1:7)

Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից Տօնը բոլորիս համար նուիրական է, որովհետեւ այսօր հաւաքական աղօթքով ու սերտողութիւններով փափաքն ունինք նորոգելու մեր քահանայական կոչումը՝ փառք վերառաքելով առ Աստուած մեզի վստահուած այս բացառիկ շնորհին համար:

Քահանայութիւնը բոլորիս համար հաւատքի ճանապարհորդութիւն է, որուն ամբողջ ընթացքը կ'արժեւորուի համակ ծառայութեամբ, նուիրումով ու պատարագումովը այնպէս ինչպէս իրենց հաւատքը կենսաւորեցին Ղեւոնդեանք, երբ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» հաւատքը ապրեցան լիարժէք կերպով եւ այն նոյն խորհուրդին առաջնորդեցին Վարդանանց քաջամարտիկ հերոսները:

Ո՛վ է Քահանան: Այս հարցումը բոլորս ալ մենք մեզի կուտանք եւ անտարակոյս նոյն հարցումը կը մղէ մեզ զգաստանալու թէ ինչքանո՞վ ենք հաւատարիմ մեր կոչմանը, մեր ծառայութեան կերպին մէջ: Բոլորս անխտիր ամէն ժամ պէտք ունինք զօրանալու, որպէսզի Սր. Հոգւոյ շնորհներով հարստացած՝ առաջնորդենք Քրիստոսի հօտին հաւատացեալները:

Եկեղեցւոյ կեանքին մէջ Քահանան հոգեւոր մագնիսն է, որ իրեն կը հրաւիրէ հաւատացեալները, որպէսզի դառնանք մէկ ի Քրիստոս եւ մեր հաւատքի կեանքով փառաւորենք զԱստուած:

Ինչքան դիպուկ է Սր. Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետի խօսքը, երբ կ'ըսէ. «Մեզ պէտք են ոսկի քահանաներ եւ ոչ թէ ոսկի սկիւհներ»: Մեր ծառայական կեանքը դպրոց մըն է ինքնին: Ամէն օր կը հանդիպինք այնպիսի վիճակներու ու փորձութեանց, որոնց լուծումը կու տանք միայն ապրուած հաւատքով: Երբ իրազէկ կը դառնանք մէկզմիւսի ապրուած քահանայութեան, ապա անտարակոյս կ'ամրանայ մեր մէջ սիրոյ ու եղբայրութեան ոգին, որովհետեւ կը գիտակցինք, որ փոխանակուած փորձառութիւններով զօրացած ենք եւ ձեռքբերած եկեղեցւոյ առաքելութեան յաջողութիւնը:

Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, ուր հասարակութեան փրկութիւնը պայմանաւորուած է միայն ու միայն եկեղեցիով ու անոր ղեկը ձեռք առած քահանաներով: Մեր աղօթահաւաքներն ու սերտողութիւնները լոկ ժողովներ չեն, բայց աւելին՝ այն նուիրական պահը, երբ կը նորոգուի մեր մէջ կոչումը քահանայութեան: Քահանան, Քրիստոսի Անձը խորհրդանշող ներկայութիւնն է, որուն պարտականութիւնն է ըլլալ վարդապետ, ծնող, բժշկող, քարոզող եւ տակաւին անվերջ պարտականութիւններ իր ուսերուն վերցուցած անձը: Այդ է նաեւ պատճառը, որ մարդիկ մեզ կը նային մեծ սպասումներով: Աստուծոյ երկիւղով ենք ընդունած այս պաշտօնը եւ եթէ ժամանակ առ ժամանակ ակամայ մեր մէջ կը տկարանայ քահանայական կոչումը, ապա աղօթ-

քի մէջ համախմբուելով կ'ապրինք Աստուծոյ ներկայութիւնը, բայց մանաւանդ ներգործութիւնը Ամենակարողն Աստուծոյ, որուն օրհնութեամբ կը նորոգենք մեր կոչումը քահանայութեան:

Արբոց Ղեւոնդեանց Քահանայից Տօնին առիթով սրտագինս շնորհաւորենք միմեանց եւ ուխտ կատարենք քրիստոնէական սիրով ամրացնել մեր մէջ եղբայրական ոգին: Որովհետեւ երբ ամուր է հոգեւորականութիւնը, ապա ժայռի վրայ է կառուցուած Թեմը՝ իր հաւատացելոց կեանքով: Մեր առջեւ դրուած են անթիւ ու անսահման պարտականութիւններ եւ Աստուծոյ կամքով, հաւատքով ու նուիրումի բարձր գիտակցութեամբ պիտի մշակենք հոգիները մեր հաւատացելոց:

Այսօրուան առաքելական թուղթէն քաղուած, այս խօսքը կը բաժնենք ձեզի հետ, որպէս հոգեւոր հացը մեր աղօթահաւաքին՝ «Փորձուած ձեր հաւատքը շատ աւելի թանկագին է, քան կորստական ոսկին՝ որ կրակին մէջ կը փորձուի...»: Իսկ օրուան Աւետարանէն քաղուած այս խօսքը. «Մի վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն...» մեզի մտածել կու տայ այն մասին, որ կոչումն ունինք մարդկային հոգիները Աստուծոյ սիրովը մշակելու:

Արդ, սիրելի եղբայրներ ի Քրիստոս, միմեանց սիրենք, յարգենք, գուրգուրանք եւ փոխադարձ զօրակցութեամբ կառուցենք մեր Սուրբ եկեղեցին, այն դարձնելու համար քրիստոնէական դաստիարակութեան կոռուանը մեր մանուկներու, պատանիներու, երիտասարդներու եւ բոլորին հաւատքի տունը:

6 Փետրուար, 2018

ՊԱՏԳԱՄ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԱՑ

«Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտս իւր, Եթէ որ կամի զկնի իմ գալ ուրասցի զանձն եւ առցէ զխաչ իւր, եւ եկեսցէ զկնի իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա: Զի՞նչ օգտիցի մարդ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուժեսցի. կամ չի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ: Զի զալոց է Որդի Մարդոյ փառօք Հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք, եւ յայնժամ հատուցէ իւրաքնչիւր ըստ գործս իւր»:

(Մատթ. 16: 24-27)

Խաչին խորհուրդը՝ նշանաբանն է մեր կեանքին եւ նոյն խաչին խորհուրդը կը պարտաւորեցնէ մեզ հետեւիլ Քրիստոսի, որպէսզի պատարագեալ կեանքով արժեւորենք Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգելը կեանքին:

Մեր բովանդակ կեանքի ճանապարհը ուղեգծուած է ծառայութեամբ եւ ծառայակերպ կեանքը ընծայելու Աստուծոյ փառքին, եւ ի խնդիր մեր Սբ. Եկեղեցւոյ կառուցմանը: Եւ զիտենք անշուշտ, որ ապրող Եկեղեցին՝ ժողովուրդն է, որուն հովուութիւնը վստահուած է մեզի այսօրուան նիւթականացած աշխարհի կեանքին մէջ: Բոլորին աչքերը կը յառին մեզի, որպէսզի սնուցանենք անոնց հոգին ու միտքը Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ եւ դառնանք հոգեւոր մագնիսը բոլորի կեանքին մէջ: Ինչքան պատասխանատուութիւն կայ դրուած մեր ուսերուն եւ մենք պարտ ենք միասնակամ, նորոգեալ

հաւատքով, միաբանեալ Քրիստոսի սիրով՝ առաջնորդելու մեր ժողովուրդը դէպի Եկեղեցի, ու այն դարձնելու կամուրջն առ Աստուած, Հայրենիք ու Սբ. Էջմիածին:

Ժողովական այս կեանքը, աղօթքով խմորուած, մեր հոգիներուն մինչեւ խորքը կ'ամրագրէ խաչին խորհուրդը: Եւ երբ միասնական կ'ապրինք խորհուրդը խաչին, ապա լեռները կը շարժենք եւ կը դառնանք նոր կեանքին ճարտարապետը:

Անցեալ տարին մեր թեմական կեանքն արժեւորեցինք Թեմի 90-ամեակի տօնակատարութիւններով: Այս տարին Վեհափառի պատգամով հռչակուած է Երիտասարդութեան Տարի: Նշանակալից է նաեւ այն հանգամանքը, որ 100-ամեակն է Սարդարապատի եւ Առաջին Հանրապետութեան:

Այս բոլորը կը խթանեն մեզ ապրելու խաչի կեանքով, որպէսզի մեր ժողովուրդի հոգեւոր կեանքը լուսաւորենք եւ առաջնորդենք այն ուղիով, որուն մէջէն քայլեցին մեր նախնիք: Ինչքան ուղիղ նայինք խաչի խորհուրդին, այնքան կը մերժենք մեր մէջ տկարութիւնը եւ մեր կեանքն ի սպաս կը դնենք յանուն մեր Սբ. Եկեղեցւոյ վերագարթօնքին, որ պայմանաւորուած է քրիստոնէական նկարագրի պահպանումովը: Մեր մէջ է հաւատքին ոյժը. կեանքի կոչենք այն: Մեր մէջ է Աստուծոյ ներկայութիւնը, հաղորդ դարձնենք այն նորահաս սերունդին: Մեր էութիւնն է Սբ. Էջմիածինը եւ Հայրենիքը, այն դարձնենք սրբութիւնը մեր ազգին:

3 Մայիս, 2018

ՕՐՀՆԵԱԼ ԸԼԼԱՅ ՅԻՇԱՏԱԿԸ

Տ. ԴԱԻԻԹ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Քրիստոսի կեանքի ամենխորհրդաւոր օրերը կ'ապրի Եկեղեցին: Աւագ Շաբաթ է եւ, մենք բոլորս Տիրոջ չարչարանաց ու խաչելութեան խորհուրդին մէջ կը տեսնենք նաեւ ապրուած կեանքը Աստուծոյ ծառայ՝ Արժ. Տ. Դաւիթ Քինյ Զելվէյեանի, որ պանդխտութեան տարիները աւարտելէ յետոյ կը վերադառնայ դէպի երկինք՝ Աստուծոյ ձեռքերուն մէջ, ուր եւ այսուհետեւ պիտի գտնէ իր յաիտենական հանգիստը:

«Ելի ի Հօրէ եւ եկի յաշխարհ, դարձեալ թողում գաշխարհ եւ երթամ առ Հայր»:

Արժանապատիւ Տ. Դաւիթ Քահանայ հոգով բարի եւ նուիրեալ սպասաւոր մնաց Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ: Մենք անձամբ ճանչցանք զինք դեռեւս 90-ական տարիներէն: Իր քահանայական տարիները ան լեցուց նուիրեալ ծառայութեամբ Հայաստան, Վրաստան եւ արտաշխարհ, միշտ վայելելով իր ժողովուրդի սէրն ու յարգանքը:

Այսօր ան իր վերջին ողջոյնն է որ կու տայ բոլորիս, իր Եկեղեցիին ու հոգեւոր եղբայրներուն, իր հարազատ ընտանիքին՝ երեցկնոջ, զաւականց եւ անոնց ընտանեկան պարագաներուն:

Միբելի Տէր Հայրը, ինչպէս Դաւիթ՝ հսկայ Գողիաթի դիմաց, քսան տարիներ շարունակ պայքարեց անողորմ հիւանդութեան դէմ եւ յաղթեց իր հաւատքով ու տոկուն կամքով եւ անտարակոյս երեցկնոջ եւ զաւակաց հոգատար եւ գուրգուրալից խնամքով:

Հրաժեշտի պահին է սա, եւ մենք բոլորով կ'աղօթենք, որ Տէրը ճանապարհորդակից ըլլայ հանգուցեալ Տէր Հօր դէպի երկինք, ուր չկան ցաւ եւ տրտմութիւն: Աստուծոյ երանեալ սպասաւոր մը այսօր մը միանայ երկնայիններու շարքին:

Այս է ճանապարհը կեանքին, իր ծնունդէն մինչեւ վախճանը մարդուն կեանքը աստիճան առ աստիճան պատարագում է Աստուծոյ փառքին համար եւ ի վայելումն մարդկանց:

Օրհնեալ ըլլայ յիշատակը Տէր Դաւիթ Քահանային:

27 Մարտ, 2018

ՏԻՐՈՋ ԱՊԱԻԻՆԻԼ

«Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի.
ուստ ինձ առնել զկամս քո,
զի դու ես Աստուած իմ»:

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութիւնը քրիստոնեայի կեանքին մէջ այն ժամանակաշրջանն է, երբ մենք մեզ ամբողջութեամբ յանձնատու կ'ըլլանք Աստուծոյ, որպէսզի աղօթքով ու պահեցողութեամբ, առանձնակի խոկումի պահերով բարձրանանք առ Ամենակարողն Աստուած եւ նորովի կեանք ապրելու խոստումը կատարենք խորապէս ըմբռնելու համար կեանքի իմաստը եւ աւելին՝ ըմբռնելու խորհուրդը Քրիստոսի Յարութեան, որը մեկնակէտն է Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան:

Ինչքան հոգեւորոգ են աղօթքի բառերը եւ տեղին բոլորիս համար, երբ ուղղութիւն կ'որոնենք Մեծ Պահքի ընթացքը գործնականացնելու եւ պատրաստուելու Սուրբ Յարութեան Տօնին:

«Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուստ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

Արդարեւ, առաջին եւ հիմնական քայլը զորս պարտ ենք առնելու Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեանը ընթացքին այն է, որ Աստուած դարձնենք ապաւէնը մեր կեանքին: Այս քայլը պարտ ենք որդեգրել այն գիտակցութեամբ, որ ամբողջութեամբ յանձնատու ենք Աստուծոյ եւ Աստուած Ինք պիտի առաջնորդէ մեր կեանքը: Մեր կողմէ առնուած այս քայլը նախապայման

է եւ անկասկած ապահով, որովհետեւ սկիզբը կը հաստատենք այնպիսի ճանապարհորդութեան մը, որ պայմանաւորուած է Աստուծոյ առաջնորդութեամբ, որուն ամբողջ ընթացքը պէտք է լեցուի աղօթքով, եւ պահեցողութիւնը ու հոգեւոր ընթերցումները դառնան միջոցները, որոնք մեր կեանքը մինչեւ խորքին պիտի մշակեն Նոր Մարդը՝ ի Քրիստոս:

Մարդը, մենք բոլորս խիստ անհրաժեշտութիւնն ունինք Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան, որովհետեւ կեանքի վազքին մէջ կամայ թէ ակամայ կը հեռանանք Աստուծմէ եւ մեր մէջ կը տկարանայ քրիստոնեայի կոչումը: Եւ այս ամբողջ ընթացքին պարտ ենք կրկնել աղօթքի այս բառերը, որպէսզի մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք Աստուծոյ կամքին վրայ, «Ուստի նա առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

Բաւական է, որ մենք անկեղծ փափաքն ունենանք Աստուծոյ կամքին համաձայն կեանք մը ապրելու, եւ Աստուած ինք կ'ուղղորդէ մեզ եւ կ'ուսուցանէ Իր կամքը:

Քրիստոնեայի համար Մեծ Պահքը խաղաղութեան ճանապարհորդութիւն է: Բուն Բարեկենդանէն մինչեւ Զատիկուայ առաւօտ մեր օրերը լեցնենք աղօթքով, ապրինք հնարաւոր չափով պահեցողութեամբ եւ կազմակերպուած ընթերցանութեամբ եւ այն ժամանակ պիտի տեսնենք, որ մեր կեանքը լուսաւոր է եւ օրերը դարձած են աստիճաններ բարձրանալու առ Աստուած: Մեր Եկեղեցւոյ Հայրերը հաստատած են հրաշալի կանոններ ու աղօթքներ, որոնք հոգեւոր գործիքներ են նորոգելու համար մեր կեանքը: Բայց չմոռնանք, որ մտատիպարը Քրիստոս Ինք է, որ Իր առաքելութեան սկզբնաւորութեան գնաց անապատ եւ քառասնօրեայ աղօթքի ու

պահեցողութեան ընթացքով Ինքզինք նախապատրաստեց, որպէսզի իր կեանքի օրինակը դառնար նաեւ ճանապարհը մեր առջեւ բացուած:

«Տէր իմ զքեզ ապաւեն ինձ արարի. ուստ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

Տէր իմ Աստուած, ճշմարտապէս Դուն ես ապաւենը իմ կեանքին: Ձեռնամած աղօթք կը վերառաքեմ Քեզի, որպէսզի առաջնորդես քայլերս եւ լուսաւորես միտքս ու հոգիս, որպէսզի ամէն օր ու ամէն ժամ կամքդ կատարեմ: Քու պատուիրաններուդ առաջնորդութեամբ կը խոստանամ արժեւորել կեանքս, որուն պարզելիչն ես Դուն: Եւ գիտեմ, ինչքան կը լեցուի հոգիս Ս. Աւետարաններէն ճառագայթող պատգամներով, այնքան Քու լոյսդ կրնամ բերել մարդկանց կեանքին մէջ: Դուն ես ճշմարիտ Աստուածը ու խոնարհ հոգով ու սրտով եւ մտքով կը խոստանամ սկսիլ Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան, որպէսզի կարող դառնամ ըմբռնելու Աստուածորդուդ Յարութեան լոյսը՝ Մեծ Պահքի նախօրէին:

27 Յունուար, 2018

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի հոգևոր ճանապարհորդութեան քառասուն օրերու ընթացքը Եկեղեցւոյ կեանքին մէջ հաստատուած է յատուկ նպատակով մը, որպէսզի ե՛ւ հոգևորականը ե՛ւ աշխարհիկ հաւատացեալը ինքզինքին առիթը ընծայէ նորոգուելու հոգևորապէս, ամրացընելու իր հաւատքի կեանքը, որ իր ամբողջական մտասեւեռումը կեդրոնացնէ Աստուծոյ վրայ: Այստեղ պէտք է յիշել Շնորհալի Հայրապետի աղօթքի հետեւեալ բառերը, որոնք որոշակիօրէն կը բացատրեն այն մտածումը, որ քրիստոնեայ մարդը առհասարակ եւ ի մասնաւորի Մեծ Պահքի ընթացքին ամբողջութեամբ յանձնատու ըլլալու է Աստուծոյ իր կեանքով, իր հոգու ամբողջ զօրութեամբ, դառնալու համար նոր մարդ ի Քրիստոս:

«Քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգաւ եւ պատրաստեալ զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ»

Ահաւասիկ այս նպատակով ալ պատրաստուած քառասուն օրերու աղօթքն ու պահեցողութեան շրջանը մեր հոգևոր նկարագիրը կը զօրացնէ աւետարանական պատգամներու սննդառութեան եւ Քրիստոսի կեանքի օրինակին հետեւելու բարի միտումով:

Եւ եթէ օր առ օր մեզի տրուած աւետարանական պատգամներով, հոգևոր սերտողութիւններով եւ պահեցողութեամբ զարդարենք մեր հոգևոր կեանքը, ապա այն ժամանակ ոչ միայն մենք մեզի առիթը կ'ընծայենք

վերաբաժնետերերու մեր կեանքը, քննելու մեր կեանքի ընթացքը՝ իր բոլոր երեսներով, այլեւ՝ որոշում կայացնելու կեանքը ապրելու Աստուծոյ կամքին համաձայն: Եւ Աստուծոյ կամքը կ'արտացոլէ մեզի տրուած եւ հասած աւետարանական պատգամներու ամբողջութեանը մէջ:

Այս Կիրակին մեր Եկեղեցւոյ կեանքին մէջ յիշատակուած է «Անառակ Կիրակի» տիտղոսագրումով եւ օրուան աւետարանական դասը մեզի կը հաղորդէ ներողամտութեան ոգին.

«Մարդ մը ունէր երկու որդի: Անոնցմէ կրտսերը ըսաւ հօրը. «Հա՛յր, տո՛ւր ինծի քու ունեցածէդ ինծի վիճակուելիք բաժինը»: Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Շատ օրեր չանցած՝ կրտսեր որդին ժողվեց բոլոր բաները, մեկնեցաւ հեռաւոր երկիր մը, ու հոն փճացուց իր ունեցածը՝ անառակութեամբ ապրելով: Երբ ծախսեց ամէնը՝ սաստիկ սով մը եղաւ այդ երկրին մէջ, եւ ինք սկսաւ կարօտութեան մէջ ըլլալ: Ուստի գնաց՝ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու համար: Կը ցանկար խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել, բայց ո՛չ մէկը կու տար անոր: Եւ ինքնիրեն գալով՝ ըսաւ. «Քանի՜ վարձկաններ կան հօրս տունը՝ հացով լիացած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ: Կանգնիմ, երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. «Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն պէս»: Ուստի կանգնեցաւ ու գնաց իր հօր քով: Մինչ ինք դէռ շատ հեռու էր՝ հայրը տեսաւ զայն եւ գթաց. վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու համբուրեց զայն: Որդին ալ ըսաւ անոր. «Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛լ արժանի չեմ քու

որդիդ կոչուելու»: Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. «Հանեցէ՛ք առաջին պարեգօտը եւ հագցուցէ՛ք անոր, մատանի՛ դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Եւ բերէ՛ք պարարտ գուարակը, մորթեցէ՛ք, ուտե՛նք ու գուարճանա՛նք. որովհետեւ այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ»: Եւ սկսան գուարճանալ:

Անոր երեց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ տան, լսեց նուագարաններու եւ պարերու ձայնը, ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ հարցափորձեց թէ ի՛նչ էր այդ: Ան ալ ըսաւ անոր. «Եղբայրդ եկաւ, ու հայրդ մորթեց պարարտ գուարակը, որովհետեւ ողջ առողջ վերստացաւ զայն»: Իսկ ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ'աղաչէր անոր: Ան ալ պատասխանեց իր հօր. «Ահա՛ այսչափ տարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնա՛ւ քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբեք ուլ մը չտուիր ինծի՝ որ գուարճանայի բարեկամներուս հետ: Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լափեց քու ունեցածդ պոռնիկներու հետ, մորթեցիր անոր պարարտ գուարակը»: Ան ալ ըսաւ անոր. «Որդեա՛կ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քո՛ւկդ է: Սակայն պէտք էր գուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ»:

Այս առակը մեզի կը ներկայացնէ մարդկային կեանքի թատերաբեմը, ուր մարդիկ դերակատարներ են իրենց վստահուած պաշտօններով: Առակը կը մասնաւորէ ընտանեկան կեանքի մը պատկերը, որտեղ կան ծնողներ ու զաւակներ, եւ այնտեղ մատնացոյց կ'ըլլան երկու կերպարներ ի մասնաւորի կրտսեր զաւակի ժխտական

վարքագիծը, եւ ծնողներէն հօր դրական վարքագիծը, որպէս դրսեւորողը Աստուծոյ սիրոյն:

Ուրեմն, ով հաւատացեալ քրիստոնեայ, Անառակ զաւկին պատկերին մէջ է ամփոփուած մեր կեանքի պատկերը: Ուշադրութեամբ հետեւինք մեզի տրուած պատգամին եւ ներող հօր կերպարը դարձնենք մեր կեանքի ուղեգիծը:

Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան գալիք Կիրակիին շաբաթները մեզի կը հաղորդեն կեանքի հետ առնչուած բազում պատկերներ ու քրիստոսաւանդ պատգամներ, որոնցով կը կարողանանք ոչ միայն նորոգել մեր կեանքը, այլեւ այն հրաշագործելու Աստուծոյ փառքին համար:

22 Փետրուար, 2018

Մբ. Էջմիածին

ԴԱՏԱԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ

«Որ պատուիրան ճշմարտութեան ասանդեցեր եկեղեցոյ քո Քրիստոս անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ Աստուած հոգով եւ մտօք»:

«...Շնորհել մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման, մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն որ յերկինս»

«...Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ զմիտս մեր, դատել զհոգի եւ զմարմին, արդարապէս դատմամբ ըստ օրինաց քոց Քրիստոս»:

Դատաւորի Կիրակիի օրհնութեան շարականէն քաղուած վերոյիշեալ հատուածները մեզի կը հաղորդեն հրաշալի պատգամներ, որոնք անտարակոյս կայլակերպէն մեր միտքն ու հոգին, որպէսզի մեր կեանքի մեկնակէտը դարձնենք Ամենակարողն Աստուած: Ճշմարտութեան պատուիրանը, մեզ է հաղորդած Քրիստոս, որուն հաւատացողը անտարակոյս իր մէջ կը գտնէ հաւատքի նոր զօրութիւնը, ինչպիսին ունեցաւ այրին որ մերժեց անիրաւ դատաւորի վերաբերմունք եւ անսահման ժամանակով աղօթեց առ Աստուած հոգով ու մտքով:

Ուրեմն մեր աղօթքն առ Աստուած նոյնքան ներգործական դերակատարութիւն ունի դիմացինի նկատմամբ:

Շարականագիրը իր բառերով կ'առաջնորդէ մեզ, որպէսզի մեր աղօթքով միշտ դէմ յանդիման գտնուինք Աստուծոյ: Այս երկխօսութիւնը կարելոր է, որպէսզի մեր հոգեւոր սնունդի աղբիւրը ըլլայ Աստուած:

Վերջապէս, շարականագիրը մեր միտքն ու հոգին կ'ուղղորդէ այն ճշմարտութեան, որ մեր «դատավարութիւնը» կատարենք համաձայն Քրիստոսի օրէնքին: Եւ Քրիստոսի օրէնքը Իր քարոզած Աւետարանն է, որը ապրեցաւ Մեծ Վարդապետը՝ դառնալով լոյսը աշխարհի կեանքին մէջ:

Դատաւորի առակին մէջ կը ներկայանան երկու կերպարներ՝ անիրաւ դատաւորը եւ այրի կինը: Մենք յաճախ կը ներկայացնենք մէկը կամ միւսը: Բնական է ժխտական կերպար է անիրաւ դատաւորը, իսկ մեր կեանքի մէջ պարտ ենք օրինակ վերցնել այրի կնոջ կերպարը:

11 Մարտ, 2018

ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԽԱԻԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

Խաւարման գիշերն է: Սա այն պահն է, երբ Քրիստոս Աստուածորդին խաչի վրայ կ'աւանդէ Իր հոգին: Արեգակը կը խաւարի, երկիրը կը դորդայ եւ տաճարին վարագոյրը կը պատռուի: Եւ խաչէն կը ճառագայթէ նոր կեանքը:

Խաչին վրայ Իր Անձը կը պատարագէ Աստուածորդին: Ահա այս մեծ խորհուրդին առջեւ խոնարհած կ'ուզենք լուսաւորել մեր կեանքը որ վերսկսի այն Աստուծոյ հետ: Մարդուն կեանքին մէջ հրաշագործող պահն է սա, երբ մարդը իր մէջ կը ծնի նոր Մարդը ի Քրիստոս, նոր տեսիլքներով, նոր խոստումներով եւ ուխտադրութեամբ:

Քրիստոսի հրաշալի Յարութեան խորհուրդին զօրութիւնը ըմբռնելու համար քրիստոնէայ հաւատացեալը պարտի քայլել խաչի ճանապարհէն, որպէսզի զգայ չարչարանքներն ու տառապանքը Աստուածորդու, որուն մէջ ամփոփուած է նաեւ Աստուծոյ սիրոյն անսահմանելիութիւնը:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ առաջնորդող լոյսը՝ Քրիստոս է, որ Գերսեմանիի պարտէզին մէջ առանձնակի կ'աղօթէ, ուր աղօթքի կը հրաւիրէ մեզ, որպէսզի մեր մէջ գտնենք զօրութիւնը յանձնատուութեան Աստուծոյ ձեռքերուն մէջ:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ առաջնորդող լոյսը՝ Քրիստոս է, որ կը կարդայ միտքը Յուդայի եւ սակայն, կը մնայ խաղաղ մինչեւ Իր հոգիին խորքը, խոնարհութեամբ ընդունելով Աստուծոյ կամքը: Չէ՞ որ իրաքանչիւրս կեանքին մէջ կ'ըմպենք նոյն դառնութեան

բաժակէն: Հարկ է մնալ խաղաղ ու աներեր՝ ներող ոգիով
օծուն էութեամբ մը:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ առաջ-
նորդող լոյսը՝ Քրիստոս է, որ Իր հոգու մէջ կ'ապրի տա-
ռապանքը, երբ Պետրոս Առաքեալ երիցս կ'ուրանայ
զինք: Քրիստոս հանդարտութեամբ կ'ընդունի Իր սի-
րելի աշակերտին տկարութիւնը եւ Իր ուսերուն վրայ
կը վերցնէ աշխարհի մարդկանց տկարութիւնը:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ առաջ-
նորդող լոյսը՝ Քրիստոս է, խաչը Իր ուսին կը քայլէ
դէպի Գողգոթայի բարձունքը: Մեր հոգին կը լուսաւոր-
ուի ի տես այս հրաշալի տեսարանին, որովհետեւ Խաչ-
եալը Աստուծոյ սէրը կ'արտացոլէ, թէկուզ եւ խաչին ճա-
նապարհը ցաւ կ'առթէր: Աստուածորդու ցաւը՝ սիրոյ
բարձրակէտն էր:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ
առաջնորդող լոյսը՝ Քրիստոս է, որ կը հրաւիրէ մեզ,
որպէսզի կեանքը ապրինք Քրիստոսի հետ, մեր խօսքը
արտացոլէ Իր խօսքը եւ մեր կեանքը կը պատգամէ Իր
կեանքը, որպէսզի մեր կեանքի ճանապարհը ըլլայ Անոր
Յարութեան խորհուրդին պատգամաբերը:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ
առաջնորդող լոյսը՝ Քրիստոս է, որ կ'իջնէ աշխարհի
մարդկանց էութեան խորքին, որպէսզի խորտակէ խա-
ւարը մեր հոգիներուն, եւ այնտեղ ծնունդ առնէ ներո-
ղամտութեան ոգին՝ մեծագոյն առաքինութիւնը քրիս-
տոնէութեան: Ուրեմն, սա է պահը պայծառակերպու-
թեան, Քրիստոսի հետ քայլելու, եւ Քրիստոս դարձնելու
լոյսը մեր կանթեղուած էութեան:

Խաւարման այս գիշերուան մութին մէջէն մեզ առաջնորդող լոյսն է Քրիստոս, որուն ներկայութիւնը կը պարտաւորեցնէ մեզ մեր մէջ խտացնելու աստուածային սէրն ու իմաստութիւնը, մեր հայրերու հաւատքի գիտակցութիւնը, Քրիստոսի Աւետարաններէն ճառագայթող սրբութիւնները, մեր մէջ արմատաւորելու կեանքը տնտեսելու նպատակն ու առաքելութիւնը եւ ամենէն կարեւորը՝ մեր մէջ վերապսակելու Աստուծոյ պատկերը, քանզի մարդն ստեղծուած է Աստուծոյ պատկերին համաձայն:

Այս երեկոյ, սիրելի հաւատացեալներ, աղօթք դարձած՝ ձեր օջախները պիտի դարձնէք աղօթքի սրբազան տուն: Լուսաւորուած հոգիներով ձեր մէջ պիտի գտնէք կեանքը հրաշագործելու զօրութիւնը, որպէսզի մեր կեանքի ամէն մէկ վայկեանը դարձնենք օրհնութիւն մեր զաւակաց համար: Քրիստոս Իր խաչելութեամբ մահը պարտութեան մատնեց խաչին վրայ եւ խաչը դարձաւ կենարար ու կենսատու, կեանքը ուղեգծող խորհրդանիշը: Ու երբ մեր հայեացքը կը կեդրոնացնենք խաչին վրայ այն կը դառնայ նաեւ հայելին մեր ազգի պատմութեան, որուն կեանքը եղաւ խաչի ճանապարհ, բայց երբեք չնուազեց մեր մէջ Յարութեան յոյսը:

Սիրեցէք զԱստուած բոլոր սրտով, սիրեցէք միմեանց մաքուր հոգով, սիրենք աշխարհը, գուրգուրանք մեր Սբ. Եկեղեցիին պայծառութեանը ի խնդիր, քանզի այս սուրբ տեղին մէջ մեր հանդիպումը Աստուծոյ հետ է եւ այս տունը խաչի խորհուրդով կառուցուած ծննդավայրն է մեր հոգիին:

28 Մարտ, 2018

ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՒ ՆՈՐ ԿԵԱՆՔԸ...

Այս երեկոյ կ'երկրպագենք Քրիստոսի գերեզմանի առջեւ, կը փառաւորենք Անոր թաղումը ու մեր հոգիներուն մէջ կը սեղմենք ամբօրէն նոր կեանքին ընդառաջ երթալու տեսիլքը:

Քրիստոնեայի կեանքին մէջ հոգեւոր ուրախութեան բարձրակէտն է այս պահը: Անյագօրէն կը սպասենք Քրիստոսի գերեզմանէն հեղեղը լոյսին, որուն մէջ կարճ ժամանակ անց պիտի տեսնենք հրաշալի պատկերը Տիրոջ Յարութեան: Քրիստոսի գերեզմանը կեանքի նոր արշալոյսին Դուռն է: Աղօթքով ու երկիւղած սրտով եկած ենք խոնարհեցնելու մեր անձերը, փառաւորելու Անոր թաղումը, քանզի այդ պատկերի մէջ կը տեսնենք մարդկային մեղքին պարտութիւնը, եւ սկիզբը նոր ճանապարհորդութեան քայլելու համար համաձայն Աստուծոյ խօսքին:

Քրիստոսի գերեզմանի առջեւ կանգնած հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան իր հոգու հայեացքը պիտի ուղղէ դէպի Երկինք եւ ակնդէտ սպասէ Քրիստոսի Յարութեան տեսիլքին: Մարդը ծարաւի է նոր կեանքի: Եւ մեր հոգիին ծարաւը պիտի յագեցնենք Աւետարաններէն հոսող անմահական ջուրով, որպէսզի ունենանք առաւել կեանք:

«ԵՍ ԵԿԻ ԶԻ ԱՌԱԻԵԼ ԿԵԱՆՍ ՈՒՆԻՑԻ»

Քրիստոսի գերեզմանի առջև կանգնած հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան իր մէջ ծնունդը պիտի տայ նոր մարդուն, որ պիտի ըլլայ Քրիստոսի նմանակից: Հոգիով բռպկ չմանք եւ լոյս առնենք Անոր գերեզմանէն եւ լուսատու դառնանք մեր կեանքով, որպէսզի դառնանք ճշմարիտ առաքեալներ:

Քրիստոսի գերեզմանի առջև կանգնած հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան իր մէջ կը փնտռէ ճշմարիտը, որ կեանքը վեր է նիւթական արժէքներէն եւ էականը այն է, երբ գիտակից կը դառնանք հոգիներ կերտելու, քանզի այս կեանքէն ոսկի ու արծաթ չէ որ պիտի տանինք դէպի յաւիտենականութիւն, այլեւ միայն ազնիւ հոգի մը:

Քրիստոսի գերեզմանի առջև կանգնած՝ հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան պիտի լեցնէ իր հոգիին մէջ արձագանքը Աւետարանական խօսքերուն եւ Տիրոջ պատուիրաններուն: «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»: Տիրոջ ձայնն է, որ կ'արձագանգէ մեր հոգիներուն մէջ, երբ կը խօսի մեզ, որպէսզի կեանքը յեղաշրջենք դէպի բարին, այն քաջ համոզումով, որ ներող Աստուած Իր թելերը լայնօրէն բացած կը սպասէ մեզի:

Քրիստոսի գերեզմանի առջև կանգնած հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան պիտի յիշէ խոնարհութեան

պատուիրանը, որուն պատկերը մեր առջեւ թարմ է դեռ Ոսնկուայի հոգիները շարժող, ցնցող պատկերով:

Քրիստոսի գերեզմանի առջեւ կանգնած հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան իր վրայէն պիտի թօթափէ հոգին պղտորող բարկութիւնն ու սաստը, եւ իր էութիւնը պիտի դարձնէ տաճարը Աստուծոյ բնակութեան, որպէսզի մեր ամէն մէկ խօսքն ու արարքը հոգիներուն մէջ լոյս ներարկէ:

Քրիստոսի գերեզմանի առջեւ կանգնած հաւատաւոր եւ աղօթող քրիստոնեան մէջէն պիտի հրաժարի խաւարի գործերէն եւ պիտի տեսիլքն ունենայ նոր կեանքին ի Քրիստոս: Մեր հոգիներուն մէջ խաւար է, երբ այնտեղ բացակայ է Քրիստոս, Խաղաղութեան Իշխանը, երբ կամայ թէ ակամայ մենք մեզ զրկած ենք Աստուծոյ սէրէն եւ իմաստութենէն:

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք եւ զթաղումնդ քո փառաւորեմք:

Քրիստոսի գերեզմանէն ճառագայթող լոյսն է, որ կ'ըմբռնենք, որպէսզի մեր հոգիներուն մէջ ամրացած Աստուծոյ սէրը, Քրիստոսի Անձի պատարագումին խորհուրդը դառնանք եւ լուսատու փարոսը աշխարհի մարդկանց համար:

29 Մարտ, 2018

ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ

Աւագ Շաբթուան հոգեպարար արարողութեանց շարքին Աւագ Ուրբաթի թաղման կարգը իր խորհրդաւորութեամբ բոլորս կը հրաւիրէ աղօթքի, որպէսզի երկիւղած սրտով ու լուսաւորեալ հոգով խոնարհինք Քրիստոսի գերեզմանին առջեւ, որպէսզի հաղորդ դառնանք Անոր գերեզմանէն ճառագայթող լոյսին, որուն մէջ է ծրարուած Յարութեան շունչը:

Շարականներուն մէջ ամփոփուած անթիւ խօսքեր կան, որոնք մեր հոգեւոր էութիւնը կը լեցնեն հաւատքի խոր գիտակցութեամբ: Առաջին եւ ամենէն հիմնական պատգամը, որուն հաղորդ կը դառնանք օրուան շարականներուն ընդմեջէն մեզի տրուած խոնարհութեան ոգին է:

“Անմահութիւնը տուող Քրիստոսը, այսօր մահուան հող կը խոնարհի եւ անմատչելի լոյսի մէջ բնակողը, երկրի սրտին մէջ մարմնով կը թաղուի”:

Շարականագիրը յստակօրէն կը խօսի Անմահութեան աղբիւրը հանդիսացող ու անմատչելի լոյսի մէջ բնակող ճարտարապետի մասին, որ Երկինքէն երկիր կ’իջնէ, մարդկային կերպ կը ստանայ որպէսզի Իրմով դէպի Աստուած բարձրացնէ մարդկութիւնը երէկ, այսօր եւ յաւիտեան:

Ուրեմն, Քրիստոսի լոյսը գերեզմանէն ճառագայթող ու լսուող առաջին դասը խոնարհութեան պատգամն է: Խոնարհ սրտով ապրող քրիստոնեան անտարակոյս խաղաղ է իր էութեամբ եւ ըստայնմ օրհնաբեր է մեր կեանքը բոլորին համար:

Շարականներուն մէջ ամփոփուած երկրորդ պատգամը կը խօսի Քրիստոսի մասին, որպէս “Արթուն բնութեամբ ամենուն Արարիչը”, որուն մահը յաղթանակն է մահուան վրայ: Այստեղ մեզի տրուած պատգամը Փրկագործութեան խորհուրդն է, պատարագումը Տիրոջ՝ խաչին վրայ, եւ Իր Անձին ընդմեջէն մեզի հասնող հրաւերը կեանքն ապրելու ծառայասիրութեամբ, զոհաբերումներով, հոգեւոր ու բարոյական արժէքներու ակնդէտ: Ի՞նչ է մահը, եթէ ոչ հոգիին աղքատութիւնը, հոգեւոր կեանքի բոցիկութիւնը: Սա աւելի ծանրագոյն է, քան մեր ֆիզիքական մարմիններուն հողին տրուած ըլլալը:

Ուրեմն, Քրիստոսի լոյս գերեզմանէն մեզի հասնող եւ մեր հոգեւոր էութեանը մէջ արձագանգող երկրորդ պատգամը՝ զոհաբերութեան հրաւերն է: Մեր կեանքի ամենասուրբ արժէքները մեզմէ կը պահանջեն զոհաբերութիւն: Ընտանիքը բարձրակէտն է մեր բարոյական կեանքին, որուն հիմքը զոհաբերութիւնն է: Ընտանիքին կը յաջորդեն դեռես բազում սրբութիւններ, որոնք բոլորն ալ կը թելադրեն զոհողութիւն:

Շարականներուն մէջ ներփակուած երրորդ պատգամը՝ հրաւերն է հոգեւորապէս վերածնեալ կեանքին: Եւ այս կը կարդանք շարականագրի մտածումին մէջ, “Որ պատուական խաչիւղ քո Քրիստոս եւ սուրբ արեանդ քո հեղմամբ կեցուցանել զմեզ կամեցար, որ երկայնամիտ ես Տէր՝ քեզ փառք: Մեզի տրուած պատգամը, որ խունկի նման կը բուրէ Քրիստոսի գերեզմանէն առաւել կեանքի խորհուրդն է: Քրիստոս Ինք խօսեցաւ մարդկութեան. “Ես եկի զի առաւել կեանս ունիցիք”: Աստուածապարգէւ մեր կեանքը ունի իր նպատակն ու առաքելութիւնը, այն պէտք է ապրիլ Քրիստոսի հետ. Այն

պէտք է լեցուի Աւետարանի լոյս պատգամներով. Այն պէտք է իր էութիւնը հաստատէ Աստուծոյ սիրոյն ու իմաստութեան վրայ: Տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ շարականագիրը. “Դուն որ պատուական խաչին վրայ արինդ թափեցիր եւ փափաքեցար մեզ կեանք պարգեւել”: Հոգեւոր վերածնունդի խորհուրդն է սա, առանց որուն մարդ մեռեալ տարր է:

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, այսօր եկած ենք խոնարհելու Քրիստոսի սուրբ գերեզմանի առջեւ եւ մեզի հետ կրելու ու տանելու երեք պատգամ. խոնարհութիւնը, ծառայութիւնը, հոգեւոր վերածնունդը: Քրիստոսի սուրբ գերեզմանի առջեւ մեր խոնարհումը կը կատարենք նաեւ մեր անմահ նահատակներու ու սուրբերու յիշատակութիւնը, որոնք անտարակոյս իրենց կեանքն առաջնորդեցին խոնարհութեան, ծառայութեան եւ հոգեւոր վերածննդեան պատգամներով:

Աւագ Ուրբաթը մեր Սուրբ Եկեղեցւոյ մէջ հոգեւոր ցնծութեան ու յաղթանակի օրն է, ինչպէս ան արձանագրուած է շարականներուն մէջ. “Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք եւ զսուրբ թաղումնդ քո փառաւորեմք”: Կը փառաւորենք մեր Տիրոջ թաղումը, քանզի քաջ կը գիտակցինք ինչպէս շարականները կ'ըսեն, որ՝ “Ան կը ննջէր մահացածներու մէջ”:

Այնպէս ապրինք մեր կեանքը, որ այն նմանեցնենք Քրիստոսի խաչելութեան ու Անոր թաղումը՝ Դուրը նոր ու յաւիտենական կեանքին:

ՔՐԻՍՏՈՍ՝ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Աւագ Հինգշաբթի խաւարման գիշերի հոգեպարար արարողութիւնը Քրիստոսի երկրաւոր կեանքի ամենէն խորհրդաւոր ժամերը կը ներկայացնեն մեզ, որոնք մեր խորհուրդներն ու աղօթքները կը կեդրոնացնեն խաչի խորհուրդին վրայ, եւ աւելին՝ խաչին վրայ պատարագեալ Փրկչի կեանքին վրայ:

Մեր Սուրբ Եկեղեցւոյ հայրերը անթիւ մաղթանքներով եւ աղօթքներով փառաբանած եւ գովերգած են Քրիստոս Աստուածորդու պատարագեալ կեանքը եւ այն ըմբռնած որպէս որդեգրելի ճանապարհը մեր կեանքի եւ ճշմարտութիւնը՝ մեր առջեւ բացուած:

Աւագ Հինգշաբթի՝ խաւարման գիշերը՝ աստուածային լոյսին հրաւիրող հոգեւոր ուժականութիւն մը ունի իր մէջ, որովհետեւ խաչին մէջ կը տեսնենք խաչեալն Քրիստոս, որ Իր կեանքը պատարագեց մարդկանց հոգիներու փրկութեան համար: Մտաբերենք Յովհաննէս Աւետարանչի խօսքը. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ»:

Ահաւասիկ այս պատկերին մէջ կը տեսնենք ձեր կեանքին ճանապարհը, սիրելի ծնողներ, դուք որ ձեր կեանքը ընծայաբերեցիք յանուն ձեր զաւակաց, որպէսզի գործնապէս ցոյց տաք ձեր սէրը, որն Աստուծոյ շնորհն է տրուած ձեզի:

Քրիստոս՝ Աստուածորդին մութին ու խաւարին մէջ մոլորած մարդկութեան կեանքի մէջ դարձաւ լոյսին տանող ճանապարհին ու ճշմարտութիւնը:

Այսօր աշխարհի մէջ աւելի քան բոլոր ժամանակները մարդը իր կեանքը պիտի առաջնորդէ Քրիստոսի գծած ճանապարհէն, ու Անոր խօսքն ընդունի որպէս գերագոյն ճշմարտութիւն: Փաստն այն է, որ երբ մարդն իր կեանքը կ'ապրի առանց Աստուծոյ սիրոյն ու իմաստութեան, ապա նոյն մարդը հոգեւորապէս բռայիկ է, սանձարձակ է իր խօսքերու արտասանութեան մէջ, անզգոյշ իր կենցաղով, եւ այդ է նաեւ պատճառը, որ աշխարհին այսօր ցաւի ու տառապանքի մէջ է, ժողովուրդներն իրար դէմ դուրս են եկած, մանուկներ դեռ իրենց կեանքի գարունը չապրած իրենց աչքերը կը փակեն: Այս բոլորին ականատեսներն ենք բոլորս եւ հոգու պարտք ունինք ոչ միայն մեր անձերուն նկատմամբ, այլեւ՝ բոլորին հանդէպ: Աստուած այս գեղեցիկ աշխարհի վերակացութիւնը վստահած է մեզի, որպէսզի այն պահէնք պահպանենք խաղաղ, անսասան ու բարգաւաճ:

Սիրելի բարեպաշտ հայորդիք, խաչը պարգէն է մեր կեանքին, քանզի խաչին մէջ մենք կը տեսնենք ոչ միայն խաչեալն Քրիստոս, այլեւ՝ մեր նախնեաց խաչով դրոշմուած կեանքը: Սա կը բացատրէ այն ճշմարտութիւնը, որ մեր նախնիք խորապէս են ըմբռնած իմաստը հոգեւորին, որուն պատգամը մեզի է հաղորդած Աստուածորդին. «Հոգի առաւել է քան զմարմին»: Մեր հայեացքը խաչին ակնդէտ մենք կը ճարտարապետենք հոգեւոր ու բարոյականով հարուստ, բովանդակալից եւ իմաստուն կեանք, եւ երբ խօսքը կը վերաբերի հայ

քրիստոնեային, ապա Աւագ Շաբթուան խորհուրդը կ'արժեւորուի երբ մենք ուխտ կը կատարենք նորոգելու մեր կոչումը խոստում կատարելու մեր կեանքի ընթացքը ուղեգծելու Աստուածսիրութեամբ, եկեղեցանուէր կեանքով, հաւատքի սպասումներով, մեր էութեանը մէջ ծնունդ տալով նոր մարդուն՝ մերժելու համար հին մարդը եւ ապրելու քրիստոնեայի կեանքը, օրինակելի վարքով, ազնիւ հոգիով:

Խաւարման գիշերը լոյսի ճանապարհին է մեր կեանքի մէջ, որուն մէջէն քալելով կը հանդիպինք Աստուծոյ հետ: Աստուծոյ հետ հանդիպման պահով կը պայմանաւորուի նոր կեանքին ծնունդը:

13 Ապրիլ, 2017

ԾԱՂԿԱԶԱՐԴԷՆ – ԶԱՏԻԿ ՀՈԳԵԻՈՐ ԶԱՐԹՕՆՔԻ ՕՐԵՐ

Անցնող ամբողջ շաբաթը, Ծաղկազարդէն մինչեւ Զատիկ երկարող ժամանակահատուածը Արեւմտեան Թեմէն ներս եղաւ հոգեւոր զարթօնքի օրեր: Թեմի եկեղեցիները մնացին լեցուն խոտներամ հաւատացեալներով: Հոգեւոր մթնոլորտը, աղօթական ոգին տեսանելի էր ամէնուրեք եւ որոշապէս ակնյայտ կը դառնայ այն իրականութիւնը, որ Եկեղեցին կ'աճի թիով ու կ'ընդարձակէ իր առաքելութիւնը: Ի մասնաւորի ուրախալի է տեսնել աճը մանուկներու, պատանիներու եւ երիտասարդներու, ովքեր բառերով անբացատրելի ուրախութիւն կը բերեն բոլորիս հոգիներէն ներս:

Մեր Մբ. Եկեղեցոյ հիմնական առաքելութիւնն է Աստուծոյ խօսքին քարոզութիւնը եւ ի կատար ածելու այն բոլոր ծրագրերը, բոլոր հոգեւոր միջոցները, որոնք կը նպաստեն մշակելու փոքրին ու մեծին քրիստոնէական նկարագիրը:

Փառք կու տանք Ամենակալ Աստուծոյ որ հոգեւոր առաքելութիւնը բազում մակարդակներով կ'իրականանայ Թեմական կառոյցէն ներս՝ շնորհիւ Թեմի եկեղեցականներու եւ անոնց զօրավիգ կանգնող աշխարհիկ սպասաւորաց ծառայութեամբ: Բայց կատարուող աշխատանքը բաւարար չէ եւ դեռ շատ երկար ճանապարհ ունինք կտրելիք, որպէսզի Աստուծոյ խօսքը դարձնենք ճշմարիտ լոյսը հոգիներէն ներս բոլոր անոնց, ովքեր ծարաւի են հոգեւոր ջուրին: Հարկ է ընդարձակել աստ-

ուածաշնչական սերտողութեանց առաքելութիւնը՝ առաւել ամրապնդելու հիմքերը Կիրակնօրեայ վարժարաններու, առաւել թափ տալ խմբակային խոկումներու, բազմապատել թիւը կրօնական հրատարակութեանց, աշխուժացնել հոգեւոր գրոյցներու լսարանները, կազմակերպել յատուկ այցելութիւններ հիւանդանոցներ եւ մասնաւոր առանձնատուններ: Բնական է այս առաքելութիւնը արդէն իսկ կ'իրականանայ, բայց Եկեղեցին միշտ պիտի բարի նպատակը ունենայ հետապնդելու հասնելու «կորուսեալ ոչխար»-ին:

Մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ այս Զատիկը նոր կեանքին կրակը ներշնչէ մեր հաւատացեալներու հոգիներու մէջ, որպէսզի ամէն հայ աղօթքով օծէ իր կեանքը, ընտանեկան օջախները դառնան մէյ-մէկ եկեղեցիներ եւ առաւել զօրացնենք մեր Մայր Սուրբ Եկեղեցին:

“Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգւոյս”:

30 Մարտ, 2018

ՀԵՏԵՒԵՑԷՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿԻՆ...

Ոտնլուայի հոգեպարար տեսարանը հոգիները կը ցնցէ, որովհետեւ մեր աչքի առջեւ է Քրիստոս Աստուածորդին, որ ծունկի եկած է Իր առաքեալներուն առջեւ եւ խոնարհութեամբ կը լուայ անոնց կոշտացած ու աղտոտ ոտքերը: Աստուածորդին Իր կեանքով խոնարհեցաւ մարդկութեան առջեւ ընդհուպ մինչեւ իսկ Իր կեանքը զոհաբերեց մարդկութեան մեղքերու թողութեան համար:

Ոտնլուայի տեսարանի մէջ մնանք մեր կեանքով եւ մոռնանք մեր պաշտօններն ու տիտղոսները եւ մնանք արթուն մեր հոգեւոր ծառայութեան մէջ, որպէսզի Քրիստոսի նմանակցութեամբ արդարացնենք մեր կեանքը:

Ոտնլուայի արարողութեան ընթացքին մեզի ներկայացող իւրաքանչիւր մանուկի մէջ պարտ ենք տեսնել աստուածային պարգեւ մը, որ մաքուր է հոգով ու սրտով, որը եւ մեզ կը հրաւիրէ սրբուելու եւ մաքրուելու, որպէսզի կարողանանք մուտք գործել Աստուծոյ թագաւորութենէն ներս:

Հետեւինք Քրիստոսի օրինակին եւ դառնանք ապրող Աւետարան, այնպէս մը, որ մէն մի խօսքի եւ արարքի մէջ արտացոլուի Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը: Նախապայման է սա, որպէսզի հոգեւորապէս պատրաստ ըլլանք դիմաւորելու մեր կեանքի մէջ Քրիստոսի Յարութիւնը, որուն մէջ իւրաքանչիւրս կը տեսնենք մեր հոգիին ծնունդը, վերածնունդը, նոր սկիզբը մեր կեանքին:

Ուրեմն, Քրիստոսի կեանքէն քաղուած Ոտնլուայի տեսարանը առատ սնունդ կը մատակարարէ մեր հոգիին: Լուսաւորութեան պահն է սա բոլորիս համար:

29 Մարտ, 2018

“ՏԷՐ, ԶԻ ԲԱՑՑԻՆ ԱԶՔ ՄԵՐ” ՏԷՐ, ԹՈՂ ՄԵՐ ԱԶՔԵՐԸ ԲԱՑՈՒԻՆ

Ծաղկագարդի Կիրակիէն ի վեր մեր ականջներուն մէջ կ'արձագանգեն Երուսաղէմ քաղաքի մուտքին Յիսուսին դիմաւորող զոյգ մը կոյրերու կանչը, որոնք իրենց աչքին լոյսը վերագտնելու համար թախանձագին կ'աղաչէին Տիրոջը ըսելով. “Տէր, թող մեր աչքերը բացուին”:

Բայց ովքե՞ր են այդ զոյգ մը կոյրերը, եթէ ոչ մենք, որ եկած ենք այսօր մեր հոգիներուն աչքերը բանալու խնդրանօք, որպէսզի տեսնենք զՔրիստոս ու ապրինք անոր ներկայութիւնը մեր առօրեային մէջ վայրկեան առ վայրկեան, որպէսզի մեր կեանքով դառնանք նմանակից Քրիստոսի:

“Տէր, թող մեր աչքերը բացուին”:

Աղօթքով կը դիմենք առ Աստուած, որպէսզի մեր հոգիներուն հայեացքը կեդրոնացնենք խաչին խորհուրդին վրայ եւ անոր վրայ տեսնենք խաչեալն Քրիստոս, որ աշխարհ եկաւ ու պատարագեց Իր կեանքը մարդկանց հոգիներու փրկութեանը համար: Այս խորհուրդի վկայութիւնը մեզ է փոխանցած Յովհաննէս Աւետարանիչ. “Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին որդին տուաւ, որպէսզի ով որ անոր հաւատայ չկորսուի, այլեւ՝ յաւիտենական կեանք ունենայ” (Յովհ. 3:16):

“Տէր, թող մեր աչքերը բացուին”:

Մեր հոգու աչքերով կ'ըմբռնենք, որ Քրիստոս մեր կեանքի ճանապարհն է ու ճշմարտութիւնը: Մեր կեանքը պիտի դարձնենք վկայութիւնը Քրիստոսի Անձին ու պատարագումին: Սարդուն կեանքը կ'արժեւորուի երբ հոգեւոր ու բարոյական արժէքներով ենք հարուստ եւ մեր կեանքի ընթացքը կը պայմանաւորենք Քրիստոսի հետ ճանապարհորդութեամբ, որպէսզի խաչը դարձնենք նաեւ պատկերը մեր կեանքին, այնպէս ինչպէս ապրեցան մեր նախնիք անսալով Տիրոջ պատգամին. “Հոգի առաւել է քան զմարմին”:

“Տէր, թող մեր աչքերը բացուին”, որպէսզի կեանքն ապրինք Աստուածսիրութեամբ, հաւատքի գիտակցութեամբ, բարի սպասումներով, նորին ծնունդը ապրելու տեսիլքով:

Խաւարման գիշերը լոյսի ճանապարհն է մեր կեանքի մէջ, որուն մէջէն քայլողը կը հանդիպի Աստուծոյ հետ: Սա այն պահն է, երբ մեր հոգեւոր էութեանը մէջ կը ծնի նոր մարդը:

13 Ապրիլ, 2017

ՅԱՐԵԱ՛Ւ ՔՐԻՍՏՈՍ

Քրիստոսի Յարութիւնը մարդկութեան կեանքը յեղաշրջող ճշմարտութիւն է: Իր հրաշալի Յարութեան խորհուրդը ապրող անհատ քրիստոնեան կամ հաւաքականութիւնը իր մէջ կ'ապրի նոր կեանքը, ստեղծագործելու ոգին, եւ ամենէն էականը՝ յաւիտենականութեան զգացողութիւնը:

Քրիստոսի Յարութիւնը անցեալ չէ, այլեւ՝ ներկայ, որուն ապրումն ու գիտակցութիւնը կ'ունենանք հաւատքով: Ժողովուրդներ, Յարութեան խորհուրդին առաջնորդութեամբ կեանք են իմաստաւորած, պատմութիւն կերտած, մշակոյթ ստեղծած եւ նոյն խորհուրդի առջեւ խոնարհումով նահատակներ տուած, որոնց արեան հեղումովը հաստատուած է եկեղեցին:

Յարութեան խորհուրդը մեր ազգի նախնեաց եւ այսօր մեր զաւակաց համար կեանքի խորհուրդն է: Նույն խորհուրդին առջեւ խոնարհած մէկուկէս միլիոն նահատակներ մեր մէջ տեսան տեսիլքը նոր արշալոյսներու, Մեծ Երազը՝ վերանկախացեալ Հայաստանի:

Յարեա՛ւ Քրիստոս

Հաւատացեալը երբ ջերմ սրտով կը յայտարարէ Քրիստոսի Յարութիւնը անտարակոյս իր հոգիին ձայն է, որ կ'արձագանգէ, որն ուրիշ բան չէ, եթէ ոչ իր հաւատքը Աստուծոյ հանդէպ, քրիստոնէավայել կեանքով մը ապրելու իր խոստումը եւ դառնալու նմանանակից Քրիստոսի:

Քրիստոսի Յարութիւնը պիտի դարձնենք մեր կեանքի նոր արշալոյսը, որպէսզի կեանքը ապրինք յուսալից, նոր տեսիլքներու հետամուտ, ճարտարապետելու օրինեալ կեանք եւ ի մասնաւորի՝ մեր շուրջիններու կեանքին մէջ դառնալու ներշնչումի աղբիւր:

Կ'ապրինք նոր աշխարհի մը մէջ, եւ ամէն օր ու վայրկեան նոր մարտահրաւերներու առջեւ կը գտնուինք: Գիտութեան եւ տեխնոլոգիայի զարգացումը մեզի չի կրնար որեւէ ձեռով պարտադրել որդեգրելու բարոյական նոր մօտեցումներ, որոնք հակոտնեայ են քրիստոնէական վարդապետութեան եւ այն հաւատքին, որոնք եղան հիմքերը մեր նախնեաց հոգեւոր կեանքին:

Աշխարհի խաղաղութիւնը, մարդկանց բարձր ու ստեղծագործական կեանքը պայմանաւորուած է Աստուած եւ մարդ յարաբերութեան մշտականութեամբ: Հաւատքով կը պայմանաւորուի նաեւ ընտանեկան սրբութեան սահմանումը՝ բարոյական գերագոյն յաղթանակը:

Զատկուան խորհուրդը առաւելագոյնս կ'իմաստաւորուի, երբ քրիստոնէայ ընտանիքը Քրիստոսի Յարութեան խորհուրդը կ'արտայայտէ գործնական քայլերով:

Քրիստոս Յարեա՛լ ի մեռելոց Օրհնեա՛լ է Յարութիւնն Քրիստոսի

Քրիստոսի Յարութեան խորհուրդը հրաւերն է նոր կեանքի, որպէսզի մեր հոգեւոր էութեան մէջ մշտապէս կրենք Աստուծոյ ներկայութիւնը, մեր քրիստոնէական ինքնութիւնն ամուր պահպանելու ոգին, հայրենասիրական շունչը, համամարդկային արժէքներու հանդէպ

գիտակցութիւնը, ազգային շունչը, ծառայութեան զգացողութիւնը, ի մասնաւորի՝ հայ ընտանիքի սրբութեան տեսիլքը: Այս բոլորին մատակարարն է Եկեղեցին, որուն ապրող ու շնչող մասնիկներն ենք: Ա՛յս պատկերը կը տեսնենք Քրիստոսի Յարութեան խորհուրդին մէջ:

Յարութեան խորհուրդը աւիշն է նոր կեանքի:

Օրհնեա՛լ է Յարութիւնն Քրիստոսի:

10 Մարտ, 2017

ՍՈՒՐԲ ԶԱՏԻՎ

«Ի քէն է Տէր՝ աղբիւր կենդանութեան եւ լուսով
երեսաց քոց տեսանեմք զլոյս»:

Յարութեան Տօնը կը դիմաւորենք անգամ մը եւս եւ անկասկած իւրաքանչիւրս մեր հոգու մինչեւ խորքը կը զգանք նոր կեանքն ի Քրիստոս: Եւ երբ աղօթքով մեր հայեացքը կ'ուղղենք առ Աստուած, իր մէջ կը գտնենք կենդանութեան աղբիւրը եւ Իր ներկայութիւնը կ'ընդունինք որպէս լոյսը մեր կեանքին:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը մարդկութեան կեանքը յեղաշրջեց, եւ մարդը իր մէջ գտաւ վերստին կենդանութեան շունչը: Հաւատքով կը նայինք Յարութեան ճշմարտութեան եւ կ'ըմբռնենք այն, որ Քրիստոսի Յարութիւնը ճանապարհն է յաւիտենականութեան: Հաւատքի այս գիտակցութիւնը ապրող քրիստոնեայ մարդը իր կեանքը կը հրաշագործէ եւ իր մէջ կը գտնէ ծնունդը արժեւորուած կեանքով մը ապրելու իմաստութեան: Նոյնը կը վերաբերի նաեւ քրիստոնեայ ժողովուրդներուն, որոնց ընտանիքի մէջ Քրիստոսի Աւետարանով ապրող մեր Եկեղեցւոյ զաւակները դարերով լուսաւորած են իրենց կեանքը, որովհետեւ մշտապէս իրենց հայեացքը ուղղած են առ Աստուած, որպէս աղբիւրը կենդանութեան եւ Աստուծոյ ներկայութիւնը ընդունած որպէս Լոյսը աշխարհին:

Քրիստոս Յարեաւ ի մեռելոց
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի

Քրիստոսի Յարութեան խորհուրդը այս օրերուն մեր ազգի զաւակները աւելի շեշտուած կերպով կը զգան իրենց հոգու մէջ: Թերեւս աշխարհի կեանքին մէջ շատ են այն երեւոյթները, որոնք կը ցնցեն մարդկութեան խաղաղ ու ստեղծագործական կեանքը: Էականը, սական, այն է որ կեանքի մարտահրաւերները ոչ մէկ ձեւով կը տկարացնեն հայ քրիստոնեան իր հաւատքի կեանքին մէջ, որովհետեւ մեր կեանքին նպատակ տուող գերագոյն ճշմարտութիւններն են՝ վերանկախացեալ մեր Մայր Հայրենիքն ու Սբ. Էջմիածինը, փառապանծ մեր ժողովուրդի զաւակները ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի, նահատակ մեր զինուորներու արեան կանչը, եւ յաղթանակի շունչով հարուստ տեսլապաշտ մեր երիտասարդները, որոնք մեզի կը ներկայանան որպէս խորհուրդը Յարութեան հրաշքին:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը կ'ապրինք մենք: Քրիստոսի Յարութեան խորհուրդը՝ մեր նախնեաց կողմէ մեզի վստահուած անկորնչելի եւ անժամանցելի ժառանգն է, որը անցեալը, ներկան ու գալիքը իրար կը կապէ:

Այս տարի Զատիկը մեզի կը հաղորդէ վերագարթօնքի ոգին Սարդարապատի հողէն արձագանգող յաղթանակի պատգամով, որուն մէջ կը լսուին հայ զինուորներու սրտին զարկերը, որոնք կռուի դաշտ մեկնելէ առաջ հաղորդուեցան Հայոց Սրբութիւն Սրբոց Սբ. Էջմիածնի Մայր Խորանի սկիհէն եւ քաջութիւնը իրենց հոգու մէջ ամուր սեղմած «Մահ իմացեալ անմահութիւն է» ճշմարտութեան առջեւ խոնարհած մնացին մինչեւ

իրենց արեան վերջին կաթիլը հաւատարիմ մնալով Վարդանանց հաւատամքին՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ,

Յարութեան Տօնը արժեւորենք սերունդներու կեանքը մշակելով քրիստոնէական հաւատքով: Յարութեան խորհուրդով ապրեցան ու գործեցին մեր նախնիք եւ հոգեւոր ու բարոյական արժեքները դարձուցին կռուանը իրենց կեանքին:

Յարութեան Տօնը հրաւեր է ուղղուած բոլորիս անխտիր, որպէսզի մեր կեանքը ապրինք հաւատքով, մեր զաւակներու, երիտասարդներու եւ նորահաս ստատ ընտանիքներու կեանքը ներշնչենք քրիստոնէական հաւատքով: Յարութեան Տօնը մեզ կ'ուղղորդէ, որ մեզի տրուած կեանքը ունենայ ինքնութեան գիտակցութիւնը: Մեր քրիստոնէական հաւատքը իր մէջ կը կրէ հայրենական շունչը, մեր նախնեաց պատարագեալ կեանքի ոգին, մեր Սբ. Եկեղեցոյ առաքելութեան զգացողութիւնը: Եւ այս բոլորը կ'ընդունինք որպէս աստուածատուր շնորհներ:

Քրիստոս Յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

2 Փետրուար, 2018

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ

Եկեղեցւոյ տօնացոյցը բացէք եւ այնտեղ պիտի տեսնէք, որ Զատկուան յաջորդող Կիրակին տիտղոսագրուած է Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ: Եւ իրօք այդպէս ալ կը զգանք, որովհետեւ տակաւին Յարութեան Տօնին խորհուրդը շատ թարմ է մեր հոգեւոր էութեանը մէջ եւ այնպէս կը դիմաւորենք Կիրակին, որ իրօք կարծէք սովորականէն տարբեր Կիրակի մը ըլլայ եւ ինչու չէ կարծէք դեռ Զատիկ է մեր կեանքին մէջ կամ Զատկական տօնախմբութիւնը կը կրկնուի:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը այնքան խորն է իր բովանդակութեամբ, որ մենք յիրաւի կը զգանք որ թափուր գերեզմանէն կը ծնի նաեւ խոստումը յաւիտեական կեանքին:

Նոր Կիրակին կանխող շաբաթ օրուան Աւետարանը յատկանշական է, որովհետեւ ան կը խօսի Քրիստոսի եւ Պետրոսի միջեւ կայացած երկխօսութեան մասին. Քրիստոս երիցս կը հարցնէ Պետրոսի. «Միմոն Յովնանու կը սիրէ՞ս զիս»: Եւ Պետրոսի պատասխանը կ'ըլլայ երիցս նոյնը՝ «Այո, Տէր, եւ դուն գիտես որ կը սիրեմ քեզ»: Քրիստոս երիցս անոր կը պատասխանէ ըսելով. «Արածէ ոչխարներս», եւ վերջապէս կը պատգամէ անոր ըսելով. «Ետեւես եկուր» (Յովհ. 21:15-19)

Քրիստոսի եւ Պետրոս առաքելի միջեւ տեղի ունեցած այս երկխօսութիւնը կը խօսի այն մասին, որ Քրիստոսի Յարութենէն յետոյ Աստուծոյ խօսքին քարոզչութեան առաքելութիւնը պիտի շարունակէին Իր առաքելները, որոնք ապրեցան Քրիստոսի նմանակից կեանքով եւ իրենց նահատակութեամբ հիմքը դարձան Եկեղեցւոյ: Անոնց հետեւեցան Եկեղեցւոյ Հայրապետները,

սուրբերը, մարտիրոսները եւ այսօր այդ նոյն ճանապարհին քայլելու հրաւերը կը ստանանք մենք:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը մեր մէջ կը նորոգէ կոչումը՝ քրիստոնէավայել կեանքով ապրելու: Քրիստոնէավայել մեր կեանքը եւ կոչումը նորոգելու համար անհրաժեշտ է առնել գործնական քայլեր:

Մեր հոգեւոր կեանքը զարդարելու աղօթքով, մեր մտածումներուն կիզակէտը դարձնելու Քրիստոսի Աւետարանները, կեանքն ապրելու Քրիստոսի հետ՝ ճանապարհորդակից ըլլալով Քրիստոսի, պահելու եւ պահպանելու մեր հայրերուն կողմէ մեզի որպէս ժառանգ հասած աւանդները:

Երբ Քրիստոս Պետրոս առաքեալին կը պատգամէ. «Ետեւէս եկուր», ապա յստակօրէն մեզմէ կը սպասէ այս քայլերը, որպէսզի քայլենք Իր ուղեգծած ճանապարհէն, որն է. «Ճանապարհը, կեանքն ու ճշմարտութիւնը»: Աւագ Շաբաթն ու Զատիկուան Կիրակին մեզի համար եղան հոգեւոր վերածնունդի օրեր: Պայմանը մեր առջեւ այն է, որ մենք նոյն ոգին տարածենք մեր բովանդակ կեանքին վրայ եւ աւելին պարտականութիւն զգանք ոչ միայն անձնապէս ի Քրիստոս հաստատելու մեր կեանքը, այլեւ նոյն խորհուրդով լուսաւորելու մեր հարազատներու եւ բարեկամաց կեանքը:

Արդարեւ, Կրկնազատիկ է, երբ Յարութեան խորհուրդը կ'արտայայտուի մեր կեանքով. Կրկնազատիկ է, երբ մեր կեանքը կ'ապրինք Քրիստոսի նմանակցութեամբ. Կրկնազատիկ է, երբ մեր հաւատքին իւղը կը դարձնենք Աստուծոյ խօսքը եւ խաչին վրայ պատարագումը Քրիստոս Աստուածորդու:

8 Ապրիլ, 2018

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատրան Կիրակին է այսօր մեր Սուրբ Եկեղեցւոյ օրացոյցին համաձայն: Եւ այս անունը՝ Աշխարհամատուո, կ'ակնարկէ այն տեղի մասին, որը փաստօրէն դարձաւ ծննդավայրը քրիստոնէական առաջին Եկեղեցիին: Սա այն տեղն է, ուր Քրիստոս Իր առաքեալներուն հետ ունեցաւ Վերջին Շնորհքը, այնտեղ կատարեց Ոսնլուան եւ այնտեղ աղօթքի հաւաքուեցան առաքեալներն ու աշակերտները Քրիստոսի հրաշալի Յարութենէն յետոյ: Ուրեմն, այս Կիրակին իր Սուրբ Պատարագով կը վերյիշէ ծնունդը առաջին Մատուոին, եւ կոչ կ'ուղղէ մեզի, որպէսզի մեր էութեամբ դառնանք Մատուո, որպէսզի մեր մէջ բնակի Աստուած եւ մեր խօսքն ու գործը արտայայտէ աստուածային սէրն ու իմաստութիւնը:

Եւ ինչքան հոգեպէս մխիթարուած ենք եւ փառք կուտանք Աստուծոյ, որ արդարեւ մեր ժողովուրդի կեանքին մէջ քսաներորդ դարու սկզբին, 1906 թուականին ծնունդ առաւ նուիրական հաստատութիւն մը, որ գործնապէս ինքզինք արդարացուց բարի ու Աստուածահաճոյ առաքելութիւններով, հաւատքը՝ տեսականէն շօշափելի կեանքի վերածելով: Հաստատութիւնը որու մասին կ'ակնարկենք այդ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն է, որուն մասին խօսելով Հոգեւոյս Վազգէն Ա. հետեւեալ սահմանումը կուտայ.

«Նախախնամողն բարին Աստուած մեր ազգը բախտաւորեց 1906 թուականին ծնունդովը բարեսիրական

կազմակերպութեան մը, որ մկրտուեցաւ «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունով, անուն, որ շուտով դարձաւ համազգային առաքելութիւն մը, ի խնդիր մեր ժողովուրդի նիւթական, կրթական եւ բարոյական կարիքներու բաւարարման, այսպիսով հանդիսանալով մեր ազգի բարոյ հանճարին վաւերական արտայայտութիւնը (սեւ եօթանասուն եւ հինգ տարիներէ ի վեր) Փրկչին մեր Յիսուսի՝ բարի Մամարացիին անմահ առակը ունենալով իբրեւ գաղափարական հիմք:

Այսպէս է որ (երեք քառորդ դար շարունակ), աշխարհի վրայ, ուր որ հայ սիրտ մը կը բաբախէ, այնտեղ բոյն դրած է Հայկական Բարեգործական Միութեան գաղափարականը եւ առաքելութիւնը, իբրեւ ազգային - հասարակական առողջ ու հաւասարակշիռ մտածողութիւն եւ գործելու ուղղութիւն, հայ ազգի բնածին առաքինութիւնները միաձուլած քրիստոնէական գութի ու եղբայրսիրութեան շաղախով:

Թող անսասան ապրի, աճի ու ծաղկի մեր պատմութեան վերջին դարու մեծագոյն համազգային այս կազմակերպութիւնը, միշտ հաւատարիմ իր լուսաբնակ տեսլապաշտ հիմնադիրներու ոգիին, միշտ հաւատարիմ իր բարեսիրական ու կրթական, հայապահպան իդէալներուն, միշտ նեցուկ եւ զօրավիգ հայ ժողովուրդի առաքելական Մայր Եկեղեցիին եւ համայն հայ ժողովուրդին որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի»:

ԽՈՆԱՐՀԻՆՔ
ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ
ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌԱՋ

Տարի մը բոլորեցինք Ապրիլեան չորսօրեայ պատերազմէն ասդին եւ դեռեւս բոլորիս սրտերուն մէջ ցաւ կայ, քանզի ասելի քան հարիւր քաջամարտիկ հերոս մեր երիտասարդներու զոհաբերեալ կեանքը մեր աչքերուն առջեւ է: Անոնցմէ ամէն մէկուն կեանքը անտարակոյս ազգ մը պիտի դառնար: Չմոռնանք, որ անոնք մեր ազգի ու Հայրենիքի պահապանները դարձան իրենց արեան հեղումով, հայրենեաց սահմաններու պաշտպանութեան ի խնդիր:

Այսօր, աղօթքով կը խոնարհինք անոնց բարի յիշատակին առջեւ ուխտադրութեամբ որ մենք պիտի դառնանք կրողը իրենց ազնիւ երազներուն, ու մեր երակներուն մէջ պիտի զգանք իրենց արեան կանչը արթնութեան, ապրելու հայրենական տեսիլքով, Հայաստանի շունչով, ազատատենչ Արցախի ոգով, Սբ. Էջմիածնի խորհուրդով, մեր էութեան մէջ մշտապէս վառ պահելով Եղեռնի նահատակաց պատգամը՝ նոր կեանքին, եւ սերունդներուն փոխանցելու նաեւ հայ քրիստոնեայի մեր ինքնութեան վճռակամ հաւատքով ապրելու պատրաստակամութիւնը ի գին ամէն զոհողութեան:

Լոյս եւ օրհնութիւն յիշատակին մեր երիտասարդ նահատակներուն, եւ թող անոնց հոգին ճառագայթէ մեզմէ իւրաքանչիւրի էութեան ընդմէջէն: Աստուած պահէ մեր Հայրենիքն ու քաջարի զինուորները հայրենեաց պաշտպանութեանը ի խնդիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Բոլորս ալ իրազէկ ենք վերջին 10 օրերուն Հայաստանի մէջ տիրող խոր մտահոգութիւն պատճառող իրավիճակին: Մեր սրտի մաղթանքն ու աղօթքն է, որ մեր Սբ. Եկեղեցւոյ զաւակները՝ անխտիր բոլորը, ինչ տարիքի եւ ինչ պաշտօնի մէջ ալ կը գտնուին իրենց հոգու մէջ ամուր պահեն Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը, հեռու մնան զգայնութիւններէ, իրենց վերապահելով հանդերձ խօսքի արտայայտութեան արդար իրաւունքը: Այսպիսի պատգամ է յղուած նաեւ Վեհափառ Հայրապետի, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Եպիսկոպոսաց դասի կողմէ:

Մենք լիովին համոզուած ենք որ Աստուծոյ կամքը պիտի առաջնորդէ մեզ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակունք միաբանուած մնան եւ սէրն ու խաղաղութիւնը տիրէ մեր Մայր Երկրի մէջ, որուն հողը նուիրագործուած է սերունդներու կենաց պատարագումովը: Մայր Հայաստանէն հեռու այս ափերուն ապրող մեր ժողովուրդի զաւակունք չմնան անտարբեր ստեղծուած ծանր իրավիճակին եւ շարունակաբար աղօթենք, որ երկրի մէջ տիրողը ըլլայ փոխադարձ յարգանքը եւ խաղաղ երկխօսութեան քաղաքակիրթ վերաբերմունքը:

Արդ, մեր հրաւերն է բոլորիդ, որ միանաք մեզ «Տէր ողորմեա»-ի աղօթքի պահուն, որպէսզի Աստուծոյ Աջը հովանի ըլլայ մեր զաւակաց վրայ ամենուրեք եւ այսօր մանաւանդ Մայր Հայաստան ապրող մեր եղբայրներուն եւ քոյրերուն վրայ:

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

Արեւմտեան ափին եւ ի մասնաւորի Լոս Անջելոսին յատուկ հիմնահարցեր, որոնք անտարակոյս կը դժուարացնեն Առաջնորդարանի եւ Եկեղեցւոյ հեզասահ աշխատանքային ընթացքը:

Իր բոլոր առաւելութիւններով մէկտեղ յատկապէս Լոս Անջելոսը ծանրաբեռնուած է անչափելի մարտահրաւերներով, որոնք իրապէս կը դժուարացնեն եւ կամ ուղղակիօրէն կը խանգարեն Առաջնորդարանի, Եկեղեցւոյ եւ համայնքի առողջ գործընթացը:

Առաջին եւ ամենէն գլխաւոր մտահոգութիւնը Թեմական կառոյցին ներս Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչական բաժանումն է: Իրականութիւն է, որ ներկայիս համայնքին մէջ ողջունելի ընդհանուր խաղաղութիւն մը եւ համերաշխ ոգի մը կը տիրէ, բայց վարչական բաժանումը իր ժխտական դերակատարութիւնը կ'ունենայ ընդհանրապէս Եկեղեցւոյ առողջ գործունէութեան վրայ: Եկեղեցին փաստօրէն կը գործէ երկու գլուխներով եւ անոր հետեւող վարչական առանձինն դրոյթներով, որ կը բացատրէ այն մասին, որ աշխատանքը երկակի իմաստով կ'իրականանայ եւ բազում առումներով նիւթական մսխում եւ ուժերու վատնում կ'արձանագրուի: Աղօթող եւ յուսալից ենք, որ փոխադարձ սիրոյ եւ յարգանքի մթնոլորտ վերջիվերջոյ պիտի պարտաւորեցնէ որ Եկեղեցւոյ վարչական միութիւնը Հիւսիսային Ամերիկայի տարածքին իրականանայ: Արդարեւ, բաժանումի բանաւոր պատճառ ալ կարելի չէ ներկայացնել:

Երկրորդ գլխաւոր մտահոգութիւնը Թեմական կառոյցէն ներս աղանդներու առկայութիւնն է: Երեւոյթ մը, որ ոչ միայն մեր եկեղեցիներուն ու համայնքներուն վրայ կ'ազդէ, այլեւ բոլորին՝ անխտիր: Երկրով մէկ տարածուած են հարիրներով աղանդաւորական շարժումներ: Բնական է, Եկեղեցին իր քարոզչութեամբ եւ գործոն առաքելութեամբ պէտք է զօրակցի հաւատացեալներուն, բայց անկարելի է արմատապէս լուծել այս հարցը, որ արդէն կը խանգարէ ընդհուպ մինչեւ իսկ հայ ընտանիքին ամուր կառոյցը: Հոգեւորականը իրեն զօրավիզ պիտի ունենայ նաեւ իր համայնքը աղանդաւորական վտանգը հեռացնելու համար մեր ժողովուրդի կեանքէն:

Երրորդ գլխաւոր հարցը Թեմական կառոյցէն ներս առկայ խառն ամուսնութիւններու պարագան է: Երեւոյթ մը, որմէ խուսափիլ կարելի չէ: Ինչպէս կարելի է խառն ամուսնութիւններով կազմուած զոյգերը ամբողջութեամբ կապել Եկեղեցիին ու համայնքին: Հոգեւորականին կողմէ համապատասխան պայմանները կը դրուին այս պարագային, երբ կողմերէն մէկը ոչ հայ է ծագումով: Բայց չմոռնանք այն հանգամանքը, որ նոյն անձը որ ընդունած է անդամակցիլ Հայ Եկեղեցւոյ շատ բնականօրէն պիտի ունենայ նաեւ իր ակնկալութիւններն ու սպասումները, որոնց ոչ մէկ ձեւով յագուրդ կու տանք: Եւ խօսքը միայն լեզուինը չէ որ կը վերաբերի, այլ ընդհանրապէս:

Չորրորդ գլխաւոր հարցը, որուն առջեւ կը գտնուի յատկապէս լոսանջելոսահայութիւնը, այդ նոր սերունդի մօտ առկայ այն խնդիրներն են, որոնք արդէն իսկ համատարած են: Եւ որոնք են այդ խնդիրները. սեռային

կեանքին հետ կապուած այլանդակութիւնները, թմրեցուցիչներու օգտագործումը, սպանութիւնները ու բանտարկութիւնները քաղաքական ապաստանեալներու եւ տակաւին անթիւ խնդիրները, որոնք իրօք կը խեղդեն համայնքի կեանքը եւ իրօք չունինք համապատասխան լուծման բոլոր միջոցները: Անշուշտ անհամեմատօրէն քիչ են վերոյիշեալ պարագաները համայնքի մեծ թիւին հետ բաղդատած: Բայց քիչը մեզի համար շատ է:

Հինգերորդ գլխաւոր հարցը, որուն ճնշումի տակ կը գտնուի լուսանջելոսահայութիւնը այդ մնայուն նուիրահաւաքներն են, ըլլան անոնք Հայաստանի համար թէ սփիւռքեան այլ համայնքներու համար: Չհամակարգուած նուիրահաւաքները իրօք կը խանգարեն լուսանջելոսահայութեան կեանքը այն իմաստով, որ համայնքը արդէն կը դժուարանայ հոգալ իր կարիքները եւ երբ կառոյցները տկարանան, այն ժամանակ արդէն իսկ հիմնապէս կը խախտի նաեւ այն կառոյցը, որ նուիրահաւաքը կը կազմակերպէր եւ այդ կը մատակարարէր ուղղեալ հասցէին:

Վեցերորդ մարտահրաւերը լուսանջելոսահայութեան կեանքին մէջ հայ դպրոցներու առաքելութիւնն է, որը նիւթական լուրջ պարտաւորութեանց տակ կը դնէ համայնքը: Արտաշխարհի մէջ այս առաքելութիւնը առաջնահերթօրէն կ'իրագործուի Արեւմտեան ափին ապրող մեր ժողովուրդի կեանքին մէջ, որը տասնեակ միլիոններու յանձնառութիւն մըն է, եւ որուն հաւասարը ոչ մէկ այլ համայնք ունի: Այս պարագան կարելի չէ անտես առնել:

Եօթներորդ մարտահրաւերը, որ անպայման պիտի մտահոգէ բոլորս այդ ալ եւ արեւելքի եւ ի մասնաւորի

Հայաստանէն արտագաղթն է ի «շահ» Արեւմտեան Թեմին: Այս երեւոյթ մըն է որ ունի իր ե՛ւ դրական ե՛ւ բացասական երեսները: Դրական է այն առումով, որ համայնքները մնայունօրէն կը նորոգուին եւ կը համալրուին նոր ոյժերով, բայց այդ կը կատարուի ի վնաս Միջին Արեւելքի մեր համայնքներու թիւի նուազեցման եւ Հայրենիքի մեր ժողովուրդի բնակչութեան նուազեցման:

Ութներորդ հիմնահարցը այս աճող հսկայ համայնքի մէջ տարեցներու բնակարաններու անբաւարարութիւնն է: Օրէցօր կը բարձրանան թիւը տարեցներու եւ խիստ անհրաժեշտութիւն ունինք նոր կառոյցներու: Հազարաւորներ պարտադրեալ կ'արձանագրուին ոչ հայկական հաստատութիւններու մէջ, ուր մեր տարեցները գրկուած կը մնան այն ջերմ մթնոլորտէն, որ կը վայելէն Արարատ Տան հաստատութենէն ներս: Բնական է կատարած ենք հովիւներու նշանակում զանազան տուններու վրայ, բայց ոչ մի կերպ կարելի չէ բաղդատութեան եզր հաստատել: Այս առաքելութիւնը կամ հիմնահարցը յառաջիկայ տարիներուն պիտի ըլլայ լոսանջելոսահայութեան եւ առհասարակ Արեւմտեան ափ ապրող մեր ժողովուրդի համար գլխաւոր նպատակ:

Իններորդ հիմնահարց մըն է մեծ թիւով կարգաւոյժ եկեղեցականներու ներկայութիւնը, որը իրօք կը խանգարէ Եկեղեցոյ առաքելութիւնը: Անոնք պահելով իրենց կարգազուրկ եղած ըլլալու պարագան՝ անօրէն կերպով կը կատարեն խորհրդակատարութիւններ, որը բնականօրէն ընդհանուր իրավիճակի մէջ կը ներկայանայ որպէս նոր երեւոյթ մը եւս, որը իրօք ցաւ կը պատճառէ մեր ժողովուրդին, որովհետեւ կատարուող արարողութիւնները անվաւեր են:

Մարտահրաւերնեւ շարքը անվերջ է, որոնց շարքին կարելի է նշել համայնքի կեանքէն ներս ներքին բաժանումները, ի նկատի առնելով զանազան երկիրներէն ժամանած ժողովուրդը, որոնք իրենց հետ կը բերեն իրենց յատուկ բարքերն ու սովորութիւնները: Բնականօրէն առկայ է ոչ միայն արեւալահայերուն եւ արեւմտահայերուն պարագան, այլեւ ընդհանրապէս ընդհանուր մտածողութիւններն ու դեռ այս բոլորի հետ առկայ բաժանումը մինչեւ 80-ական թուականները հաստատուած ամերիկահայ համայնքի մեջէն, որոնք եղած են հիմնադիրները գաղութներու եւ եկեղեցիներու: Դեռ այս բոլորի շարքին չենք յիշած թերթերն ու հաստատութիւնները իրենց իւրայատուկ նիւթական յանձնառութիւններով, հարիրէ աւելի կազմակերպութիւններն ու օրական դրոյթով կազմակերպուող տասնեակէ աւելի մեծ ու փոքր ձեռնարկները: Վերջապէս այս բոլորին մէջ ունինք նաեւ Կլէնտէյլ քաղաքին մէջ կառուցուելիք նոր թանգարանի մեծածախս ծրագիրը:

Ահաւասիկ այս ընդհանուր իրավիճակի մէջ կը գործէ Առաջնորդարանը որպէս գլխաւոր կառոյցը իր բոլոր պարտականութիւններով որպէս արտաշխարհի մեծագոյն համայնքը Հայաստանէն դուրս:

20 Ապրիլ, 2018

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻ ՆԱԽՕՐԷԻՆ

Քրիստոսի Համբարձման Տօնին նախօրէին կը գտնուինք եւ անգամ մը եւս մեր հոգիներուն մէջ կ'արձագանգէ Տիրոջ պատգամը ուղղուած Իր առաքեալներուն եւ նոյնքան՝ բոլորիս, նոր օրերու առաքեալներուս:

«Գացէք ուրեմն, աշակերտ դարձուցէք բոլոր ազգերը, մկրտեցէք զանոնք Հօր եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Սորվեցուցէք անոնց պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզի, եւ ահաւասիկ ես ձեզի հետ եմ բոլոր օրերը՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. 28):

Ուրեմն կարելի է ըսել, որ այս օրերը առաքելական օրեր են, որովհետեւ մեր մէջ կը նորոգուի ուխտը՝ քարոզական աշխատանքին, տարածելու Աստուծոյ խօսքը, ապրելու Քրիստոսի նմանակից կեանքով եւ դառնալու ապրող Աւետարան:

Նոր աշխարհի մէջ կ'ապրինք, երբ գիտութիւնը ամէն օր նոր յաջողութիւններ կ'արձանագրէ, բայց կարելի չէ ըսել, որ հոգեւոր եւ բարոյական արժէքները առաջնային են հասարակութեան համար:

Ուրեմն, հետեւինք Քրիստոսի պատգամին եւ դառնանք Անոր խօսքը կրողն ու տարածողը եւ այն ժամանակ կը դառնանք նոր կեանքին ճարտարապետը՝ համաձայն Աստուծոյ օրէնքին: Աստուծոյ խօսքը՝ պատասխանն է մեր բոլոր հարցերուն. հեռու չմնանք Աստուծմէ, որպէսզի լուսաւոր մնայ մեր կեանքը:

Անցնող օրերուն մեր Սբ. Եկեղեցւոյ զաւակունք գործնապէս ապրեցան քրիստոնէայ հաւատքը, երբ մենք ականատես դարձանք թէ ինչպէս Մայր Հայաստան

ապրող մեր երիտասարդությունը քաղաքակիրթ եւ խաղաղ ցոյցերով արդարութեան ի խնդիր իր ձայնը բարձրացուց: Մեզի կը մնայ խոր հաւատքով աղօթել, որ մեր երկիրը մնայ խաղաղութեան մէջ, երբ կը կերտուի Նոր Հայաստանը:

Սիրելի բարեպաշտ հայորդիք, լսենք Քրիստոսի պատգամը, քարոզենք Աստուծոյ խօսքը, ապրինք Աստուծոյ պատուիրաններուն համաձայն կեանք մը եւ այն ժամանակ մեր կեանքը պիտի ըլլայ օրհեալ ու փառաւոր: Մեր աղօթքներուն եւ մտածումներուն սեւեռումը դարձնենք Մայր Հայաստանն ու Սբ. Էջմիածինը եւ ի մասնաւորի մեր երիտասարդութիւնը, որոնց կեանքը պարտ ենք լեցնել հոգեւոր եւ բարոյական, ազգային ու հայրենասիրական արժէքներու գիտակցութեամբ:

6 Մայիս, 2018

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Քրիստոսի հրաշալի Յարութեան Տօնէն յիսուն օրեր անց Եկեղեցին կը տօնախմբէ Հոգեգալուստը: Եկեղեցւոյ կեանքին մէջ կը ներկայացուի կատարուած ճշմարտութիւնը, թէ ինչպէս մինչ Առաքեալները նստած էին Վերնատանը Սբ. Հոգին կիջնէ Երկինքէն ու բոլորի հոգիները կը զարդարէ երկնային ու աստուածային շնորհքներով, որպէսզի հաւատքով գտեանդուած երթային աշխարհի կեանքին մէջ եւ տարածէին աստուածային լոյսը:

Քրիստոս, Աստուածորդին, Իր երկրաւոր կեանքի օրերուն քանիցս խօսած եւ յիշեցուցած է Իր Առաքեալներուն թէ ինչպէս Մխիթարիչը այցի պիտի գար իրենց եւ անոնց մէջ բոցավառէր հոգեւոր կրակը, եւ անով իսկ Առաքեալները դառնային տարածողները Աստուծոյ խօսքին:

Ահաւասիկ այս ճշմարտութեան իրազեկ դառնալով կ'ըմբռնենք այն, որ Հոգեգալստեան Տօնը կը խորհրդանշէ սկիզբը Եկեղեցւոյ առաքելութեան, որ շարժում ստացաւ Առաքեալներով եւ անընդհատ կը կրկնուի այն նոր առաքեալներով, երբ մենք եւս կը զգանք ներգործումը Սբ. Հոգիին մեր էութեան մէջ: Սա այն պահն է, որ կարելի չէ թարգմանել բառերով, որովհետեւ անչափելի ու անհասանելի խորհուրդ կը պարունակէ իր մէջ Հոգեգալուստը: Սա չի նշանակէր որ կը դժուարանանք ըմբռնել խորհուրդին իմաստը: Եւ ինչպէս Առաքեալներու համար կոչումի օրն էր Հոգեգալուստը, ապա այդպէս ալ իւրաքանչիւրիս համար կոչումի օրն է այս Տօնը:

Ամէն անգամ երբ Եկեղեցին կը տօնախմբէ Հոգե-
գալուստը, եւ անձնապէս կ'ապրիմ մինչեւ իմ հոգիին
խորքը եւ ողջ էութեանս մէջ Երկնային կրակին էջքը,
որ կը նորոգէ կոչումս ծառայութեան, որպէսզի քայլերս
շարունակեմ ուղղել դէպի Աստուած եւ ժողովուրդը:

20 Մայիս, 2018

Մագրամէնթօ

ՎԱԶԳԷՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ
ՍՈՆԹԵԲԵԼՈՅԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ
ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ
(1968թ. Մայիս 17, Մոնթեֆելլո)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս Յարեալ ի մեռելոց. Մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ:

Մենք այս սուրբ աւետիսով կը սկսինք մեր խօսքը, նախ որովհետեւ նոր տօնեցինք միասին Սուրբ Զատիկը եւ կը գտնուինք ամենքս տակաւին Քրիստոսի Յարութեան շնորհներուն ներքեւ:

Բայց այս աւետիսով կը սկսինք մեր խօսքը նաեւ այն բանի համար, որ այս պահուն, մեր այստեղ ներկայութիւնը այս սքանչելի, խրոխտ եւ անսասանելի նահատակաց Յուշարձանին առջեւ կը խորհրդանշէ մեր ազգի, մեր ժողովուրդի մահուան եւ Յարութեան խորհուրդը: Թէեւ յիսուն եւ աւելի տարիներ անցան արդէն այդ ողբերգութենէն, բայց անշուշտ մեր ազգը եւ Սուրբ Եկեղեցին եւ Հայաստանի մէջ, եւ ամէն տեղ աշխարհի ճամբաներուն վրայ, ուր հայ սիրտ մը կը բաբախէ, պիտի չկրնայ մոռնալ մեր նահատակները: Միշտ պիտի ուզենք հաւաքուիլ, փնտրել սրբավայր մը, որպէսզի մեր մոմը վառենք եւ մեր աղօթքը բարձրացնենք դէպի երկինք, մեր բիւրաւոր եւ անմեղ զոհերուն հոգիներուն

խաղաղութեան եւ հանգստեան եւ արդարութեան համար:

1915 թուականին, այդ սեւ օրերուն, ամբողջ երկիր մը բնաջինջ եղաւ, քարուքանդ եղան մեր եկեղեցիները եւ վանքերը, եւ ամբողջ ժողովուրդը մը մահուան անդունդը գլորուեցաւ անասելի տառապանքներու մէջ: Սակայն, սիրելի հայեր, Աստուած մեզ բոլորովին չլքեց, եւ ինչպէս Քրիստոս, երբորդ օրը մեռելներէն Յարութիւն առաւ, այնպէս ալ հայ ժողովուրդը, երեք տարի յետոյ Յարութիւն առաւ եւ կոչուեցաւ նոր կեանքի, գրեթէ հրաշքի համազօր պայմաններու մէջ: 1915-ի Ապրիլին յաջորդեց 1918-ի Մայիսը: Եւ այնպիսի մէկ պահու, երբ երկրորդ եղեռն մը կը սպառնար մեր վերապրող ժողովուրդին, Արեւելահայաստանին, արիւնաքամ ժողովուրդի մեր զաւակները մէկտեղուեցան, բռնեցքի մը վերածուեցան անխորտակելի եւ ստեղծեցին, կոթողեցին հայոց պատմութեան երկրորդ Աւարայրը՝ Սարդարապատի ճակատամարտը:

Հայ ժողովուրդը փրկուեցաւ ստոյգ մահէ «իւր քաջ որդւոց սուրբ արիւնով»: Գիտէք, այսպիսով հռչակուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը Մայիսի 28-ին:

Հայոց պատմութեան անիւր վերջապէս շրջուեցաւ եւ հայ ժողովուրդի առջեւ բացուեցաւ, Սարդարապատի յաղթանակով, կեանքի նոր ճանապարհ: Իսկապէս արիւնաքամ եղած էր մեր ժողովուրդը ահաւոր թշուառութեանց եւ դժբախտութեանց մէջ. որբի եւ ողբի Հայրենիք մըն էր այն օրերուն եւ ահաւոր արտաքին սպառնալիքներով շրջապատուած, բայց ճշմարտապէս, հերոսական օրեր էին անոնք:

Հայ ժողովուրդը հազիւ իր վերքերը կարողացեր էր ամոքել եւ երազել ապագայի մասին, ահա նոր սեւ ամպեր կուտակուեցան հայոց աշխարհի վրայ, երբ հայ ժողովուրդին գրեթէ պիտի պարտադրուէր Ալեքսանդրապոլի սեւ դաշնագիրը, որ բարեբախտաբար չգործադրուեցաւ, նորէն հրաշքի համագործընկերութիւններով, եւ հայ ժողովուրդը իր խաղաղ կեանքը կարողացաւ շարունակել ի նորաստեղծ Մայր Հայրենիքի, յաւիտենական Հայաստանի հողին վրայ:

Մեր նոր պատմութեան ճշմարտութիւններէն մէկն է, սիրելիներ, որ եթէ Ալեքսանդրապոլի դաշնագիր կոչուածը ի գործ դրուէր, մեր ազգը պիտի կորսնցներ այն ինչ որ շահած էր Սարդարապատի ճակատամարտին եւ Մայիս 28-ը սուգի մէջ պիտի թաղուէր: Հիմնականը եւ կարեւորը այն է, որ անգամ մը եւս հայ ժողովուրդը այդ օրերուն գտնուեցաւ, ինչպէս Աւետիս Ահարոնեան պիտի ըսէր. «Մեր ժանիքաւոր ճակատագրի առաջ ենք կանգնած ճակատ առ ճակատ»: Եւ սակայն Աստուած մեզի խնայեց եւ հայ ժողովուրդը այդ մահագոյժ սեւ թուղթը պատռեց եւ ընթացաւ դէպի յառաջ՝ անվտանգութեան, խաղաղութեան եւ նոր զարգացման ու յառաջդիմութեան ճանապարհով:

Սիրելի ժողովուրդը, մենք կու գանք մեր վերածնած յաւիտենական Մայր Երկրէն, Սբ. Գրական Արարատեան աշխարհէն եւ Սբ. Էջմիածնէն եւ այս նուիրական առիթով ձեզի բոլորիդ կը բերենք ողջոյն, հայրական ողջոյն եւ աստուածային օրհնութիւն: Մենք հոգեկան անհուն մխիթարութեամբ մեզի հետ բերինք այն երկու խաչքարերը, որպէսզի անոնք զետեղուին ձեր կատա-

քած այս սքանչելի Յուշարձանին հիմքին մէջ, ու այսպիսով, ինչպէս շատ գեղեցիկ կերպով ըսուեցաւ քիչ առաջ, Յուշարձանը առաւել կեանք, առաւել իմաստ եւ խորհուրդ կը ստանայ իբրեւ Յուշարձան աղօթքի եւ ուխտի:

Այս առիթով ես չեմ կրնար չբերել նաեւ ձեզի բոլորիդ, հարազատ զաւակներ հայ ժողովուրդի, չեմ կրնար ձեզի չբերել վկայութիւնը, թէ այսօր, մանաւանդ այս վերջին տարիներուն՝ ներքին հոգեկան պոռթկումներով եւ հայկական ազգային գիտակցութեան բիւրեղացումով, բոլորը այնտեղ, ինչպէս դուք այստեղ, ոգեշնչուած են նոյն զգացումով դէպի մեր նահատակները եւ նոյն սպասելիքներով եւ երազներով դէպի մեր առաւել պայծառ ապագան:

Ահա ձեր այդ հարազատ եղբայրներէն եւ քոյրերէն ընդունեցէք ողջոյն եւ վստահ եղէք, որ անոնց հոգիները ձեզի հետ են, մեզի հետ են այս պահուն: Ես ձեզի բացարձակ կերպով կը վստահեցնեմ, որ Մեր վերադարձին Մեզի հանդիպողները այնտեղ, մտաւորականներէն սկսած մինչեւ պարզ շինականները, պիտի չհետաքրքրուին ուրիշ հարցով, Մեր շրջագայութեան ընթացքին ուրիշ երեւոյթներով, այլ մանաւանդ մէկ բանով պիտի հետաքրքրուին՝ թէ ինչպէս տեղի ունեցաւ մեր այս հանդիսաւոր այցը այսօր, Մոնթերելլոյի մէջ: Այս է ճշմարիտ հոգեկան դիմագիծը եւ պատկերը այսօրուան հայաստանցի ձեր քոյրերուն եւ եղբայրներուն:

Միւրելի ժողովուրդ, այս պահուն ես նաեւ նուիրական պարտականութիւն կը զգամ եւ ձեր անունով եւ համայն մեր Եկեղեցւոյ եւ ժողովուրդին անունով մեր

երախտագիտութեան զգացումները ներկայացնել Մոնթերելլոյի Քաղաքապետին եւ ամերիկեան պատկան իշխանութիւններուն, որոնք ձեզի աջակցեցան, ձեզի նեցուկ կանգնեցան եւ հնարաւոր եղաւ այս Յուշարձանի կառուցումը ամերիկեան հիւրընկալ, բարի հողին վրայ: Ես սիրով ինձ հետ պիտի տանիմ Մբ. Էջմիածին, Մոնթերելլո քաղաքի բանալին, զոր յանձնեց յարգելի Քաղաքապետը եւ զայն պիտի զետեղեմ մեր Տաճարի գանձարանին մէջ, որպէսզի ան տեւապէս օրհնութեանը ներքեւ գտնուի յաւիտենական Մբ. Էջմիածնի: Եւ Մենք միշտ պիտի մնանք աղօթող, ամերիկեան այս մեծ երկրի, ինչպէս նաեւ Մոնթերելլո քաղաքի խաղաղութեան, բարօրութեան եւ երջանկութեան համար:

Միբելի ժողովուրդ, ահա այսպիսի զգացումներ մեզ կը յաճախեն այս պահուս, եւ այսպիսի մտորումներ, յուզումներ եւ երագներ կը փոթորկեն բոլոր սրտերը համայն հայութեան: Մենք այլեւս պատճառ չունինք իբրեւ ժողովուրդ եւ իբրեւ Եկեղեցի զմեզ նկատելութշուառ եւ անտեր կամ հուսահատ: Մեր Եկեղեցիին եւ մեր ազգին գլխուն վրայէն անցան ահաւոր փոթորիկները եւ մենք ամէն պատճառ ունինք աւելի լաւատես ըլլալու թէ՛ դէպի մեր ներկան, եւ թէ՛ մանաւանդ դէպի մեր ապագան: Իր խօսքը վերջացնելով Հայոց Հայրապետը կ'ուզէր ըսել՝ «Ով ժողովուրդ հայոց, եւ պիտի գայ յանուր կեանքի արշալոյսը վառ հագած» եւ «Մենք՝ զաւակներդ, օգոստոսափառ պիտի կերտենք նոր արշալոյս»:

Յարգանք եւ լոյս եւ խաղաղութիւն հայոց բիւրաւոր նահատակաց հոգիներուն, յարգանք եւ օրհնութիւն լոյս վերածնած հայ ժողովուրդին եւ յաւիտենական մեր

Մայր Հայաստանին, արդարութիւն հայ ժողովուրդին, եղբայրացում բոլոր ժողովուրդներուն եւ խաղաղութիւն համայն աշխարհին, այժմ եւ յաւիտեանս ամէն»:

Վեհափառ Հայրապետը ապա հանդիսաւորապէս Սբ. Էջմիածնից իր բերած երկու խաչքարերը օրհնութեամբ եւ աղօթքով զետեղում է նահատակաց Յուշարձանի պատուանդանի երկու կողմերի վրայ: Խաչքարերի վրայ փորագրուած են. «Օրհնութիւն հայ նահատակաց, Սբ. Էջմիածնէն»:

Այնուհետեւ հազարաւոր ժողովուրդ, յարգանքով եւ երկիւղածօրէն, ամենայն կարգապահութեամբ, անցնում է նահատակաց Յուշարձանի երկնասլաց կամարների տակով՝ որպէս յարգանքի պարտք եւ ուխտ:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ՝ ՈԳԻՆ Է ՀԱՅՈՒԹԵԱՆ

«Ամեն անգամ, երբ մենք՝ հայերս, ճակատագրական պահի մը, իրադարձութեան մը կամ վտանգի մը առջեւ գտնուինք այստեղ կամ այլուր, Սարդարապատի ոգին է, որ պէտք է արթննայ մեր մէջ, որպէսզի մենք չշեղուինք մեր պատմութեան, մեր ժողովուրդի զարգացման ուղիղ ճանապարհէն: Սարդարապատի յաղթանակը երեկուան, այսօրուան համար չէ միայն, այլ բոլոր հնարաւոր Հայաստաններու համար է այժմ եւ յաւիտեան»: Վազգէն Ա.

Սարդարապատը մեր ժողովուրդի կեանքին մէջ կարելի է ըսել որ պատմութեան ամենէն վճռորոշ ժամանակներէն մէկն է: Կարելի է հաստատօրէն ըսել որ Սարդարապատը քսաներորդ դարուն Վարդանանքն է: 100 տարիներ առաջ, տակաւին Մեծ Եղեռնէն հազիւ մի քանի տարիներ անց, մեր ժողովուրդը ինքզինք անգամ մը եւս գտաւ ահաւոր վտանգի մը առջեւ:

Ազգի զաւակները համախմբուեցան Սբ. Էջմիածնի հովանիին տակ եւ օրուան Հայրապետին Երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանցի սրտառուչ պատգամներու առաջնորդութեամբ գոտեպնդեցին հայոց քաջարի զինուորները ազատագրելու համար հայրենի հողը: Եւ Սարդարապատի կռուի դաշտ մեկնող քաջարի հայ զինուորները իրենց հոգու մէջ կրեցին անլուրի դօղանջը Սբ. Էջմիածնի զանգերուն եւ կերտեցին ճանապարհը նոր Հայրենիքին, որուն երկինքին վրայ պարգուեցաւ

եռագոյն դրօշը՝ խորհրդանիշը յարուցեալ մեր ժողովուրդին: Այս պատմական իրողութիւնը հիմքն է այն ճշմարտութեան, որ Սարդարապատի եւ Հայոց Առաջին Հանրապետութեան եւ եռագոյն դրօշի անփոխարինելի ծննդավայրը Սր. Էջմիածինն է:

Պատմութեան իրազեկ պէտք է դառնանք արժեւորելու համար ներկան եւ ի մասնաւորի ունենալու գիտակցութիւնը ու ներքին զօրութիւնը՝ վաղուան արշալոյսը կերտելու:

“Սարդարապատի յաղթանակը երեկուան, այսօրուան համար չէ միայն, այլ բոլոր հնարաւոր Հայաստաններու համար է, այժմ եւ յաւիտեան”:

Սարդարապատը կը խորհրդանշէ Հայ Ժողովուրդի ամբողջականութիւնը: Կռուի դաշտ մեկնող հայ քաջարի զինուորները միաւորող գլխաւոր հզօր ու հոգեւոր պատգամը արձագանգեց Սր. Էջմիածնի Սր. Խորանէն: Այսօր, նոյն պատգամը կը հնչէ Սր. Էջմիածնէն: Հայոց հայրապետներու ձայնն ամրագրուած է Իջման սեղանի կանթեղի լոյսին մէջ եւ անմատ ոգին է այն յաւերժական Հայ Ժողովուրդին:

Սարդարապատի ոգին կ’ապրի նաեւ այսօր եւ այն ակներեւ է վերանկախացեալ մեր Մայր Երկրի ներկայութեամբ, ազատատենչ Արցախի ժողովուրդի ստեղծագործ կեանքով: Եւ ինչպէ՞ս պիտի տօնախմբենք պատմութեան այս լուսաւոր էջը, Սարդապատի յաղթանակը: Պատասխանն այն է, որ ազգովին մեր նորահաս սերունդի զաւակները պիտի առաջնորդենք դէպի Մայր երկիր, որպէսզի անոնք հարիւրապատիկ զգան հայրենի

հողէն իրենց սրտին հասնող տրուփիւնը եւ ուխտ կատարեն ապրելու հայ քրիստոնէայի հաւատքով եւ նախնեաց տեսիլքով:

Մեր պատգամը, ողջ հայ երիտասարդութիւնը ուղղորդել դէպի Հայրենիք՝ Հայաստան, Սբ. Էջմիածին: Մեր հայրերու հողին ոտք պիտի դնէ հայ երիտասարդը, որպէսզի իր հոգիին մինչեւ խորքը զգայ հոգեւոր Էլէկտրականացումը՝ Նոր Հայաստանը, որ կը կանչէ իր զաւակները ապրելու Հայաստանով:

Սարդարապատը անունն է նոր հայութեան: Անոր խորհուրդը կը մերժէ անուններ որոնք հատուածականութիւն կը թելադրեն ու կը բաժնեն մեր ազգի զաւակները:

Սարդարապատի հերոսամարտի յաղթանակը՝ հիմնաքարն է յաւիտենական Հայաստանին: Սարդարապատը հաւատամքն է մեր ազգին, ով կը հաւատայ Սարդարապատին, ինքնաստինքեան իր վրայէն կը նետէ հատուածականութեան մը պատկանած ըլլալու աղքատ մտածողութիւնը եւ կը փարի ճշմարիտին՝ Հայաստանին, յաւերժական Հայրենիքի գաղափարականին ու տեսիլքին, որուն սրտին է ամրացած Սբ. Էջմիածինը, խորհուրդը մեր ինքնութեան:

Սբ. Էջմիածինը՝ խորհուրդն է մեր ինքնութեան: Խոնարհուինք Սբ. Էջմիածնի խորհուրդին առջեւ, որպէսզի Աստուած բարձրացնէ մեզ եւ առաջնորդէ մեր ազգը դէպի յաւերժութիւն:

7 Ապրիլ, 2018

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ 100-ԱՄԵԱԿ

Սարդարապատի 100-ամեակին ու Հայոց Հանրապետության 100-ամեակին նուիրուած այս Յուշարձանը մնայունօրէն պիտի յիշեցնէ բոլոր այցելուները մեր ազգի պատմութեան այն յիշարժան էջի մասին, երբ ազգի մը զաւակները յանուն իրենց հաւատքի ու Հայրենիքի իրենց կեանքը պատարագեցին: 20-րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը կատարուեցաւ ընդդէմ հայոց, 1915 թուականին կազմակերպուած Օսման պետութեան կողմէ: Քիչ ժամանակ անց, երբ տակաւին ցաւի ու տառապանքի մէջ էր մեր ազգը եւ ամենուրեք որբեր ու տեղահանուած ժողովուրդի մը զաւակները կը փորձէին իրենց կեանքը վերսկսիլ, ահա այս անգամ վտանգը կը հասնի Արեւելեան Հայաստան, երբ քաջութեան իւրօրինակ կեցուածքով, հայ զինուորներ Սբ. Էջմիածնի խորհուրդով առաջնորդուած կը փրկեն Հայրենիքը եւ վերջնականօրէն յետ կը մղեն թշնամու զօրքերը եւ Սարդարապատի ճակատամարտով կը հաստատուի ծնունդը Հայոց Առաջին Հանրապետութեան:

Հարիւր տարիներ յետոյ, այսօր, աշխարհասփիւռ մեր ժողովուրդը, հակառակ արտաքին բոլոր տեսակի մարտահրաւերներու, կը շարունակէ ապրիլ վերածնեալ եւ յաղթանակած կեանքով:

Այս յուշարձանը, որուն նախաձեռնութիւնը յանձն է առած Տիգրուէ հաստատութիւնը, կեանք կը խորհրդանշէ եւ անտարակոյս պիտի դառնայ դէպի իրեն հրաւիրող մագնիսը, որպէսզի այս կեանքէն բաժնուող մեր ազգի զաւակներու հոգիները իրենց խաղաղութիւնը

գտնեն Յարութեան խորհուրդին ներքոյ, որովհետեւ
Յուշարձանը ինքնին կը խորհրդանշէ վերածնունդ եւ
նոյն խորհուրդը կը ներշնչէ նաեւ բոլորիս:

22 Մայիս, 2018

ՊԱՏԳԱՄ՝ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒՆ

Սիրելի Խնամակալ Մարմիններու անդամներ, Տնօրէնութիւններ Ուսուցչական կազմեր, ծնողներ, հիւրեր եւ ի մասնաւորի իմաստուն շրջանաւարտ աշակերտներ Մանուկեան-Տէմիրձեան եւ Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական դպրոցներու:

Ինչ մեծ ուրախութիւն է մեզի համար ողջունել ձեզի այս երեկոյ, երբ սկիզբը կը հաստատուի նոր առաքելութեան մեր, որուն գլխաւոր նպատակն է շրջանաւարտ աշակերտներուն մատուցել աղօթքի կեանքով ապրելու պատգամը, հաւատքի խորհուրդը դարձնելու ձեր կեանքի զօրութիւնը, եւ կատարելութիւնը ըմբռնելու որպէս տեսիլքը՝ ձեր կեանքի ճանապարհին:

Դուք կ'աւարտէք Երկրորդական Վարժարանը, բայց յիշեցէք որ կեանքը ձեր առջեւ բացուած դպրոց մը պիտի մնայ, ուրկէ ներս ենք մտած եւ ամէն օր սորվելիք ունինք: Խորքին մէջ դուք մուտք կը գործէք աւելի մեծ դպրոցէ մը ներս, որը լեցուն է մարտահրաւերներով, փորձութիւններով, անակնկալներով, յաջողութիւններով: Լաւ յիշեցէք, որ երբեւէ չէք կրնար տկարանալ կեանքի մէջ այնքան ժամանակ ձեր կեանքը կ'առաջնորդէք աղօթքով առ Աստուած, հաւատքով դէպի հոգեւոր եւ բարոյական արժէքները, եւ կատարելութեան տեսիլքով:

Սիրելիներ, Հայ Դպրոցին առաքելութիւնը բոլորիս հաւաքական աշխատանքով պիտի իրականանայ: Լոս Անջելոսահայութեան կեանքին մէջ Հայ Դպրոցը եղած

Է ռդնասիւնը մեր կեանքին եւ ան պիտի շարունակէ լոյս մատակարարել գալիք սերունդներուն:

Սիրելի շրջանաւարտներ, մեր սրտի պատգամն է, որ դուք ըլլաք պատուաւոր եւ օրինապահ քաղաքացիները այս երկրին, հաւատարիմ զաւակները Մայր Հայաստանի եւ Սբ. Էջմիածնի, տէրը կանգնէք մեր սրբութիւններուն կեանքի մէջ բարձր դիրքերու վրայ գտնուիք, բայց երբեք կեանքի մէջ չկորսնցնէք հաւատքը Աստուծոյ հանդէպ: Բարի երթ ձեզի:

Մարտ 2018

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆ

«Տէր, բարօք է մեզ աստ լինել»

Ի՞նչ է որ տեղի կ'ունենայ: Քրիստոս, Աստուածորդին, ինչպէս յաճախ կ'ունենար աղօթքի առանձնակի պահեր, այս անգամ Իր հետ կը վերցնէ Իր աշակերտներէն երեքը՝ Յակոբոսը, Պետրոսը եւ Յովհաննէսը եւ կը բարձրանայ Թաբօր լեռ աղօթքի: Մինչ այդ կը թելադրէ անոնց մնալու արթուն: Աւետարանէն մեզի հաղորդուած պատմութենէն գիտենք, որ աշակերտները կը դժուարանան յարատեւել իրենց ճիգին մէջ մնալու արթուն եւ մինչ Քրիստոս կ'աղօթէր, անոնք կը ննջեն: Ահաւասիկ այդ ժամանակամիջոցին տեղի կ'ունենայ Քրիստոսի պայծառակերպութիւնը Թաբօր լեռան բարձունքին եւ աշակերտներէն Պետրոս սթափելով կը յայտարարէ. «Տէր, բարօք է մեզ աստ լինել»:

Քրիստոս, Իր Անձին օրինակը կու տար Իր աշակերտներուն պայծառակերպութեամբ: Այլապէս, ինչո՞ւ Իր հետ զիրենք եւս պիտի բարձրացնէր Թաբօր լեռ: Ինք աղօթեց եւ կամեցաւ որ աշակերտները կատարէին նոյնը: Այս է ամբողջ խորհուրդը պայծառակերպութեան: Աղօթքի հրաւերն է այդ իւրաքանչիւրիս: Որովհետեւ երբ աղօթքը մնայուն է մեր կեանքին մէջ, ապա լուսաւոր է մեր կեանքը: Կեանքը կը պայծառակերպուի, աղօթքի մէջ, որովհետեւ աղօթքը այն պահն է, երբ Աստուծոյ հետ ենք եւ ասելի յստակօրէն կը տեսնենք մեր ներքին էութիւնը:

Պայծառակերպության Տօնը իմ հոգեւոր կեանքի մէջ նշանակալից օր մըն է, որովհետեւ 1980 թուականի Յուլիսի 10-ին ես մատուցի իմ անդրանիկ պատարագը Մայր Տաճարի մէջ եւ այդ օր այս նոյն բնաբանով խօսեցայ իմ առաջին քարոզս: Եւ ամէն անգամ, երբ Քրիստոսի Պայծառակերպության Տօնն է, Քրիստոսի այս խօսքերը ուղղուած Իր առաքեալներուն կը հնչեն նաեւ իմ հոգեւոր էութեանը մէջ եւ ես իմ մէջ կը նորոգեմ կոչումը քահանայութեան, սէրը ծառայութեան:

Այս տարի ունեցայ իւրօրինակ փորձառութիւն մը: Դեռ մի քանի շաբաթներ առաջ Երուսաղէմ ուխտի այցելութեամբ մը գտնուելով պատեհ առիթը ունեցայ բարձրանալու Թափօր լեռը: Լեռան բարձունքին որոշապէս զգացի Մեծ Վարդապետի ներկայութիւնը, Որուն խօսքերը մշտավատ կանթեղին արձակած լոյսերու տակ կը պահեն ամբողջ աշխարհի ու մարդկային կեանքերը:

«Տէր, բարօք է մեզ աստ լինել»:

Այս մէկ խօսքին մէջ է խտացուած աղօթքը աշակերտներուն:

Մեր կեանքի ամբողջ ընթացքին Մեծ Վարդապետին հետ ըլլալով կ'ապրինք Թափօր լեռան փորձառութիւնը: Քրիստոս Ինք կը պատգամէ մնալու արթուն, եւ մենք մեր մարդկային տկար էութեան գերի դառնալով կեանքը կը տանենք մութ ճամբաներու մէջէն: Եւ երբ կ'արթնանք զգալով Տիրոջ լուսաւոր ներկայութիւնը, այն ժամանակ կը յայտարարենք, ըսելով. «Տէր, բարօք է մեզ աստ լինել»:

Պայծառակերպութիւն՝ մեր կեանքը աղօթքի մէջ մկրտելու խորհուրդը կը կրէ իր մէջ:

Պետրոս Առաքելալի խօսքը կը թելադրէ այն հիմնական մտածումը, որ ճշմարիտ Աստուածորդու հետ ապրուած կեանքն է աղօթքի կեանքը, Աւետարանի խորհուրդներով առաջնորդուած կեանքը:

Կանգնած ենք անցնող ժամանակներու առջեւ, երբ աղօթքով ակնաստես կը դառնանք վիճակներու, որոնք մեզ կ'արթնցնեն ընտրելու ճշմարիտը, աստուածայինը, յաւիտենականը: Մեր կեանքի իւրաքանչիւր օրը ինքնին Թափօր լերան փորձառութիւնն է: Քրիստոսի հետ կը սկսի օրը եւ յանկարծ կը մոլորինք մինչեւ որ Քրիստոսի պայծառակերպ ներկայութիւնը կը սթափեցնէ մեզ մեր թմբիրէն արթնցնելով, որպէսզի շարունակենք քայլել Քրիստոսի հետ եւ անդրադարձը ունենալու այն ճշմարտութեան, որ բարոյական ոյժը պիտի գտնենք մեր մէջ՝ տեսնելու ու հասկնալու, որ թանկագին է տրուած կեանքը, եւ այն պահելու համար պայման է մնալ մնայուն աղօթքի մէջ Աստուծոյ ներկայութեան:

14 Յուլիս, 2017

ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԹԵՄԻՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

Միրելի երիտասարդներ,

2018 թուականը մեր ազգի եւ Եկեղեցւոյ կեանքին մէջ հռչակուած է որպէս Երիտասարդութեան Տարի Վեհափառ Հայրապետի կողմէ:

Ինչպէ՞ս պիտի արժեւորենք 2018 թուականը որպէս Երիտասարդութեան Տարի: Մեր առաջին քայլը պիտի ըլլայ ուխտի երթալ Հայաստան, Սբ. Էջմիածին, այն սրբազան երկիրը, ուր մեր նախնիք ապրեցան՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց»: Մեր ուխտագնացութեամբ դէպի Սուրբ երկիր Հայաստան, Սբ. Էջմիածին պիտի դարձնենք մեր հոգեւոր էութեանը մէջ մշտաբերուն կրակը մեր քրիստոնէական հաւատքն եւ ազգային ոգին:

Ուրեմն, մեր կոչն է Թեմի ողջ երիտասարդութեան համախմբուիլ, կազմակերպուիլ, եւ 2018 թուականը դարձնել անկիւնադարձային եւ՝ մեր անձնական եւ՝ մեր հաւաքական կեանքին մէջ: Կարեւոր է, որ մեր կեանքի այս հանգրուանին զոհողութիւն մը կատարենք եւ մասնակցինք «Դէպի Հայաստան, դէպի Սբ. Էջմիածին» ուխտագնացութեան: Մարդուն կեանքը կ'իմաստաւորուի այսպիսի հոգեւոր շարժումներու մէջ: Մեր շուրջը գտնուող նիւթական բոլոր արժէքները ժամանցելի են եւ մնայունը հոգեւորն է, որուն արմատը Աստուած Ինք է:

Մեր քրիստոնէական ինքնութիւնը կը միացնէ բոլորս: Եւ մեր ուխտագնացութեամբ մենք մեր ինքնութեան

գիտակցութեան ծննդավայրը կը մեկնինք, որպէսզի նորոգենք մեր հաւատքը:

Ուրեմն, խօսեցէք ձեր ընկերներուն, քաջալերեցէք միմեանց, աշխատեցէք միասին, որպէսզի ձեր կեանքի այս հանգրուանը դարձնենք յիշատակութեան արժանի:

Այնպէս ընենք, որ Յուլիս 4-8-ի օրերուն միասին ըլլանք Սբ. Էջմիածնի մէջ եւ վերահաստատենք մեր ուխտը՝ ապրելու քրիստոնէական հաւատքով: Եւ այս շարժումը պիտի դառնայ հիմնաքարը նոր սերունդի հոգեւոր վերածնունդի եւ կռուանը՝ գալիք սերունդներուն, որպէսզի պահեն պահպանեն մեր քրիստոնէական եւ ազգային ինքնութիւնը, սիրեն Մայր Հայաստանն ու Սրբութիւն Սրբոց Էջմիածինը, ապրին հայ ընտանիքի սրբութեան տեսիլքով, ու ազատատենչ Արցախի ոգով:

27 Նոյեմբեր, 2017

ՄՐՏԱԳԻՆ ՈՂՋՈՅՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

Սրբազան այս Պատարագի ընթացքին ձեզի կը յղենք մեր սէրն ու ուրախութիւնը ձեր նուիրեալ ներկայութեանը համար:

Արդարեւ, դուք այն օրինեալ սերունդն էք, որ այսօր կը տօնախմբէք մեր երկրի Առաջին Հանրապետութեան եւ Սարդարապատի հերոսամարտի 100-ամեակը:

Այս շաբաթավերջը 100-ամեակի տօնախմբութեամբ աւելի հարուստ է:

Մեր կոչն ու պատգամն է ձեզի, որ մշտապէս ապրիք Հայ Եկեղեցիին նուիրուած կեանքով եւ Հայրենիքի սիրով:

Եւ ի մասնաւորի մեր պատգամն է, որ Հայրենիք այցելէք որ հոգեպէս զօրանաք եւ իմաստաւորէք ձեր կեանքը:

Այսօր, ի մասնաւորի կ'ողջունենք նաեւ ձեր սիրեցեալ Հայ եկեղեցասէր Երիտասարդութեան պատասխանատու ղեկավար՝ Արժ. Տ. Աւետիս Քահանան իր նուիրեալ ծառայութեանը համար եւ կը շնորհաւորենք իր Քահանայութեան Ձեռնադրութեան եւ օծման 10-րդ տարեդարձը: Թող Աստուած մշտապէս օրինէ մեր սիրելի Տէր Հայրը, որպէսզի իր բարի, եկեղեցանուէր եւ հայրենասէր ծառայութիւնը շարունակէ ընծայաբերելու մեր Ազգին, եւ ի մասնաւորի երիտասարդութեան:

9 Յունիս, 2018

ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԵՀԵՄ-Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ

Սիրելի երիտասարդներ,

Հազար փառք Աստուծոյ որ այս օրհնեալ առաքելութիւնը՝ ՀԵՀԵՄ-ը ծնունդ է առած մեր Սբ. Եկեղեցւոյ եւ ազգի կեանքին մէջ, օրհնութեամբը ու առաջնորդութեամբ Ազգիս Վեհափառ Հայրապետին եւ զօրակցութեամբը հոգեւորականաց դասուն եւ գործօն մասնակցութեամբը ձեր եւ ձեզի հասակակից երիտասարդներուն: Մեր խօսքին սկզբնաւորութեան պարտք կը զգանք անձնապէս եւ ձեր բոլորի անունով երախտիքի ու գնահատանքի զգացումներ տածել Գերաշնորհ Տ. Տաթև Եպիսկոպոս Յակոբեանին, որպէս պատասխանատուն Երոպիոյ ՀԵՀԵՄ-ին, որ ի գլուխ հանեց իր տեսակին մէջ առաջին այս Համագումարը, իր շուրջը ունենալով հոգեւորական ու աշխարհիկ ծառայողներ:

Մեր նպատակը չէ վերաքաղել եւ վերլիշեցնել բոլորին ՀԵՀԵՄ-ի առաքելութիւնը, այլ ուղղակի գլխաւոր նիւթին ներկայացումը դէպի Սբ. Էջմիածին-Հայաստան, հիմք ունենալով Վեհափառ Հայրապետի պատգամն ու յանձնարարականը այն մասին, որ 2018 տարին հռչակուած է Երիտասարդութեան Տարի:

Ամիսներ առաջ Եկեղեցական Ներկայացուցչական Ժողովին մենք ներկայացուցինք ամփոփ զեկուցագիր ՀԵՀԵՄ-ի անցեալ տարիներու իրականացուած աշխատանքի մասին եւ ապա ներկաներուն բաժնեցինք նաեւ 2018 թուականի Յուլիս ամսուան երիտասարդական

ուխտագնացութեան ծրագիրը: Այնուհետեւ, ինչպէս խոստացած էինք Ներկայացուցչական Ժողովին, անցնող շաբաթներուն Թեմակալ Առաջնորդներուն առաքեցինք նամակ 2018 թուականի երիտասարդական ուխտագնացութեան ծրագրի նախագիծը: Այս ընթացքին կ'ակնկալենք, որ Թեմակալ Առաջնորդներ եւ իրենց միջոցով պատկան երիտասարդական մարմիններ մեր ուշադրութեանը յղեն թելադրութիւններ, որպէսզի ի պահանջել հարկին կատարենք փոփոխութիւններ ընդհանուր ծրագրին մէջ: Հետեւաբար յաջորդող ամիսներուն կարելի է իր վերջնական եւ ամբողջական տեսքին մէջ բերել ծրագիրը: Իսկ թուականը կը մնայ անփոփոխ, որ հիմք ենք ունեցած ի նկատի ունենալով ընդհանուր մօտեցումներն ու անցեալ տարիներու փորձառութիւնը: Որով կ'ակնկալենք երիտասարդներու ժամանում Յուլիս 4-ին եւ աշխատանքային հանդիպումներն ու ուխտագնացութիւնը կը սկսին Յուլիս 5-ի առաւօտեան: Կիրակի, 8 Յուլիսին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մէջ կը կայանայ Սբ. Պատարագ եւ ապա երիտասարդները կը հիւրընկալուին Վեհափառ Հայրապետի կողմէ: Վերջինը կը դառնայ եզրափակիչ հանդիպումը:

Այստեղ մեր խօսքը ի մասնաւորի կ'ուղղենք երիտասարդ պատգամաւորներու: Մեր Սբ. Եկեղեցին այս օրերուն մանաւանդ պէտքը ունի ձեզ, որպէսզի դուք ձեր մէջ մշակելով Եկեղեցւոյ սրբազան առաքելութեան տեսիլքը դառնաք անմիջական գործակիցներ հոգեւոր դասուն, որպէսզի ապահոված ըլլանք վաղուան առաջնորդները, գործնականացնենք մեր Սբ. Եկեղեցւոյ առաքելութիւնը եւ զօրացնենք հիմքերը մեր Սբ. Եկեղեցւոյ:

Ի՞նչ կը սպասուի մեզմէ. պարզ եւ յստակ բառերով պիտի ուզէինք ըսել, այն, որ պարտ ենք ապրիլ քրիստոնէական մեր հաւատքը, սիրել մեր Սբ. Եկեղեցոյ պատմութիւնը իր բոլոր ծալքերով, եւ ի մասնաւորի Եկեղեցին դարձնելու հիմնաքարը մեր գոյութենականութեան: Արտաքին վտանգները ամէն օր կը ծանրանան մեր ուսերուն: Բայց հազար պատճառ ունինք մնալու զօրաւոր մեր հաւատքի մէջ, մեր կամքի արտայայտութեան մէջ, ստեղծագործելու կամեցողութեան մէջ, որովհետեւ այսօր Եկեղեցին ունի արժանաւոր հոգեւորականներ ու ձեզ նման եկեղեցասէր եւ եկեղեցանուէր երիտասարդներ: Դուք ձեր հաւատքի ուժով լեռները կրնաք շարժել:

Անցնող գրեթէ երկու տասնամեակներուն անթիւ անհամար ճանապարհորդութեանց որպէս արդիւնք մեր Սբ. Եկեղեցոյ գրեթէ բոլոր Թեմերուն մէջ կազմաւորուեցան ՀԵՀԵՄ-ի խումբեր, շնորհիւ մեր Թեմակալ Առաջնորդներուն, հոգեւոր դասուն եւ մեր շուրջը համախմբուած երիտասարդներու: Անշուշտ յաճախ հանդիպեցանք փորձութեանց եւ երբեմն աշխատանքի ընթացքը դանդաղեցաւ, երբ մեր քրիստոնէական սերը բացակայեցաւ մեր մէջ: Անտարակոյս մեր սուրբ նպատակը տկարութիւն չի ճանչնար եւ յաջորդաբար կազմակերպելով տարածաշրջաններու ժողովներու որպէս արդիւնք մենք առաւել պիտի կազմակերպուինք եւ Յուլիս 2018 թուականին Հայաստան եւ Սփիւռք ապրող մեր ՀԵՀԵՄ-ի անդամներն ու նուիրեալ երիտասարդներ քով-քովի պիտի բերենք, որպէսզի բոլորին մէջ առաւել ամրացնենք հաւատքի գիտակցութիւն, նուի-

րումի տեսիլքը հանդէպ մեր Մբ. Եկեղեցին եւ վերջապէս Հայց. Եկեղեցւոյ մէջ սկիզբը դնելու նոր հանգրուանի մը: Ահա այս է նպատակը 2018 թուականի երիտասարդական ուխտագնացութեան որոյ նշանաբանն է “Դէպի Էջմիածին, Դէպի Հայաստան”, որուն տեսիլքը ունեցաւ Վեհափառ Հայրապետը:

Հետաւաքար, Եւրոպայի տարածաշրջանի մէջ նախաձեռնած այս ուխտագնացութեան նպատակը պարզ է, որ այս քանի մը օրերը դառնան աղօթքի օրեր, աշխատանաց եւ կազմակերպչական օրեր, որոնք պիտի դառնան նաեւ հրաշալի առիթներ, որպէսզի ներքին միաբանութեամբ ապահովենք նաեւ Համաշխարհային Եկեղեցասէր Հայ Երիտասարդաց Միութեան աճն ու զարգացումը:

Մեր խնդրանքն է, որ դուք ծանօթանաք 2018 թուականի ուխտագնացութեան ծրագրին եւ ձեր կարծիքները փոխանցէք մեզի:

Մեր երախտագիտութիւնը մեր սիրելի Վեհափառ Հայրապետին իր հայրական օրհնութեան եւ պատգամին համար, ի մասնաւորի Գերաշնորհ եւ սիրելի Տաթև Սրբազանին, ձեր նախանձախնդիր նուիրումին համար, հոգեւոր դասի բոլոր ներկայացուցիչներուն եւ յատկապէս երիտասարդներուն:

Թող Ամենակարողն Աստուած օրհնէ բոլորս եւ զօրացնէ մեզ մեր կոչման մէջ:

ՀԵՀԵՄ-Ի ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Վեհափառ Հայրապետ, սիրեցեալ հոգեւոր եղբայրներ, նուիրեալ երիտասարդներ եւ բարեպաշտ հաւատացեալներ.

Աստուծոյ նախախնամութիւնն է, որ ՀԵՀԵՄ-ի Ուխտագնացութեան այս պատմական ու նուիրական օրը կը զուգադիպի Պայծառակերպութեան Տօնին: Աւելի քան տարի մը առաջ, 2018 թուականը Հայոց Հայրապետի կողմից հռչակուեցաւ Երիտասարդութեան Տարի եւ մեր Սուրբ Եկեղեցոյ Թեմական կառոյցներէն ներս առաւել կեդրոնացումի արժանի դարձաւ Հայ Եկեղեցասէր Երիտասարդութիւնը՝ զանազան նախաձեռնութիւններով, որոնցմէ գլխաւորագոյնը կը հանդիսանայ «Դէպի Հայաստան, դէպի Մբ. Էջմիածին» կարգախօսը կրող, անցնող օրերուն այստեղ մէկտեղուած Հայ Եկեղեցասէր Երիտասարդութեան Ուխտագնացութիւնը աշխարհասփիւռ մեր Թեմերէն:

Համախմբուած ենք նուիրական այս աղօթքի տան կամարներու ներքոյ՝ ընդ հովանեաւ Հայոց Հայրապետի, որպէսզի բոլորով վերստեղծենք մեր հոգիներուն մէջ Քրիստոսի կեանքէն քաղուած այն պատկերը, երբ Ինք, աշակերտներէն երեքը Իր հետ վերցնելով, բարձրացաւ Թաբօր լեռ աղօթքի եւ անդ տեղի ունեցաւ Քրիստոսի այլակերպութիւնը, որուն ահեղ յոյսին զօրութիւնը պայծառակերպեց նաեւ աշակերտները: Պետրոս առաքեալ Տիրոջ՝ Վարդապետին ուղղուած այս յայտարարութեամբ բարձրաձայնեց փափաքը իրենց էութեան մէջ բռնկող

հոգեւոր վերածնունդն ապրող միւս աշակերտներուն.
«Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել»:

Մեր Թաթօր լեռը Հայաստանն է, որովհետեւ այս սուրբ հողին վրաւ իջաւ Միածին Որդին: Ամէն անգամ, երբ ոտք կը դնենք Մայր Հայաստան, Մր. Էջմիածին, կը նորոգենք մեր կեանքն Աստուծոյ ընծայելու ուխտը, մեր հոգու մէջ կրելու պատկերը Մր. Էջմիածնի, հաւատքի տեսիլքը մեր նախնեաց գիտակցութեան, մեր ներկան իմաստաւորելու հոգեւոր ու բարոյական արժէքներով եւ գալիք սերունդներուն կեանքը լուսաւորելու համար եկեղեցանուէր ու ազգայնասէր գաղափարախօսութեամբ: Անոր համար է, որ կ'երկրորդենք առաքելին խօսքը՝ ըսելով. «Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել այսօր»:

Միրելի Եկեղեցասէր Երիտասարդներ, Յիսուսի ու Անոր աշակերտներուն Թաթօր լեռ բարձրանալը պատահականութիւն մը չէր: Վարդապետն Իր աշակերտներուն հոգեւոր կեանքը լուսաւորելու միտումով աղօթքի առանձնութեան պահ մը ապրեցաւ, որպէսզի նոյնին հրաւիրէ նաեւ աշակերտները: Այսօր հերթը մերն է, որպէսզի մեր հոգու հայեացքն ուղղած պահենք Քրիստոսի Անձին վրայ եւ հայրենական հողը, Մր. Էջմիածինը դարձնենք Թաթօր լեռը մեր կեանքին:

Երբ կ'աղօթենք, անտարակոյս, հրաշքի ակնկալիք մը ունինք: Քրիստոսի այլակերպութիւնը Հայր Աստուծմէ հրաշք մըն էր՝ ի պատասխան Աստուածորդու սրտաբուխ աղօթքին, որու մասնակիցն ու վկանները դարձան աշակերտները: Քրիստոնեան մշտապէս պէտք ունի պայծառակերպելու իր կեանքը: Պայծառակերպել՝ կը նշանակէ հրաշագարդէլ մեր կեանքը: Այս ուխտագնա-

ցութիւնը մեր երիտասարդութեան համար հրաշագործման պահն է: Այսօր, Հայ հաւատքի Թաքօր լեռան մեր միասնական աղօթքով, իրարմով զօրացած, կը նորոգենք մեր կեանքը, յանձն կ'առնենք մեր Թեմերն ու համայնքները վերադառնալ Էջմիածնի լոյսը կրելով մեր հոգիներուն մէջ՝ մեր Եկեղեցւոյ ներկայութեան մէջ դառնալով ուժ ու իմաստութիւն:

Սբ. Էջմիածինը՝ խորհուրդն է մեր ինքնութեան: Այս սրբանուէր անունն իր մէջ կ'ամփոփէ մեր ազգային լինելիութիւնը պայմանաւորող բոլոր հիմնական որոշիչները՝ մեր հաւատքն առ Աստուած, մեր սէրն առ հայրենի հողը, պատմութեան զգացողութիւնը, ներկային ոգին եւ տեսիլքը վաղուան:

Սիրելի՛ Երիտասարդներ, որպէս Քրիստոնէայ պարտինք ապրիլ հաւատքով առ Աստուած, Անոր անչափելիութեան առջեւ համակ խոնարհումով, որպէսզի Աստուծոյ ստեղծած տիեզերքի այս կատարեալ գեղեցկութեան մէջ ինքնանպատակ գոյութիւն մը չըլլանք, այլ՝ ստեղծագործ եւ բարեգործ արարչաստեղծ ուժ: Աւելին, որպէս հոգեւոր էակներ պարտինք մեր կեանքը լեցնել հոգեւոր ու բարոյական արժէքներով: Իսկ հոգեւոր եւ բարոյական արժէքներէն ամենանուիրականը հայրենի հողն է, մշակոյթն ու արուեստը, որոնցով կը կերտուի մեր նկարագիրը:

Կարեւոր է նաեւ գիտակցիլ, որ մենք որպէս ազգ եւ ժողովուրդ չենք կրնար գոյատեւել առանց մեր արմատներուն: Պատմութեան գիտակցումով է, որ կը փարինք մեր արմատներուն՝ անոր մէջէն առնելով մեր առօրեայ սնունդը, ներշնչումն ու զօրութիւնը: Վերջիվերջոյ, հայոց պատմութեան կերտողները մեր նախահայրերն են,

որոնց սրբազան աւանդներով կը շարունակենք ապրիլ եւ քարգաւաճիլ:

Այս գիտակցումով ու նորոգ ուխտով, այսօր եւէթ յանձն կ'առնենք մեր ուսերուն վերցնել առաքելական կեանքով ապրելու կոչումը, հայրենիքով ապրելու սերը, մեր ազգային արժէքներու յարգանքը: Աշխարհի որ ծայրն ալ ապրինք, այս նուիրական սկզբունքներն իմաստ ու նպատակ պիտի տան մեր կեանքին: Աստուած մեր ազգին շնորհած է մեզ բոլորս միաւորող գերագոյն Սրբութիւն՝ Սբ. Էջմիածինը ու այն պիտի դարձնենք պատկերը մեր հոգիին, եթէ կ'ուզենք հարազատ մնալ մեր ինքնութեան:

Սիրելի երիտասարդներ, մեր կոչումն է ծառայել Աստուծոյ, մեր Սբ. Եկեղեցիին եւ Հայրենիքին: Այս օրերուն այստեղ կը գտնուինք սիրով պատասխանելով Հայոց Հայրապետի կոչին, որպէսզի Հայրենիք, Սբ. Էջմիածին գալով նորոգենք մեր ուխտը հայաշունչ լինելիութեան: Հոգեւոր ու ազգային զարթօնքի ոգին պիտի ապրինք այս ուխտագնացութեամբ՝ մեր յարգանքն ու խոնարհումը բերելով գերագոյն մեր սրբութիւններուն՝ Հայրենիքին, Սբ. Էջմիածնին, հայրենի ժողովուրդին, անոր պետականութեան եւ Եկեղեցիին, հայոց մշտաբերուն բանակին: Ուխտի ենք եկած մեր հաւատարմութիւնն ընծայելու Ձեզի, Վեհափա՛ռ Տէր, բերելու բոլորիս սերն ու երախտագիտութիւնը, նաեւ՝ անկեղծ աղօթքը, որ Տէրը կենաց քաջառողջ եւ երկար տարիներ պարգեւէ Ձեզ:

Վեհափառ Տէր, անցնող հինգ օրերուն մեր երիտասարդներն ունեցան իրօք հոգենորոգ պահեր. միասին աղօթեցին, ունեցան զրոյցի պահեր, գօտեպնդուեցան

իրարմով, իրար պատմեցին իրենց Թեմական կեանքի փորձառութեանց մասին, Հայրենիքով ու Սբ. Էջմիածնի խորհուրդով լեցուեցան եւ յիրաւի պայծառակերպուած կը վերադառնան՝ իրենց հետ տանելով Ձերդ Վեհափառութեան հայրական սէրն ու օրհնութիւնը, բայց ամենէն աւելի՝ Հայրենիքով, Սբ. Էջմիածնով ապրելու խորհուրդը:

Վեհափառ Տէր, Հայ Եկեղեցասէր Երիտասարդութիւնը համախմբուած պիտի մնայ Ձեր շուրջ՝ միշտ պատրաստակամ ծառայութեան բարձր ու նախանձախնդիր գիտակցութեամբ:

1 Յուլիս, 2018

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՈՒԽՏԸ

Ուխտի եկած ենք Մայր Հայաստան, Ս. Էջմիածին: Եւ հիմա, ուխտագնացութեան մասնակիցներս, Ս. Էջմիածնի մշտանորոգ օրհնութեան ներքոյ եւ ներկայութեամբ Մայր Աթոռիս ազգընտիր գահակալին, հոգեւոր դասուն եւ համայն հաւատացելոց՝ կ'ուխտենք ըլլալ Աստուծոյ պատուիրաններուն հետեւող եւ մեր կենդանի հաւատքը բարի գործերով փաստող ճշմարիտ քրիստոնեաներ:

Ուխտի եկած ենք Մայր Հայաստան, Ս. Էջմիածին: Հաւատքի ճշմարիտ գիտակցութեամբ կ'ուխտենք հաւատարիմ մնալ մեր Ս. Եկեղեցոյ ուղղափառ դասնութեան, զօրավիգ ըլլալ հայոց պետականութեան հզօրացման, նախանձախնդիր՝ ազգային ինքնութեան եւ մեր նախնեաց կտակած մնայուն արժէքներուն:

Ուխտի եկած ենք Մայր Հայաստան, Ս. Էջմիածին՝ աղօթքով պայծառակերպուած, երիտասարդական աւիւնով առլեցուն, բարձր գիտակցութեամբ, միասնականութեան ոգիով՝ անգամ մը եւս հաւաստելու մեր անսահման սէրը դէպի սրբազան Երկիրն Հայրենի եւ Ս. Եկեղեցին:

Ուխտի եկած ենք Մայր Հայաստան, Ս. Էջմիածին: Մեր սէրն ու հաւատարմութիւնը կը յայտնենք Վեհափառ Հայրապետին եւ կը խոստանանք առաւել նուիրումով մեր նախանձախնդիր ծառայութիւնը բերել ի

խնդիր Եկեղեցւոյ եւ Հայրենիքի պայծառութեան եւ շինութեան:

Ուխտի եկած ենք Մայր Հայաստան, Ս. Էջմիածին: Ս. Էջմիածինը ծննդավայրն է մեր սրտի եւ հոգիի, հանդիպման վայրը՝ Աստուծոյ եւ մարդոց: Որպէս հարազատ զաւակներն այս Ս. Եկեղեցւոյ, կ'աղօթենք, որ Աստուած անսասան, ծաղկուն եւ բարգաւաճ պահէ սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ զօրացնելով մեզ հաւատքի, սիրոյ եւ եղբայրասիրութեան մէջ, որպէսզի դառնանք հայրենասիրութեան եւ նուիրումի անսպառ աղբիւր: Ամէն:

ՄԻ ՎԱԽՆԱՔ

«Եւ մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ որ կարողն է զոգի եւ զմարմին կորուսանել ի զեհենի» (Մատթ. 10:28):

Քրիստոսի այս խօսքը թող դառնայ առաջնորդող ոգին այս համախմբումին: Ի մի ենք հաւաքուած որպէս քրիստոնէական հաւաքին ջահակիրները, որպէսզի Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ զօրացած վերադառնանք մեր համայնքները այնտեղ քարոզելու համար Աստուծոյ խօսքը, այն դարձնելու համար լոյսը՝ դէպի ճշմարտութեան:

Տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ Քրիստոս. «Զվախնալ անոնցմէ, ովքեր մարմինը կը սպաննեն եւ անկարող են ոգին ընկճել եւ սպանել. բայց վախնալ անոնցմէ, ովքեր ոգին կը խեղդեն եւ կորստեան կը մատնեն»:

Դուք այն նուիրեալ տիկիներն էք մեր եկեղեցական ու ազգային կեանքին մէջ, որ քաջ հաւատքով ձեր էութեանը մէջ կը կրէք տեսիլքը մեր նախնեաց եւ այդ կը փոխանցէք ձեր զաւակաց եւ զալիք սերունդներուն: Ինչքան հոգեւորականները, այնքան եւ դուք պատասխանատւութիւն կը կրէք ձեր մէջ դառնալու նոր օրերու առաքեալները, որպէսզի ապրի Հայց. Եկեղեցին որպէս կրուանը մեր գոյութեան:

Հարիւր եւ երեք տարիներ առաջ մեր ազգի կեանքին մէջ տեղի ունեցաւ ցեղասպանութիւն եւ մեկուկէս միլիոն

նահատակներու յիշատակին առջեւ խոնարհումով պիտի շարունակենք մարմնատրել Յարութեան խորհուրդը մեր ապրող հաւատքով եւ որպէս l'eglise vivante.

Մեր կեանքը՝ պատկերը պիտի դարձնենք Աստուծոյ սիրոյն եւ իմաստութեան: Մեր աստուածատուր կեանքին նշանաբանը պիտի ըլլայ ստեղծել ու ստեղծագործել: Մեր կեանքի ամբողջ տեւողութիւնը վայրկեան առ վայրկեան պարտ ենք լեցնել եկեղեցաշինութեամբ ու ազգանուէր ծառայութեամբ:

Այս օրերուն ականատես դարձանք այն մեծ հրաշքին Մայր Հայրենիքին մէջ՝ որն ուրիշ բան չէ եթէ ոչ բարիին յաղթանակումը յանուն արդարութեան: Աշխարհի վրայ լուսաւոր էջ մըն է այդ եւ կոչը՝ արթնութեան համայն հայութեան համար:

Քիչ ժամանակ անց բոլորս պիտի վերադառնանք մեր համայնքները նոր խոստումով մը. պահելու եւ պահպանելու, առաւել զօրացնելու Հայց. Եկեղեցին, Հայ Դպրոցն ու ընտանիքը, մեր լեզուն, սրբազան աւանդութիւններով մեր երթը՝ շարունակելու նոր երազներով: Ձեր հոգիներուն մէջ արթուն պահեցէք Քրիստոսի պատգամը. «Եւ մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ որ կարողն է զոգի եւ զմարմին կոռուսանել ի գեհենի»:

3 Մայիս, 2018

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Աստուածամայրը Հայց. Առաքելական մեր Մայր Սբ. Եկեղեցւոյ կեանքին մէջ առաջին ու գլխաւոր սուրբն է, որուն հանդէպ հաւատացելոց խոնարհումը դարեր շարունակ արտայայտուած է՝ ի մասնաւորի անոր Անձին ձօնուած հրաշալի շարականներու միջոցով:

Ո՞վ էր Սբ. Կոյս Մարիամը Աստուածածինը, Աստուածամայրը, որուն կերպարը հիմք դարձաւ Մայրութեան բոլոր մայրերու համար: Ան խոնարհ իր Անձով Աստուծոյ կանչին պատասխանեց եւ հնազանդութեամբ դարձաւ Մայրը Աստուածորդու, խնամեց զինք եւ հետեւեցաւ Անոր մինչեւ Գողգոթա: Ուրեմն, երբ մեր աղօթքներուն շեշտը եւ սլաքը կը կեդրոնացնենք անոր Անձին վրայ, ապա իր էութեան մէջէն մեզի կը հաղորդուի խոնարհութեան դասը, եւ յատկապէս անոր կերպարը կը դառնայ հայելին բոլոր մայրերուն համար, որպէսզի կեանքը ապրին Աստուածամօր կեանքին օրինակով: Եւ այդպէս ալ կ'ապրիք ձեր կեանքը սիրելի մայրեր, խոնարհ ծառայութեամբ, անսահման զոհողութեամբ, եւ այն քաջ գիտակցութեամբ, որ ձեզի վստահուած զաւակը կամ զաւակները Աստուծոյ կանչն ու տուածն է:

Աշխարհի կեանքին մէջ, եթէ երբեք մարդիկ կորսնցրնեն խոնարհումի գիտակցութիւնը, կամ մայրեր իրենց համար որպէս առաջնորդող բարի մօր կերպարը չունենան, ապա մենք կ'ապրինք մեքենայացուած կեանքով, ռոպորի կեանքով, որուն որպէս հետեւանք կտրուած կ'ըլլանք Աստուծմէ:

Քրիստոնէական Եկեղեցին եւ Հայց. Եկեղեցին կը հաւատայ որ Աստուածամայրը իր կեանքի աւարտին Երկինք վերափոխուեցաւ: Բայց մենք պիտի ուզենք ըսել եւ հաստատել աւելին, որ Աստուածամայրը դարձաւ մնայուն խորհուրդը մեր սրտերուն ու հոգիներուն մէջ, որ մշտապէս կ'առաջնորդէ մեզ: Աստուածամօր Երկինք վերափոխումը, եթէ երբեք չկարողանանք վերածել մշտական այցի մը մեր էութեան մէջ, որպէսզի այլակերպէ մեր հոգեւոր էութիւնը, այն ժամանակ մեր աղօթքը կ'ըլլայ առանց խոստումի, աղօթք առանց գործնականացնելու անոր կեանքի ուղին մեր առօրեային մէջ:

Միրելի մայրեր, այսօր Աստուածամօր տօնն է եւ մենք բնականօրէն կը տօնախմբենք անոր յիշատակը: Այսօր կը տօնախմբենք նաեւ բոլոր մայրերու պատարագումը, որովհետեւ ինչպէս Աստուածամայրը պատանի Յիսուսը առաջնորդեց տաճար, այդպէս ալ կը սպասենք, որ մեր մայրերը իրենց զաւակները առաջնորդեն Եկեղեցի: Աստուածամօր յիշատակի տօնախմբութիւնը կը պարտաւորեցնէ նաեւ բոլորիս վրայ իր խոնարհ կեանքի օրինակը:

Միրելիներ, Աստուածամայրը ընտրուեցաւ խոնարհներուն մէջէն: Հոգեւոր կեանքով հարուստ էր ան, որուն համար իր մէջ գտաւ ոյժը քաջօրէն պատասխանելու Աստուծոյ կանչին: Ուրեմն, այս տօնը մեզ կը յուշէ նաեւ այն հիմնական պատգամը, որ մեր կեանքը լեցնենք անոր կեանքին օրինակով: Ժամանակները կը պահանջեն, որ հայ ընտանիքը առաւել խստապահանջ ու նախանձախնդիր իր զաւակներուն ջամբէ քրիստոնէական հաւատքը եւ անոնց ձեռքերուն մէջ դնէ կեանքի

Գիրքը – որը մեզի կ'ուսուցանէ Աստուծոյ խօսքը, որ-
պէսզի ապրինք Քրիստոսի նմանակցութեամբ:

Աստուածամօր տօնը կ'իմաստաւորուի, երբ մենք
զայն կը դարձնենք ներկայութիւն մեր հոգեւոր էութեան
մէջ:

Այսօր կ'օրհնենք նաեւ խաղողը որպէս խորհրդա-
նիշը հողէն մեզի հասած բոլոր բարիքներուն: Կ'աղօ-
թենք որ Տէրը վտանգներէ հեռու պահէ դաշտերն ու
այգիները: Խորհրդանշական իմաստով մեր հոգեւոր
կեանքին խաղողն է Աստուածամայրը, որուն հետ հա-
ղորդութեան մէջ մնացած կեանքը կը մնայ սուրբ եւ
մաքուր, հեռու փորձութիւններէ: Ուրեմն այնպէս ապ-
րինք մեր կեանքը, որպէսզի զայն դարձնենք նաեւ ըն-
ծայում Աստուծոյ Սբ. Խորանին, մարդկութեան առջեւ
խոնարհած ու պատարագեալ կեանք: Այնպէս ապրինք
մեր կեանքը, որ այն դարձնենք ընծայում մեր Սբ. Եկե-
ղեցոյ Խորանին, հայրենական հողին: Այսօրինակ կեանքը
կը դառնայ փառքն Աստուծոյ:

13 Օգոստոս, 2017

«ԵՍ ԵՄ, ՄԻ ՎԱԽՆԱՔ»

Յովհաննու Աւետարանի մէջ արձանագրուած է պատմութիւն մը, որուն մէջ մենք պէտք է տեսնենք մեր կեանքի պատկերը: Յիսուսի աշակերտները նաւակի մը մէջ ծովուն բացերուն կը գտնուէին երբ փոթորիկը ահ ու սարսափի կը մատնէ զիրենք: Ահա այդ պահուն կը նկատեն Քրիստոսի ներկայութիւնը որոշակի հեռաւորութեան մը վրայ: Եւ վարդապետը իրազէկ դառնալով անոնց երկիւղին կ'ըսէ՝ «Ես եմ, մի վախնաք»: Եւ այդ ժամուն արդէն նաւակը կը հասնի իր մեկնատեղին:

Նաւակը՝ կեանքն է, փոթորիկները կեանքի մէջ մեզի հասնող փորձութիւնները, իսկ աշակերտներ մենք ենք, եւ սարսափը մեր մէջ կը փարատէ երբ մենք մեր հայեացքը կ'ուղղենք Քրիստոսի Անձին վրայ: Չէ որ մենք Առաքեալի նամակի այս հատուածը ընթերցեցինք այս առաւօտեան եւ այն զօրացումը ունեցանք, որ բաւական է կեանքի կոչել առաքեալի կողմէ արձանագրուած պատգամները եւ մեր կեանքը կը լուսաւորենք, մեր խօսքը կ'արտայայտէ Աստուածաշունչի ոգին, ու կեանքի ընթացքը կը հետեւէ Քրիստոսի կեանքի ճանապարհին:

Տեսակէտով մը նոյն պատկերը կը կրկնուի ընտանիքի մը կեանքին մէջ, մինչեւ որ ծնողները փորձութեան պահին միշտ պատրաստ են ձեռք երկարելու իրենց զաւակաց, որպէսզի փարատէ անոնց մէջ սարսափն ու վախը:

Յովհաննու Աւետարանի օրուան դասը մեզի կը թելադրէ մեր հայեացքն ուղղելու Քրիստոսի Անձին

վրայ, որովհետև Մեծ Վարդապետին պատգամներով
առաջնորդուած՝ կեանքը լուսաւոր է եւ կը յաղթէ փոր-
ձութիւնները: Եւ ի զուր չէ, որ Աւետարանը մեր հայրերը
կոչած են կեանքի գիրքը: Մեր հաւատքը պիտի հաս-
տատենք Քրիստոսի վրայ եւ Անոր պատգամները պի-
տի դարձնենք սնունդը մեր հոգիին: Մեր թելադրութիւնը,
որ տուն վերադարձին յատուկ ուշադրութեամբ ընթեր-
ցէք Պօղոս Առաքեալի Հռոմայեցոց ուղղած նամակի
12-րդ գլուխը:

5 Փետրուար, 2017

ԽՈՆԱՐՀԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

«Որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝
պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝
պիտի բարձրանայ»:

Բազում անգամ լսած ենք Քրիստոսի այս պատգամը եւ կը վստահեցնենք ձեզի, որ ամէն անգամ երբ այն կը հասնի մեր մտքին ու սրտին, հոգեւոր արթնութեան պահ մը կ'ապրինք: Ինչո՞ւ համար Քրիստոս այս պատգամը յղեց մարդկանց: Օրումն Աւետարանին դասը, որ մեզի կը ներկայացնէ փարիսեցիին ու մաքսաւորին Տաճար մուտքը աղօթքի համար անկասկած կը բացատրէ պատգամին իմաստը: Քրիստոս մատնացոյց կ'ընէ մաքսաւորը, որ իր աղօթքի պահուն կը խոնարհի Աստուծոյ ներկայութեան եւ իր սրտի խորքէն կ'արտասանէ հետեւեալ խօսքը. «Աստուած իմ քաւեա զիս զմեղաւորս»: Մինչ փարիսեցին կը միտէր իր անձին պատիւ տալ մէկ առ մէկ յիշելով իր կատարածները, առանց յիշելու այն ճշմարտութիւնը, որ մարդը իր բնոյթով մեղաւոր է:

Քրիստոսի այս պատգամը մեր առօրեայ կեանքին մէջ չափազանց կարեւոր է, որովհետեւ եթէ երբեք մեր կեանքի օրինակը չպիտի հետեւի Քրիստոսի կեանքի օրինակին, ապա չի կրնար իր մեկնակետն ունենալ Աստուած: Քրիստոս՝ Աստուածորդին երկինքէն-երկիր խոնարհեցաւ, որպէսզի մարդը բարձրացնէր առ Աստուած: Այս ճշմարտութեան հետեւելով Հոգեւոյս Վազգէն

Ա. կատարած է հետեւեալ հաստատումը. «Ով Աստուծոյ առաջ չի խոնարհիր, այդպիսին կ'երկրպագէ նիւթին առաջ»:

Մեր առօրեայ կեանքի մէջ խոնարհութեան ուժականութիւն մ'ունի նաեւ ծառայութիւնը ու բոլոր անոնք, որոնք իրենց բարի ծառայութեամբ Աստուծոյ սէրը կը մատակարարեն մարդկանց, ահա այդպիսիք խոնարհ են սրտով, որովհետեւ իրենց կեանքով կրողն են Աստուծոյ ներկայութեան, Անոր սիրոյն ու իմաստութեան:

ԿՈՐՍՈՒԱԾԸ ՓՐԿԵԼ

«...Որովհետեւ Մարդու Որդին եկաւ
կորսուածը փրկելու համար»:

“Ի՞նչ կը կարծէք, եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ. չի՞ ձգեր իննսունինը ոչխարները լերան վրայ եւ չէ՞ ըթար փնտռելու կորսուած ոչխարը: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ աւելի կ’ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունինը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրը, որ երկինքի մէջ է, չ’ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի” (Մատթ. 18:10-14):

Քրիստոսի կողմէ արտասանուած այս առակը կը խօսի եւ կը պատգամէ մարդուն դէպի Աստուած վերադարձի մասին: Նոյն է պատկերը եւ ճշմարտութիւնը ընտանիքի կեանքին մէջ, երբ ծնողները ուրախութիւն կ’ապրին իրենց գաւակին վերադարձին:

Ինչքան դիպուկ է, որ Քրիստոսի այս առակը կը ներկայացուի մեզի Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան նախօրեակին, որուն ամբողջ նպատակն է ապահովել մարդուն վերադարձը դէպի Աստուած: Ուրեմն, այսօրուրնէ պատրաստուինք դիմաւորելու Մեծ Պահքի հոգեւոր ճանապարհորդութեան: Այդ ամբողջ ճանապարհորդութեան ընթացքին ունենանք Աստուածաշնչական ընթերցումներ, հոգեւոր սերտողութիւններ, աղօթքի մասնաւոր պահեր ու կանոնաւոր պահեցողութիւն: Ահա այն ժամանակ պիտի տեսնենք որ

մաքրուած է մեր հոգին եւ գտած ենք ճանապարհը դէ-
պի Աստուած: Այդ ճանապարհը մեզ պիտի առաջնորդէ
ի մասնաւորի դէպի Քրիստոսի հրաշալի Յարութիւնը:

15 Փետրուար, 2016

ՅԱՏՈՒԿ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ

Այսօր, սրբազան այս Պատարագի աւարտին պիտի կատարենք հոգեհանգստեան պաշտօն Հ.Բ.Ը.Մ. հիմնադիր անդամներու հոգիներուն համար: Մենք միաժամանակ փառք պիտի տանք Աստուծոյ, որ նոյն նուիրական հաստատութիւնը իբրեւ սրբազան առաքելութիւնը կը շարունակէ նուիրեալ ծառայասէր ու հայրենանուէր ազգայիններով, որոնք Հ.Բ.Ը.Մ. ընտանիքին մէջ կազմած են Ասպետներու խմբակցութիւնը եւ նախանձախնդիր ոգով կը կազմակերպեն բարձրորակ գիտական բնոյթի միջացառումներ, որոնք կը մշակեն միտքը հայ երիտասարդին հայրենական տեսիլքով, Եկեղեցւոյ պատկանելիութեամբ, պատմութեան եւ մշակոյթի զգացողութեամբ եւ բնականօրէն պատիւ բերելով մեր ազգին եւ Եկեղեցիին: Անցնող տարիներուն, մենք անձնապէս եւ լոսանջելոսահայութիւնը ակնատես դարձան եւ բարձր գնահատեցին Ասպետներու հայրենանուէր, ազգանուէր եւ եկեղեցանուէր ծառայութիւնները եւ ի մասնաւորի սերտ գործակցութիւնը Առաջնորդարանի հետ: Եւ ի գնահատումն Հ.Բ.Ը. Միութեան Ասպետներու լրջախոհ ծառայութեան մենք պիտի կատարենք իրենց ձօնուած խաչքարի մը օծումը, որպէս մնայուն յուշ մեր սիրոյ եւ գնահատութեան ի դիմաց Հ.Բ.Ը. Միութեան Ասպետներու ծառայութեան:

Աշխարհամատրան Կիրակին է այսօր եւ մենք կը տօնախմբենք ծնունդը աղօթքի առաջին տունին: Տօնախմբութիւնը կ'իմաստաւորուի աղօթքի նոր տուններու կառուցումով: Այս օրը կը նշանաւորուի մեր կեանքի

մեջ նաև նուիրաբերումովը Հ.Բ.Ը. Միութեան ծնունդովն ու բարի առաքելութեամբ, որովհետեւ փաստօրէն 1700-ամեայ Հայ Եկեղեցւոյ առաքելութեան մեջ, անցնող աւելի քան հարիւր տարիներու ընթացքին նոր աւիւն դարձաւ նուիրական այս հաստատութիւնը, իր եկեղեցաշէն գործունէութեամբ ընդ հովանեաւ Սբ. Էջմիածնի, հայրենանուէր ծառայութիւններով, դպրոցաշինութեամբ:

Թող Ամենակարողն Աստուած օրհնէ Հ.Բ.Ը.Մ-ը եւ այսօր ի մասնաւորի Ասպետներու ընկերակցութիւնը եւ ինչ յատկանշական է, որ այսօրուան Աւետարանի պատգամը մեզի կու գայ Յովհաննոս Աւետարանէն, որ տեղի կ'ունենայ նաև Քրիստոսի եւ հրեայ իշխանին միջեւ, որու ընթացքին Քրիստոս Իր խօսքն ուղղելով իշխանին կ'ըսէ. «Պարտ է քեզ ծնանիլ վերստին»: Ուրեմն, այսօրուան աղօթքը բոլորս կը հրաւիրէ վերստին ծնունդի, որպէսզի նորոգենք մեր հաւատքը, նորոգենք ծառայութեան ուխտը եւ մեր կեանքն ընծայաբերենք Աստուծոյ փառքին:

15 Ապրիլ, 2018

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԸ

«Ի խաչ հան գրա»:
(Խաչը բարձրացուր այն):

Երկու հազարամեակ մը առաջ արտասանուած հրեայ իշխանաւորներու, Դպիրներու եւ Փարիսեցիներու բարձրադպրակ խօսքն է սա ուղղուած Պիղատոսին, որուն առջեւ էր բերուած Յիսուս, որպէս դատապարտեալ, որովհետեւ յայտարարած էր ճշմարտութիւնը՝ իր Աստուածորդին ըլլալու հանգամանքը: Եւ որովհետեւ մինչեւ Քրիստոս խաչը՝ մահապատիժի ամենէն անարգալից միջոցն էր, ապա հրէից կողմէ պահանջ կը ներկայացուէր մահապարտը խաչը բարձրացնել: Բայց Քրիստոսի խաչելութեամբ խաչը կը զգենու նոր իմաստ եւ կը դառնայ խորհրդանշը կեանքի. նոր կեանքին, որովհետեւ խաչին վրայ կ'ամրագրուէր խորհուրդը Քրիստոսի Փրկագործութեան: Խաչին մէջ մենք կը տեսնենք Քրիստոսի ներկայութիւնը, իր բովանդակ կեանքը, Աստուծոյ էջքը մարդկանց կեանքին մէջ եւ միաժամանակ խաչին հետ հաշտուած մարդկութեան ձգտումը՝ դէպի Աստուած բարձրանալու:

Խաչվերացի Տօնը կապուած է պատմական իրողութեան մը վրայ: Այն կը ներկայացնէ Պարսից կողմէ գերեվարուած Քրիստոսի խաչափայտին վերադարձը դէպի իր ծննդավայրը Յունաց Հերակլ Կայսեր օրով 617 թուականին: Գերեվարութենէն վերադարձին խաչը քաղաքներով ու գիւղերով, թափօրներու առաջնորդութեամբ

վերամբարձ իր պտոյտը կը կատարէ: Քրիստոնէայ աշխարհի համար այս եղելութիւնը կը դառնայ խիստ նշանակալից եւ խոնարհումը խաչի խորհուրդին նկատմամբ առաւել կ'աճի:

Խաչը՝ կ'արտայայտէ սկիզբը նոր կեանքի: Քրիստոնէայ հաւատացեալը իր հոգեւոր կեանքի ծնունդը կ'ապրի խաչի խորհուրդին մէջ խորասուզուած եւ այնուհետեւ կ'ուխտէ քայլել խաչի ճանապարհէն, որ ուրիշ բան չէ եթէ ոչ Քրիստոսի ուղեգծած խաչի ճանապարհը՝ նոր կեանքի ճանապարհը: Խաչ կրել, խաչակնքել, խաչի առջեւ երկրպագել ու խոնարհիլ, այս բոլորը բարեպաշտական արտայայտութիւններ են, որոնք կ'արտայայտեն մեր Քրիստոնէական նկարագիրը:

Քրիստոնէայ ժողովուրդներ խաչի խորհուրդով առաջնորդուած իմաստ են տուած իրենց Աստուածատուր կեանքին եւ իրենց զոհաբերութիւններով փափաքած են ապրիլ Քրիստոսի նմանակից կեանքով: Մեր ժողովուրդի բովանդակ կեանքն ալ նոյնն է եղած «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» տեսիլքով խաչն ենք կրած, երբեւէ չենք ընկրկած մեր հաւատքին մէջ, քանզի խաչին ընդմէջէն տեսած են դուռը յաւիտենականութեան:

Սիրելի հաւատացեալներ, բոլորիս կեանքը խաչի ճանապարհն է: Դուք որպէս ծնողներ յանձնառու էք եղած սիրով ու կամաւորաբար ձեր ուսերուն կրել ամէն տեսակի զոհողութիւն, որպէսզի ձեր զաւակներուն կեանքը առաջնորդէք դէպի աղբիւրը լոյսին: Ուրեմն, մեր հաւատքի գիտակցական կեանքին աղբիւրը՝ Քրիստոս է, որուն խաչելութեան ուղղելով մեր հայեացքը ապա ըստ այնմ կը կողմնորոշենք ընթացքը մեր կեանքին:

Խաչվերացի Տօնին իմաստը կ'արժեւորուի իւրաքանչիւրիս կեանքին մէջ, երբ մեր օրը կը սկսինք խաչակնքելով, երբ մեր կեանքի նշանաբանը կը դարձնենք խաչը: Խաչին խորհուրդով ապրող ու ստեղծագործող անհատն ու ժողովուրդը կ'ապրի յարութեան կեանքով: Քրիստոս իր խաչելութեամբ ու խաչին վրայ մահուամբ մահը պարտութեան մատնեց եւ հոգիներուն մէջ անթերջում պատարագումի խորհուրդն ու զգացողութիւնը կեանքի կոչեց:

Մեր Սուրբ Եկեղեցւոյ տօները կը միտին մեր հոգեւոր կեանքն առաջնորդելու դէպի Աստուած: Խաչին խորհուրդը ապրելով մենք կը խեղդենք արտառոց ձայնը հրէից՝ ուղղուած Պիղատոսին «Ի խաչ հան գդա»: Մեր կեանքի գրաւականը պիտի ըլլայ ապրիլ խաչի խորհուրդով եւ մեր էութեան մէջ միշտ բարձր պահել խաչին տեսիլքը՝ գործնապէս եւ կեանքով: Խաչին խորհուրդով կը մկրտենք մեր զաւակները, խաչին խորհուրդը կը հաղորդուի մեր Սուրբ Պատարագներով, խաչին տեսիլքով կ'ամրացնենք Սուրբ Պսակները մեր զաւակաց, եւ խաչով կը կնքենք նաեւ մեր մեռելներուն գերեզմանները, այն գիտակցութեամբ՝ որ խաչը կը կապէ մեզ Աստուծոյ հետ: Ապրեցէ՛ք խաչին խորհուրդով, ձեր զաւակաց հաղորդէք խաչին վրայ պատարագեալ Աստուածորդու՝ Քրիստոսի կեանքին պատկերը, եւ այն ժամանակ մեր կեանքը պիտի հաստատուի ժայռին վրայ՝ անխախտ ու անսասան, որովհետեւ այն պիտի արտացոլէ նաեւ Քրիստոսի կեանքը եւ Աւետարանէն ճառագայթող կենսատու պատգամները:

ՀԱՐՍՏԱՆԱԼ ԱՍՏՈՒԾՄՈՎ

«Անմիտ, ... ով իր անձին համար գանձ կը դիզէ,
եւ Աստուծոմով չի հարստանար»:

Քրիստոսի այս խօսքը կը գտնենք Ղուկասու Աւետարանին մէջ մեզի աւանդուած առակի մը աւարտին: Առակը կը պատմէ մարդու մը մասին, որուն կեանքի ամբողջ նպատակն է ամբարել, կուտակել նիւթական հարստութիւն: Եւ նոյն մեծահարուստը կ'ունենայ նաեւ հետեւեալ խօսքը. «Արդ, հիմա որ ապահովուած եմ աւելիով, ուրեմն, կեր, արբ եւ ուրախ լեր»: Եւ Տիրոջ ձայնը կը հնչէ երկինքէն. «Անմիտ, որովհետեւ ով իր անձին համար կը դիզէ, Աստուծոմով չի հարստանար»:

Այս առակը մեզի կը ներկայացնէ աշխարհի կեանքի պատկերը, մեր պատկերը, այն մարդուն պատկերը, որ պարպուած է աղօթքի կեանքէն եւ իր կեանքի նպատակն է դարձուցած նիւթը: Նիւթը՝ մեր կեանքի մէջ միայն միջոց պէտք է ըլլայ բարի նպատակներու իրագործման եւ ամենէն կարեւորը միջոցը՝ իրականացնելու համար բարի նպատակը հասնելու Աստուծոյ:

Բոլորս ալ կեանքի մէջ շատ դիւրութեամբ կրնանք իյնալ ծուղակի մը մէջ, որ մեզ կրնայ առաջնորդել նիւթապաշտութեան: Ահաւասիկ այս իսկ պատճառով ալ եղբայրներ կռուի մէջ կը բռնուին, ընկերներ ու ընտանիքներ կը բաժնուին իրարմէ, ազգեր իրար դէմ դուրս կու գան եւ կը կորսնեցնենք ամենէն գեղեցիկը՝ մեզ միմեանց կապող Աստուծոյ ներկայութիւնը:

Ուրեմն, ո՞րն է այսօրուան աւետարանական պատգամը՝ Հարստանալ Աստուծով:

Գոհաբանական Տօնը հետեւաբար մեզ կը յիշեցնէ հոգեւոր պարգէններու մասին Աստուծոյ ներկայութեան մօտ, մեր ընտանիքներու սրբութեան մասին, մեր վայելքին տրուած բոլոր բարիքներու մասին:

23 Նոյեմբեր, 2016

ԿՐՕՆԻ ԴԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԷՋ

Ինքնությունը քաղաքակիրթ մարդուն համար անխուսափելի պահանջք մըն է իրեն իւրայատուկ պահանջներով: Նախ ընդհանրապէս մարդը իր կեանքը պէտք է մշակէ ու առաջնորդէ տարրական գիտելիքներով ու բարոյական սկզբունքներով: Բայց նոյն մարդը իր ինքնութեան մշակման ու պահպանումին համար չի կրնար թերագնահատել ու անտեսել կրօնքի դերը: Առանց ընդհանրություններու մէջ խորանալու բաւական է որ սերտենք մեր պատմությունը եւ այնտեղ յստակօրէն կը տեսնենք, որ անկարելի է խօսիլ հայ ինքնութեան մասին առանց քրիստոնէական կրօնքի դերակատարութեան, որուն գլխաւոր առաջնորդությունը ունեցած է Հայաստանեայց Եկեղեցին:

Հայ ինքնութեան կերտումին մէջ քրիստոնէական կրօնքին դերը չափազանց հիմնական ու յատկանշական: Բնական է, քրիստոնէութեան առաջին նպատակն է Աստուծոյ խօսքին տարածումը, բայց նոյն քրիստոնէութեան կրօնքը մեր ազգին է պարգեւած հայ ինքնութեան ամենէն որոշիչ յատկանիշները, որով եւ ապահոված ենք մեր ազգի գոյութենականությունը: Եթէ մշակոյթ էր անհրաժեշտ, եթէ հայրենական գիտակցութիւն էր պէտք եւ ազգի մը կազմաւորման բոլոր ստորոգելիները տուած է քրիստոնէական կրօնքը ի գլուխ ունենալով

Հայց. Առաքելական Եկեղեցին, որուն համար բարոյական իրաւունքը վերապահուած է իրեն կոչելու Մայր Եկեղեցին, Մայր դաստիարակը:

Հետեւաբար, կրօնքին դերը հայ ինքնութեան կազմաւորումին եւ պահպանման մէջ էական է, որովհետեւ այլապէս աննպատակ է մեր կեանքը: Եւ այս գիտակցութիւնը կը թելադրէ կամ կը հարկադրէ յարգանք այլ ազգերու կամ կրօնքներու նկատմամբ, որոնց կեանքին մէջ եւս կրօնքը ունեցած է նոյնպիսի դերակատարութիւն: Տարբերութիւնը մեր պարագային, սակայն, այն է, որ քրիստոնէական կրօնքի դերակատարութեամբ ձեւաւորուած է մեր ինքնութիւնը, որմէ հրաժարիլ հնարաւոր չէ:

Ուրեմն, կրօնքի ուսուցումը հայ դպրոցին մէջ պայման է: Որովհետեւ կարելի չէ ուսուցանել հայոց պատմութիւն առանց հայոց դարձին դէպի քրիստոնէութիւն, առանց Մեսրոպ Մաշտոցի տեսիլքին, առանց Վարդանանցի ու Սարգսրապատի: Այս կարեւոր հանգրուանները ինչպէս արիւնը մեր երակներուն մէջ, այնպէս ալ մեր պատմութեան արեան կանչն են անոնք:

12 Օգոստոս, 2017